Հավելված N 8
ՀՀ կառավարության 2024 թվականի
հոկտեմբերի 3-ի N 1583 - Ա որոշման

«Հավելված N 7.2
ՀՀ կառավարության 2023 թվականի
դեկտեմբերի 28-ի N 2346 - Ա որոշման

ԱՌԱՋԱՐԿԻ ՀԱՐՑՄԱՆ ՓՈՒԼԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետությունում կենսաչափական անձնագրերի և նույնականացման քարտերի տրամադրման ենթակառուցվածքի և ծառայությունների զարգացմանն ուղղված պետություն-մասնավոր գործընկերության ծրագրի

ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Հայտերի ներկայացման սույն հրավերը հաստատվել է Ծրագրի շրջանակներում Ընտրության ընթացակարգն (ինչպես հետո նկարագրվում է սույն փաստաթղթում) իրականացնելու նպատակով ստեղծված հատուկ գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ **«Գնահատող հանձնաժողով»**) կողմից: Սույն փաստաթուղթը նախատեսված է բացառապես պահանջներին համապատասխանող (որակավորված) հայտատուների կողմից ընտրության գործընթացում հայտերի պատրաստման և ներկայացման նպատակով օգտագործելու համար:

Հայտերի ներկայացման սույն հրավերը կազմվել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան (այսուհետ՝ **«Կիրառելի օրենք»**) և հիմնված է Կառավարությանը, ՀՀ ներքին գործերի նախարարությանը (այսուհետ՝ **«Իրավասու մարմին»**) և Կառավարության կողմից Ծրագրի նախապատրաստման գործում ներգրավված այլ իրավասու մարմիններին և կազմակերպություններին պատկանող տեղեկատվության և փաստաթղթերի վրա:

Հայտերի ներկայացման սույն հրավերը, ի թիվս այլոց, սահմանում է հայտերի համար ներկայացվող ֆորմալ և բովանդակային պահանջները, հայտերի ներկայացման և գնահատման կարգը, ինչպես նաև կիրառելի օրենքով պահանջվող՝ Ընտրության ընթացակարգի (գործընթացի) հաղթողին որոշելու կանոնները:

Հայտերի ներկայացման սույն հրավերը նպատակ չունի սահմանել ընտրության գործընթացին մասնակցելու համար հնարավոր պահանջվող տեղեկատվության և փաստաթղթերի սպառիչ ցանկը: Պահանջներին համապատասխանող հայտատուներին խորհուրդ է տրվում իրականացնել իրենց սեփական վերլուծությունը և փաստաթղթերի իրավական գնահատումը՝ հայտերի պատրաստման և ներկայացման կամ ընտրության գործընթացին նախապատրաստվելու և մասնակցելու հետ կապված ցանկացած որոշում կայացնելու նպատակով:

Ո՛չ Կառավարությունը, ո՛չ Գնահատող հանձնաժողովը, ո՛չ նրանց ներկայացուցիչները կամ խորհրդատուները, ո՛չ էլ Հայաստանի Հանրապետության որևէ այլ մարմին, նրանց ներկայացուցիչ կամ խորհրդատու.

1) որևէ անկախ գործընթաց չի իրականացրել սույն փաստաթղթում զետեղված որևէ տվյալի ստուգման համար, բացառությամբ ՊՄԳ ծրագրի նախագծի պատրաստման և Ծրագրի իրականացման վերաբերյալ որոշում կայացնելու համար անհրաժեշտ ընթացակարգերի, որոնց արդյունքները (որոնք Կառավարության կողմից սահմանվել են որպես Ընտրության ընթացակարգին համապատասխանող) ներկայացված են Հայտերի ներկայացման սույն հրավերի համապատասխան բաժիններում.

2) որևէ երաշխիք կամ հավաստիացում չի տվել Հայտերի ներկայացման սույն հրավերում զետեղված տեղեկատվության ճշտության և ամբողջականության վերաբերյալ.

3) որևէ պատասխանատվություն չի կրում որևէ հաղորդման, գործողության կամ տեղեկատվության համար, ինչպես բացահայտ, այնպես էլ ենթադրյալ, որոնք բխում են, պարունակվում են կամ հետևանք են որևէ բացթողնման, սխալի կամ տվյալների, որոնք չեն շտկվել Հայտերի ներկայացման սույն հրավերում դրա հրապարակումից հետո:

Հայտերի պատրաստման նպատակով ընտրված հայտատուներին տրամադրվող տեղեկատվության և փաստաթղթերի որոշակի մասը պահանջում է գաղտնիության պահպանում: Տվյալների փոխանակման և բացահայտման դրույթներն ու պայմանները կարգավորվում են գաղտնիության և չհրապարակման վերաբերյալ պարտավորությամբ (այսուհետ՝ **«Գաղտնիության պահպանման պարտավորություն»**), որը Որակավորման հայտերի ներկայացման հրավերի (RfQ) համաձայն կնքվում է յուրաքանչյուր որակավորված (ընտրված) հայտատուի հետ:

Հայտերի ներկայացման սույն հրավերը կարող է վկայակոչել կամ մեջբերել ՀՀ որոշ օրենքներ, նորմատիվ ակտեր կամ պաշտոնական փաստաթղթեր: Ցանկացած նմանատիպ հղում կամ մեջբերում ամբողջական կամ համապարփակ չէ: Որակավորված հայտատուները պարտավոր են Ընտրության ընթացակարգին մասնակցելու նպատակով ինքնուրույն ծանոթանալ և վերլուծել ՀՀ օրենքները, նորմատիվ ակտերը և պաշտոնական փաստաթղթերը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ....4

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ....5

3. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ....7

4. ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ....10

5. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ....15

6. ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՀԱՅՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏ ԿԱՆՉՈՒՄ....17

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ....22

8. ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ....27

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ....29

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ....32

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ....33

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԵՆԻ ՀԱՐՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ....34

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԱՅՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ....35

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ....51

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ....76

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀՈՒՍԱԼԻ ԲԱՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ....77

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ....78

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1.1 Իրավասու Ֆ իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր արդար և թափանցիկ մրցակցային ընտրության գործընթացի միջոցով հայաստանյան օրենսդրության և միջազգային լավագույն փորձի հիման վրա (այսուհետ՝ **«Ընտրության ընթացակարգ»**) Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև նույնականացման քարտերի տրամադրման հաստատությունների գործարկման ու սպասարկման վերաբերյալ (այսուհետ՝ **«Ծրագիր»**):

1.2 Ծրագրին վերաբերող հիմնական տեղեկատվությունն ու նյութերը կարելի է գտնել հետևյալ աղբյուրներում.

(ա) Ծրագրի առանցքային դրույթների (տարրերի) ընդհանուր նկարագիրը ներկայացված է Որակավորման հայտերի ներկայացման հրավերի (ՈՀՆՀ) Հավելված 3-ում (*Ծրագրի հիմնական դրույթներ*):

(բ) ՊՄԳ ծրագրի պայմանագրի (այսուհետ՝ **«Պայմանագիր»**) նախագծի հիմնական դրույթների նախնական ոչ պաշտոնական սխեման ներառված է Ծրագրի հիմնական պայմաններում, որը հասանելի է էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

(գ) ՊՄԳ ծրագրի նախագիծը (բացառությամբ տեխնիկատնտեսական հիմնավորման) հասանելի է էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում:

(դ) Պայմանագրի նախագիծը զետեղված է Հայտերի ներկայացման սույն հրավերի Հավելված 6-ում (*Պայմանագրի նախագիծ*):

1.3 Ծրագրի իրականացման վերաբերյալ Կառավարության 2023 թվականի դեկտեմբերի 28-ի թիվ 2346-Ա որոշման համաձայն՝ Ընտրության ընթացակարգը պետք է իրականացվի երկփուլ բաց գործընթացի տեսքով՝ Կիրառելի օրենքին համապատասխան:

1.4 Սույն փաստաթուղթը կարգավորում է Ընտրության ընթացակարգի Հայտերի ներկայացման հրավերի (ՀՆՀ) փուլի հանգամանքները, ներառյալ հայտերի ձևաչափի և բովանդակության նկատմամբ կիրառելի պահանջները, հայտերի ներկայացման և գնահատման կարգը, ինչպես նաև մրցութային գործընթացին վերաբերելի այլ տեղեկություններ:

1.5 Հայտերի ներկայացման սույն հրավերը (ՀՆՀ) նախատեսված է այն հայտատուների համար, որոնք Որակավորման հայտերի ներկայացման հրավերի համաձայն ՀՆՀ փուլում իրավունք են ստացել մասնակցելու մրցութային գործընթացին, ստորագրել են Գաղտնիության պահպանման պարտավորությունը և ներկայացրել այն Իրավասու մարմնին: Հայտ ներկայացնելիս յուրաքանչյուր որակավորված հայտատու համաձայնում է պահպանել Հայտերի ներկայացման սույն հրավերի պարտադիր պայմանները:

1.6 ՀՆՀ-ն պատրաստվել և հրապարակվել է Կիրառելի օրենքի համաձայն, ներառյալ «Պետություն-մասնավոր գործընկերության մասին» Հայաստանի Հանրապետության 2019 թվականի հունիսի 28-ի ՀՕ-113-Ն օրենքը (նոր խմբագրությամբ՝ **«ՊՄԳ օրենք»**), Կառավարության 2022 թվականի հուլիսի 28-ի թիվ 1183-Ն որոշմամբ հաստատված «Պետություն-մասնավոր գործընկերության ընթացակարգը ((նոր խմբագրությամբ՝ **«ՊՄԳ ընթացակարգ»**) և ՀՀ գործող այլ օրենքներին և կանոնակարգերին համապատասխան:

1.7 Սույն ՀՆՀ-ում , եթե համատեքստով այլ բան չի պահանջվում, մեծատառերով նշված տերմինները, արտահայտություններն ու հապավումները պետք է ունենան Հավելված 8 -ում (*Սահմանումներ և մեկնաբանություններ*) տրված իմաստը:

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑՈՒՑՈՒՄՆԵՐ ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՀԱՅՏԱՏՈՒՆԵՐԻ ՀԱՄԱՐ. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

2.1 Որակավորված հայտատուի կառուցվածքը

2.1.1 Որակավորված հայտատուն (հնարավոր թեկնածու) կարող է հայտ ներկայացնել կամ որպես մեկ իրավաբանական անձ, կամ որպես կոնսորցիում՝ կազմված մի քանի իրավաբանական անձանցից, որոնք համաձայնել են միասին մասնակցել Ընտրության ընթացակարգին (այսուհետ՝ «Կոնսորցիում»): Մեկ իրավաբանական անձով և Կոնսորցիումով ներկայացող հավանական թեկնածուները կարող են լինել ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ իրավաբանական անձինք: Տարընկալումներից խուսափելու համար Կոնսորցիումն իր բոլոր անդամների հետ միասին Ընտրության ընթացակարգում պետք է դիտարկվի որպես Հայտատու (ներառյալ՝ որպես Որակավորված հայտատու՝ ՀՆՀ-ի Ընտրության ընթացակարգի փուլում):

2.1.2 Կոնսորցիումը պետք է նշանակի և լիազորի իր անդամներից որևէ մեկին ներկայացնել և անչեղարկելիորեն պարտավորեցնել Կոնսորցիումի բոլոր անդամներին Ընտրության ընթացակարգի բոլոր հանգամանքների հետ կապված, ներառյալ, բայց չսահմանափակվելով Կոնսորցիումի անունից (այսուհետ՝ **«Առաջատար անդամ»**) հայտ ներկայացնելը: Առաջատար անդամը պետք է համապատասխանի ՀՆՀ-ի 2.1.3 կետով սահմանված պահանջներին:

2.2 Մասնակցության և ստուգման հիմնական պահանջները

2.2.1 Որակավորված հայտատուն Ընտրության ընթացակարգի ողջ ժամկետի ընթացքում և մինչև Պայմանագրի ստորագումը (եթե այդպիսի որակավորված հայտատուն հաղթող է ճանաչվել) պետք է համապատասխանի (և պետք է ապահովի Կոնսորցիումի մյուս անդամների համապատասխանությունը՝ հանգամանքներից կախված) ՀՆՀ-ի Հավելված 4-ում (*Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներ*) թվարկված՝ Հայտատուներին և Կոնսորցիումի այլ անդամներին ներկայացվող ընդհանուր պահանջներին և ՀՆՀ-ի Հավելված 5-ում (*Որակավորման չափանիշներ*) սահմանված Որակավորման չափանիշներին:

2.2.2 Որակավորման հայտերի ներկայացման ժամկետի (ինչպես սահմանված է ՀՆՀ-ում) ավարտից հետո Կոնսորցիումի կազմի փոփոխություն չի թույլատրվում: Սույն պահանջի խախտումը հիմք է հանդիսանում Հայտը մերժելու և Հայտատուին Ընտրության ընթացակարգին մասնակցելուց զրկելու համար:

2.2.3 Որևէ անձ (կամ իր հետ փոխկապացված Ընկերությունը) չի կարող լինել Կոնսորցիումի անդամ մեկ Կոնսորցիումում՝ միաժամանակ հանդիսանալով Կոնսորցիումի անդամ մեկ այլ Կոնսորցիումում: Ընտրության ընթացակարգին մասնակցող ցանկացած Հայտատու, որը կախում ունի Կոնսորցիումի որևէ անդամից, ով խախտում կամ խախտել է այս պայմանը, մերժվում է Ընտրության ընթացակարգին մասնակցելուց:

2.2.4 Որակավորված հայտատուի նկատմամբ վերահսկողության փոփոխությունը Ընտրության ընթացակարգի ցանկացած փուլում (մինչև Պայմանագրի ստորագրումը, եթե նման հայտատուն ճանաչվում է Ընտրության ընթացակարգի հաղթող), որը հանգեցնում է Որակավորված հայտատուի՝ ՀՆՀ-ի Հավելված 4-ով սահմանված պահանջներին (*Հայտատուներին ներկայացվող ընդհանուր պահանջներ*) և/կամ ՀՆՀ-ի Հավելված 5-ում (*Որակավորման չափանիշներ*) սահմանված Որակավորման չափանիշներին անհապատասխանությանը, պետք է արգելվի: Սույն պահանջի խախտումը հիմք է հանդիսանում Հայտը մերժելու և Հայտատուին Ընտրության ընթացակարգին մասնակցելուց զրկելու համար:

2.3 Լիազորված անձինք

2.3.1 Լիազորված անձինք այն անձինք են, ովքեր լիազորված են համապատասխան լիազորող փաստաթղթերով (տվյալ դեպքից կախված) ներկայացնելու Հայտատուին Ընտրության ընթացակարգի հետ կապված, ներառյալ (սույն ՀՆՀ-ի նպատակներից ելնելով) այնպիսի հարցերի վերաբերյալ, ինչպիսիք են Հայտի ստորագրումն ու ներկայացումը, ինչպես նաև Հայտին վերաբերող ամբողջ տեղեկատվության փոխանակումը:

2.4 Գնահատող հանձնաժողով

2.4.1 Ծրագրի իրականացման վերաբերյալ 2023 թվականի դեկտեմբերի 28-ի իր թիվ 2346-Ա որոշմամբ Կառավարությունը ձևավորել է Ընտրության ընթացակարգն իրականացնելու համար պատասխանատու հատուկ մարմին (**«Գնահատող հանձնաժողով»**) մասնավորապես (սույն ՀՆՀ-ի նպատակներով) Հայտերի բացման և գնահատման նպատակով:

2.4.2 Ընտրության ընթացակարգի շրջանակներում Գնահատող հանձնաժողովի կարգավիճակը, լիազորություններն ու գործողությունները (ներառյալ ՀՆՀ-ի փուլում) կարգավորող դրույթները սահմանված են ՊՄԳ-ի մասին օրենքում, ՊՄԳ ընթացակարգում և Կառավարության կողմից հաստատված Գնահատող հանձնաժողովի առանձին աշխատակարգում: ՈՀՆՀ-ն և ՀՆՀ-ն կարող են հետագայում վկայակոչել կամ պարզաբանել և լրացնել այդ դրույթներն այնքանով, որքանով դրանք անհրաժեշտ են Ընտրության ընթացակարգի իրականացման համար և Կիրառելի օրենքի համաձայն:

2.4.3 Գնահատող հանձնաժողովի անդամները չպետք է ուղղակիորեն կամ անուղղակիորեն ներգրավված լինեն որևէ Հայտի նախապատրաստմանը և/կամ ներկայացմանը, և այդ նպատակով որևէ աջակցություն չպետք է ցուցաբերեն որևէ Որակավորված հայտատուի:

2.4.4 Գնահատող հանձնաժողովի անդամները իրենց լիազորությունների շրջանակներում որոշումներ կայացնելիս պետք է լինեն անկախ և անկողմնակալ և չպետք է ունենան շահերի բախում որևէ Հայտատուի հետ:

2.5 Խորհրդատուներ

2.5.1 Գնահատող հանձնաժողովը կարող է հրավիրել արտաքին խորհրդատուների Ընտրության գործընթացում, ինչպես նաև բանակցությունների և Պայմանագրի ստորագրման ժամանակ իրենց իրավասության շրջանակներում համապատասխան հարցերի վերաբերյալ խորհրդատվություն և այլ աջակցություն տրամադրելու նպատակով (այսուհետ՝ **«Խորհրդատուներ»**):

2.5.2 Խորհրդատուները կարող են ներկա գտնվել Գնահատող հանձնաժողովի հանդիպումներին, նիստերին, մասնակցել քննարկումներին, տրամադրել բացատրություններ և խորհրդատվություն այդ հանդիպումների/նիստերի ընթացքում, ծանոթանալ Հայտատուների կողմից Գնահատող հանձնաժողով ներկայացված փաստաթղթերին, ուսումնասիրել Գնահատող հանձնաժողովի արձանագրությունները, ինչպես նաև բանակցությունների և Պայմանագրի ստորագրման ընթացքում դիտարկված փաստաթղթերը: Իրենց համապատասխան պարտականություններն ու գործառույթները կատարելիս

Խորհրդատուները պարտավոր են պահպանել գաղտնիության միևնույն պահանջների կատարումը, ինչ Գնահատող հանձնաժողովի անդամները:

2.5.3 Խորհրդատուները Գնահատող հանձնաժողովի անդամ չեն և չունեն Գնահատող հանձնաժողովի հանդիպումներում կամ նիստերում քննարկվող հարցերի, ինչպես նաև բանակցությունների և Պայմանագրի ստորագրման ընթացքում Իրավասու մարմնի ընդունած որոշումների քվեարկության իրավունք: Գնահատող հանձնաժողովի հանդիպումներին խորհրդատուների ներկայությունը կամ բացակայությունը չի ազդում այդ հանդիպումներում կամ նիստերում քվորումի վրա:

2.6 Լիազորված պաշտոնյաներ

2.6.1 Գնահատող հանձնաժողովի նախագահը և քարտուղարը նշանակվում են որպես Իրավասու մարմնի Լիազորված պաշտոնյաներ: Լիազորված պաշտոնյաների մասին տեղեկատվությունը ՀՆՀ-ի հաստատման օրվա դրությամբ ներկայացվում է Տեղեկատվական թերթիկում: Իրավասու մարմինը 6.1.1 կետով սահմանված կարգով ծանուցում է Որակավորված հայտատուներին Տեղեկատվական թերթիկում նշված Լիազորված պաշտոնյաների վերաբերյալ տվյալների փոփոխությունների մասին:

2.7 Հաղորդակցություն

2.7.1 Սույն ՀՆՀ-ով նախատեսված ողջ հաղորդակցությունը (ներառյալ Հայտերի ներկայացումը, Հայտերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվության տրամադրումը և Հայտերի պարզաբանումները) պետք է իրականացվեն Լիազորված անձանց և Լիազորված պաշտոնյաների կողմից, եթե այլ բան նախատեսված չէ ՀՆՀ-ում:

2.7.2 Եթե ՀՆՀ-ով այլ կարգավորում նախատեսված չէ, ապա սույն ՀՆՀ-ի շրջանակներում թղթային և էլեկտրոնային եղանակով ներկայացված և/կամ ստացված հաղորդագրությունները, տեղեկատվությունը և փաստաթղթերն ունեն հավասար իրավաբանական ուժ: Սրանք ներառում են, մասնավորապես, Հայտերը, Հայտերի հետ կապված լրացուցիչ տեղեկատվությունը և Գնահատող հանձնաժողովի հետ հաղորդակցությունը:

3. ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3.1. **Մրցութային փաստաթղթեր**

3.1.1. Կառավարությունըհաստատել է ՈՀՆՀ-ն, , ՀՆՀ-ն և Ընտրության ընթացակարգի իրականացման համար այլ փաստաթղթերը (այսուհետ միասին՝ **«Մրցութային փաստաթղթեր»**): Մրցութային փաստաթղթերը, որոնք նախատեսված են Որակավորված հայտատուների համար, բաղկացած են ՀՆՀ-ից և դրա բոլոր հավելվածներից:

3.1.2. Յուրաքանչյուր Որակավորված հայտատու պետք է ծանոթանա Մրցութային փաստաթղթերում պարունակվող բոլոր ցուցումներին, պայմաններին, ձևերին, տեխնիկական պահանջներին և այլ տեղեկություններին: Որակավորված հայտատուն կրում է Մրցութային փաստաթղթերի պահանջների չկատարման հետ կապված բոլոր ռիսկերը, ներառյալ Հայտի մերժումը:

3.2. **Ժամանակացույց**

3.2.1. Սույն ՀՆՀ-ի Հավելված 2-ում (*Ժամանակացույց*) ներկայացված է ժամանակացույցը՝ Ընտրության ընթացակարգի հիմնական փուլերով և դրանց մոտավոր ժամկետներով (այսուհետ՝ **«Ժամանակացույց»**): Որակավորված հայտատուները կարող են օգտագործել

ժամանակացույցը ընդհանուր առմամբ, սակայն Ընտրության ընթացակարգին իրենց մասնակցության հետ կապված ոչ մի կերպ չպետք է հիմնվեն Ժամանակացույցի վրա:

3.2.2. Գնահատող հանձնաժողովը կարող է, իր հայեցողությամբ և առանց Որակավորված հայտատուներին նախապես ծանուցելու, փոփոխել Ժամանակացույցը: Գնահատող հանձնաժողովը 6.1.1 կետով սահմանված կարգով ծանուցում է Հայտատուներին Ժամանակացույցի փոփոխությունների մասին: Իրավասու մարմինը չի կրում Ժամանակացույցի փոփոխություններից բխող որևէ պատասխանատվություն:

3.3. **Տեխնիկատնտեսական հիմնավորման տրամադրում**

3.3.1. Որակավորված հայտատուները կարող են մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտն էլեկտրոնային փոստով դիմել Գնահատող հանձնաժողովին՝ խնդրելով տրամադրել Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենը: Դիմումը ներկայացվում է Լիազորված անձի կողմից՝ Հավելված 3-ում տրված ձևի (*Տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենի պահանջի օրինակելի ձև*) համաձայն:

3.3.2. Որակավորված հայտատուի դիմումն ստանալուց հետո 1 (մեկ) Աշխատանքային օրվա ընթացքում Գնահատող հանձնաժողովը պահանջված ձևով (տպված կամ էլեկտրոնային) Որակավորված հայտատուին է տրամադրում տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենը:

3.3.3. Եթե տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենը տրվում է տպված տեսքով, ապա Լիազորված անձը պետք է ունենա անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները և Գնահատող հանձնաժողովի տարածք մուտք գործելու համար Լիազորող փաստաթղթերի պատճենները և անձամբ ստանա տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենը:

3.3.4. Տեղեկատվության փոխանակման գործընթացը պարզեցնելու համար Որակավորված հայտատուներին խորհուրդ է տրվում պահանջել Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման էլեկտրոնային օրինակը՝ համաձայն սույն 3.3 կետի:

3.4. **Որակավորված հայտատուների փաստաթղթերի իրավական գնահատում**

3.4.1. Յուրաքանչյուր Որակավորված հայտատու միանձնյա պատասխանատվություն է կրում ինքնուրույն ուսումնասիրության, փաստաթղթերի իրավական գնահատման և ցանկացած այլ աշխատանք կամ հետազոտություն կատարելու, ինչպես նաև Հայտերի պատրաստման, պայմանագրերի կնքման և հետագայում բոլոր ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ անկախ խորհրդատվություն ստանալու համար, որոնք Պայմանագրի համաձայն կտրամադրվեն Ծրագիրն իրականացնող ընկերության (Ծրագրի ընկերության) կողմից:

3.4.2. Իրավասու մարմինը, Գնահատող հանձնաժողովը կամ նրանց խորհրդականները, աշխատակիցները, խորհրդատուները կամ գործակալները չեն տրամադրում որևէ հավաստիացում կամ երաշխիք, բացահայտ կամ ենթադրյալ, և որևէ պատասխանատվություն չեն ստանձնում Մրցութային փաստաթղթերում զետեղված կամ Ընտրության ընթացակարգի ընթացքում տրամադրված ցանկացած տեղեկատվության ամբողջականության կամ ճշգրտության համար:

3.4.3. Իրավասու մարմինը, Գնահատող հանձնաժողովը կամ նրանց խորհրդականները, աշխատակիցները, խորհրդատուները կամ գործակալները պատասխանատվություն չեն կրում որևէ ֆիզիկական կամ իրավաբանական անձի առջև՝ Մրցութային փաստաթղթերում պարունակվող կամ Ընտրության ընթացակարգի ընթացքում տրամադրված որևէ տեղեկատվության օգտագործման արդյունքում:

3.5. **Այցելություններ օբյեկտներ**

3.5.1. Յուրաքանչյուր Որակավորված հայտատու կարող է էլեկտրոնային փոստով դիմել Գնահատող հանձնաժողովին օբյեկտ այցելության խնդրանքով՝ Ծրագրի տարածքին ծանոթանալու և Ծրագրի հետագա իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի իրավական գնահատում կատարելու նպատակով: Դիմումը պետք է ներկայացվի Լիազորված անձի կողմից մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը և պետք է.

(ա) ներառի Որակավորված հայտատուի և դիմումն ուղարկող Լիազորված անձի լրիվ անվանումը,

(բ) պարունակի օբյեկտ այցելելու պահանջվող ժամանակահատվածը (օրերի քանակը՝ նշելով սկիզբն ու ավարտը),

(գ) նշի օբյեկտ այցելելու պահանջվող ժամանակահատվածում Ծրագրի տարածքի հետ կապված ենթադրյալ իրավական գնահատման ընթացակարգերը (եթե կիրառելի է),

(դ) պարունակի օբյեկտ այցելության համար Լիազորված անձանց (մինչև 10 (տասը) անձ) ցուցակը,

(ե) պարունակի, ըստ վերոնշյալ (դ) կետում նշված ցուցակի, Լիազորված անձանց անձը հաստատող փաստաթղթերի պատճենները (էլեկտրոնային նամակին կցված առդիրներով):

Վերոնշյալ (ե) կետում նշված անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, որոնք կազմվել են օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով) պետք է թարգմանվեն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

3.5.2. Իրավասու մարմնի խորհրդակցությունների հիման վրա Գնահատող հանձնաժողովը սահմանում է օբյեկտներ այցելությունների ամսաթվերը այն հաջորդականությամբ, որով նման այցելությունների համար դիմումները ներկայացվել են Որակավորված հայտատուների կողմից, և հաշվի առնելով դիմումների քանակը, օբյեկտներ այցելությունների համար պահանջվող ժամկետները, ժամանակացույցները և մնացած ժամանակահատվածը մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը:

3.5.3. Գնահատող հանձնաժողովն էլեկտրոնային փոստով ծանուցումներ է ուղարկում Որակավորված հայտատուներին՝ ըստ օբյեկտ այցելության դիմումների ներկայացման հերթականության՝ նշելով այցելության ժամկետը (օրերի քանակը, նշելով սկիզբն ու ավարտը) և օբյեկտ այցելելու համար անհրաժեշտ այլ տեղեկություններ: Գնահատող հանձնաժողովի յուրաքանչյուր ծանուցում պետք է տրամադրվի նախատեսված այցելության ամսաթվից առնվազն 2 (երկու) աշխատանքային օր առաջ: Լիազորված անձը պետք է էլեկտրոնային փոստով հաստատի օբյեկտ նախատեսված այցի մասին ծանուցման ստացումը:

3.5.4. Որակավորված հայտատուները և/կամ նրանց Լիազորված անձինք պետք է իրենց հաշվին, ռիսկերը հաշվի առնելով և իրենց սեփական պատասխանատվությամբ մասնակցեն օբյեկտ ցանկացած այցելությանը:

3.5.5. Գնահատող հանձնաժողովն իրավունք է վերապահում մերժել այցելություն դիմումները, մասնավորապես 3.5.1 կետին չհամապատասխանող դիմումները, այն դիմումները, որոնք ներկայացվել են Հայտերի ներկայացման ժամկետի ավարտից հետո, կամ եթե Գնահատող հանձնաժողովը չի հասցնում պատասխանել նման դիմումներին և կազմակերպել օբյեկտ այցելությունները՝ Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտի պատճառով:

3.5.6. Օբյեկտ այցելության ընթացքում Որակավորված հայտատուն, ի թիվս այլոց, պետք է հետևի Ծրագրի տարածք այցելելու և Ծրագրի օբյեկտներում տեղաշարժվելուահաջներին: Որակավորված հայտատուի ներկայացուցիչների կողմից այս պահանջների չկատարումը կարող է հանգեցնել օբյեկտ նրանց այցի կասեցմանը:

3.5.7. Եթե Որակավորված հայտատուները և օբյեկտ այցելող այլ անձինք այցի ընթացքում ստանում են գաղտնի տեղեկատվություն (ինչպես նշված է Գաղտնիության պահպանման պարտավորության մեջ), ապա պետք է պահպանեն գաղտնիության և այդ տեղեկատվության չհրապարակման համապատասխան պահանջները: Որակավորված հայտատուն պատասխանատվություն է կրում գաղտնիության պահանջների և գաղտնի տեղեկատվության չհրապարակման համար, որը տրամադրվել է օբյեկտ այցելության հետ կապված նման տեղեկատվության բոլոր ստացողների կողմից (ինչպես սահմանված է Գաղտնիության պահպանման պարտավորությունում):

3.6. **Մրցույթին մասնակցության ծախսեր**

3.6.1. Որակավորված հայտատուն կրում է իր Հայտի պատրաստման և ներկայացման հետ կապված բոլոր ծախսերը, ներառյալ, բայց չսահմանափակվելով Հայտի վերաբերյալ հարցերի պատասխանների կամ պարզաբանման դիմումների պատրաստման, Հայտի փոփոխությունների, բանակցությունների և Պայմանագրի կնքման և Ծրագիրն իրականացնող ընկերության ստեղծման հետ կապված բոլոր ծախսերը: Ոչ մի դեպքում Իրավասու մարմինը, Գնահատող հանձնաժողովը կամ նրանց խորհրդատուներից որևէ մեկը պատասխանատվություն չեն կրում նման ծախսերի համար՝ անկախ Ընտրության ընթացակարգի իրականացումից կամ արդյունքներից:

3.6.2. Երբ Գնահատող հանձնաժողովը սույն ՀՆՀ-ի շրջանակներում չբացված Հայտերը Որակավորված հայտատուներին վերադարձնելու հետ կապված որևէ ծախս է կրում (մասնավորապես՝ փոստային/առաքման ծախսեր), ապա ցանկացած նման ծախս կարող է դրվել համապատասխան Որակավորված հայտատուի վրա:

3.6.3. Հայտի մերժումը, Որակավորված հայտատուի՝ Ընտրության ընթացակարգին մասնակցությունից կամավոր դուրս գալը, Ընտրության ընթացակարգն անվավեր (չկայացած) հայտարարելը, ինչպես նաև սույն ՀՆՀ-ի և Կիրառելի օրենքի համաձայն Ընտրության ընթացակարգի չեղարկումը հիմք չեն հանդիսանում Հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված ծախսերը փոխհատուցելու համար:

4. ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

4.1. **Հայտերի ձևաչափին և բովանդակությանը ներկայացվող ընդհանուր պահանջներ**

4.1.1. Սույն ՀՆՀ-ի համաձայն՝ յուրաքանչյուր Որակավորված հայտատու պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը (**«Հայտի»** հետ միասին).

(ա) **Տեխնիկական առաջարկ՝** ՀԱՎԵԼՎԱԾ 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1ին բաժնում սահմանված պահանջների համաձայն, և

(բ) **Ֆինանսական առաջարկ՝** ՀԱՎԵԼՎԱԾ 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 2-րդ բաժնում նախատեսված պահանջների համաձայն:

4.1.2. Որակավորված հայտատուները պետք է կազմեն և հետագայում ներկայացնել իրենց Հայտերը թղթային ձևաչափով՝ Գնահատող հանձնաժողովին առձեռն փոխանցելու միջոցով:

4.1.3. Հայտերը պետք է համապատասխանեն ձևի/կազմման հետևյալ ընդհանուր պահանջներին.

(ա) Որակավորված հայտատուն պետք է պատրաստի և ներկայացնի Տեխնիկական առաջարկի և Ֆինանսական առաջարկի մեկական (1) տպված բնօրինակ, մեկական (1) տպված պատճեն և երկուական (2) էլեկտրոնային օրինակ (առանձին USB կրիչների վրա)՝ հստակ նշագրելով դրանցից յուրաքանչյուրը որպես «ԲՆՕՐԻՆԱԿ», «ՊԱՏՃԵՆ» և «ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՕՐԻՆԱԿ»:

(բ) Հայտի գրավոր բնօրինակի և գրավոր օրինակի և/կամ էլեկտրոնային օրինակի միջև անհապատասխանության դեպքում առավելությունը տրվում է հայտի գրավոր օրինակին: Ցանկացած նման անհամապատասխանություն, այնուամենայնիվ, հիմք չի հանդիսանում հայտը մերժելու համար:

(գ) Հայտի գրավոր բնօրինակը և գրավոր օրինակ պետք է տպագրվի կամ գրվի (անհրաժեշտության դեպքում) չջնջվող թանաքով և ստորագրվի Լիազորված անձի կողմից:

Հայտի բոլոր էջերը ՀԱՎԵԼՎԱԾ 4-ում (*Հայտի բովանդակությունը*) սահմանված՝ բովանդակությանը ներկայացվող պահանջների համաձայն պետք է համարակալվեն, կարվեն և ստորագրվեն Լիազորված անձի կողմից:

(դ) Առձեռն հանձնելու համար պատրաստված Հայտի յուրաքանչյուր էլեկտրոնային օրինակը պետք է տրամադրվի առանձին USB կրիչով: Տեխնիկական և ֆինանսական առաջարկների էլեկտրոնային օրինակները պետք է համապատասխանեն իրենց բնօրինակ գրավոր տարբերակների բովանդակությանը, զերծ լինեն վիրուսներից կամ վնասակար ծրագրերից և պետք է պարունակեն չսեղմված կամ չպաշտպանված ֆայլեր՝ տպելի և վերարտադրելի PDF ձևաչափով:

(ե) Տարընկալումներից խուսափելու նկատառումներով՝ տեխնիկական և ֆինանսական առաջարկների յուրաքանչյուր օրինակի համար նախատեսված յուրաքանչյուր USB կրիչ պետք է պարունակի համապատասխանաբար (i) Տեխնիկական առաջարկի ամբողջական գրավոր բնօրինակի սկանավորված տարբերակը և (ii) Ֆինանսական առաջարկի ամբողջական գրավոր բնօրինակի սկանավորված տարբերակը՝ PDF ձևաչափով:

4.1.4. Յուրաքանչյուր Որակավորված հայտատու, ներառյալ Կոնսորցիումը, կարող է ներկայացնել միայն մեկ (1) Հայտ: Որակավորված հայտատուի կողմից մեկից ավելի հայտի ներկայացումը, ինչպես նաև այնպիսի հայտերի ներկայացումը, որոնցում միևնույն սուբյեկտը Կոնսորցիումի անդամ է տարբեր Կոնսորցիումներում (կամ միևնույն սուբյեկտը միանձնյա Որակավորված հայտատու է մի հայտում և Կոնսորցիումի անդամ մեկ այլ հայտում կամ հայտերում) հիմք կհանդիսանա սույն 4.1.4 կետի պահանջները խախտող բոլոր հայտերի մերժման համար:

4.1.5.

Ներկայացնելով Հայտը՝ Որակավորված հայտատուները գիտակցում են, որ.

(ա) ցանկացած տեղեկատվության կամ փաստաթղթերի տրամադրումը, որոնք Տեխնիկական առաջարկում պետք է ներկայացվեն որպես Ֆինանսական առաջարկի բաղկացուցիչ մաս (և հակառակը), հիմք է հանդիսանում հայտը մերժելու համար,

(բ) Հայտի շրջանակներում ցանկացած լրացուցիչ անհարկի տեղեկատվության կամ փաստաթղթերի (օրինակ՝ մարքեթինգային նյութերի) ներկայացումը կարող է հիմք

հանդիսանալ Հայտը մերժելու համար, եթե Գնահատող հանձնաժողովը գտնի, որ այդպիսի ներկայացումը էական շեղում է:

4.2. **Հայտերի կնքում և նշագրում. ներքին ծրարներ**

4.2.1. Որակավորված հայտատուն Հայտի բնօրինակներն ու պատճենները ներկայացնում է ներքին ծրարներով՝ պատրաստված հետևյալ կերպ.

(ա) կնքված ծրար՝ «ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ» նշագրումով, որը պետք է պարունակի սույն ՀՆՀ-ի 4.1.3 (ա) կետով պահանջվող Տեխնիկական առաջարկի չորս (4) օրինակ (այսուհետ՝ **«Տեխնիկական առաջարկի ծրար»**), և

(բ) «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ» նշագրումով կնքված ծրար, որը պետք է պարունակի սույն ՀՆՀ-ի 4.1.3 (ա) կետով պահանջվող Տեխնիկական առաջարկի չորս (4) օրինակ (այսուհետ՝ **«Ֆինանսական առաջարկի ծրար»**):

4.2.2. 4.2.1 կետում նշված յուրաքանչյուր ներքին ծրար պետք է ձևակերպվի ՊՄԳ ընթացակարգի 107-րդ և 108-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան: Յուրաքանչյուր ներքին ծրար պետք է ունենա նաև բավարար ազատ տարածություն՝ 7.2-ի համաձայն հայտերի և տեխնիկական առաջարկի ծրարներ պարունակող արտաքին փաթեթների բացման նիստի ժամանակ այդ ծրարի վրա գրանցման տվյալները նշելու համար (ՊՄԳ ընթացակարգի 110-րդ կետի համաձայն):

4.2.3. Եթե փաստաթղթերի ծավալը թույլ չի տալիս Տեխնիկական կամ Ֆինանսական առաջարկների բոլոր չորս (4) օրինակները տեղավորել համապատասխան մեկ (1) ներքին ծրարում, ապա Որակավորված հայտատուն համապատասխան փաստաթղթերի (Տեխնիկական առաջարկ կամ Ֆինանսական առաջարկ՝ կախված տվյալ դեպքից) գրավոր բնօրինակն ու պատճենները կարող է տեղադրել երկու տարբեր ներքին ծրարներում: Յուրաքանչյուր համապատասխան ներքին ծրարի վրա այս դեպքում պետք է հստակ նշվի «ԲՆՕՐԻՆԱԿ» և «ՊԱՏՃԵՆՆԵՐ»՝ համապատասխան փաստաթղթերի համար (Տեխնիկական առաջարկ կամ Ֆինանսական առաջարկ՝ կախված հանգամանքներից) և այլ կերպ ձևակերպվի 4.2.1 կետով սահմանված պահանջների համաձայն:

4.2.4. Եթե ներքին ծրարները չեն համապատասխանում սույն 4.2 կետում նշված պահանջներին, ապա Գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում Հայտի որևէ մասի սխալ տեղադրման կամ կորստի, ինչպես նաև դրանում պարունակվող սահմանափակ օգտագործման համար որևէ տեղեկատվության պաշտպանության համար:

4.3. **Հայտերի կնքում և նշագրում. արտաքին փաթեթներ**

4.3.1. Որակավորված հայտատուն 4.2 կետի համաձայն պատրաստված Հայտի ներքին ծրարը տեղադրում է անթափանց արտաքին ծրարի կամ փոստային արկղի մեջ (վերջինի դեպքում, եթե Հայտի ներքին ծրարների ծավալը թույլ չի տալիս դրանք տեղադրել մեկ (1) արտաքին ծրարում):

4.3.2. Արտաքին ծրարը կամ փոստային արկղը պատրաստվում են ՊՄԳ ընթացակարգի 107 և 108-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխան: Արտաքին ծրարի կամ փոստային արկղի վրա պետք է լինի հստակ նշում «ՀԱՅՏԻ ԱՐՏԱՔԻՆ ԾՐԱՐ/ ՓՈՍՏԱՅԻՆ ԱՐԿՂ» և ունենա բավարար ազատ տարածություն դրա վրա գրանցման տվյալները նշելու համար (ՊՄԳ ընթացակարգի 110-րդ կետի համաձայն):

4.3.3. Եթե արտաքին ծրարը կամ փոստային արկղը չեն համապատասխանում սույն 4.3 կետում նշված պահանջներին, ապա Գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն չի կրում

Հայտի որևէ մասի սխալ տեղադրման կամ կորստի, ինչպես նաև դրանում պարունակվող սահմանափակ օգտագործման համար որևէ տեղեկատվության պաշտպանության համար:

4.4. **Հայտերի և նամակագրության լեզուն**

4.4.1. Եթե Հավելված 4-ում (*Հայտի բովանդակությունը*) այլ կարգավորում նախատեսված չէ, ապա Հայտի և նամակագրության լեզվի նկատմամբ կիրառվում են հետևյալ կանոնները.

(ա) Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) համաձայն՝ Հայտի մաս կազմող բոլոր ձևաթղթերը և փաստաթղթերը պետք է պատրաստվեն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

(բ) Եթե Հայտի շրջանակներում ներկայացված փաստաթղթերն ի սկզբանե կազմվել (ձևակերպվել են) օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով), ապա այդպիսի փաստաթղթերը պետք է ներկայացվեն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով թարգմանության հետ միասին՝ Հավելված 4 -ում (*Հայտի բովանդակությունը*) սահմանված պահանջներին համապատասխան:

(գ) Հայտի հետ կապված ողջ նամակագրությունը վարվում է Պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

4.4.2. Պաշտոնական լեզուներից որևէ մեկով և օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով) կազմված 4.4.1 կետի (ա)-(գ) ենթակետերում նշված փաստաթղթերի կամ նամակագրության տարբեր տարբերակների միջև որևէ անհամապատասխանության դեպքում գերակայում է համապատասխան փաստաթղթի կամ նամակագրության Պաշտոնական լեզուներից որևէ մեկով կազմված տարբերակը:

4.5. **Գաղտնի տեղեկատվություն**

4.5.1. Որակավորված հայտատուն իրավունք ունի Հայտի որոշ մասեր սահմանել որպես գաղտնի տեղեկատվություն պարունակող: Սա պետք է ապահովվի նման տեղեկատվություն պարունակող Հայտի յուրաքանչյուր էջի վրա տեղադրելով «ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ» արտահայտությունը: Որակավորված հայտատուն պետք է նաև Հայտի յուրաքանչյուր էջի վրա կամայական ձևով ընդգծի գաղտնի համարվող տեղեկատվության կոնկրետ հատվածները: Սույն կետը չի արգելում Գնահատող հանձնաժողովին Հայտը ներկայացնել խորհրդատուներին:

4.5.2. Գնահատող հանձնաժողովը, իրավասու մարմինը և խորհրդատուները պետք է պատշաճ կերպով պահպանեն հայտում որպես գաղտնի նշված տեղեկատվությունը՝ համաձայն 4.5.1 կետի և պարտավորվում են պահպանել այդ տեղեկատվության գաղտնիության պարտականություններն , որոնք, ըստ էության, նույնն են, ինչ Որակավորված հայտատուի նկատմամբ Գաղտնիության պարտավորությամբ սահմանված դրույթները (մասնավորապես՝ գաղտնի տեղեկատվությունը երրորդ անձանց չհրապարակել և համապատասխան միջոցներ ձեռնարկել դրա պաշտպանության համար):

4.5.3. Տվյալների՝ որպես գաղտնի տեղեկատվություն սահմանումը չի տարածվում Կիրառելի օրենքի շրջանակներում գաղտնի տեղեկատվություն չհամարվող տեղեկատվության վրա:

4.6. **Հայտի վավերականության ժամկետը**

4.6.1. Կիրառելի օրենքի համաձայն՝ Հայտը ուժի մեջ է մնում դրա ներկայացման օրվանից մինչև Պայմանագրի կնքումը, Հայտը հետ կանչելը, Հայտի մերժումը կամ Ընտրության ընթացակարգն անվավեր ճանաչելը (այսուհետ՝ «**Հայտի վավերականության ժամկետ**»):

4.7. **Հայտի ապահովում**

4.7.1. Որակավորված հայտատուի կողմից Հայտին և Մրցութային փաստաթղթերին ներկայացվող պահանջների պահպանումն ապահովվում է բանկային երաշխիքով, որը պետք է համապատասխանի ՀԱՎԵԼՎԱԾ 4-ի (*Հայտի բովանդակությունը*) Բաժին 1-ի (3) կետի պահանջներին (այսուհետ՝ **«Հայտի ապահովում»**): Սույն ՀՆՀ-ով սահմանված Հայտի ապահովման պահանջները չպահպանելը (մասնավորապես՝ Հայտի շրջանակներում Հայտի ապահովում չներկայացնելը կամ պահանջներին չհամապատասխանող Հայտի ապահովում չներկայացնելը) հիմք է հանդիսանում Հայտը մերժելու համար:

4.7.2. Հայտի ապահովումն ուժի մեջ է մնում Հայտի ապահովումն առաջին անգամ Գնահատող հանձնաժողով ներկայացնելու օրը սկսվող և ստորև նշվածներից որևէ մեկից ուշ ավարտվող ժամանակահատվածում (այսուհետ՝ **«Հայտի ապահովման վավերականության ժամկետ»**).

(ա) Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո (9) ամիս,

(բ) Գործառնության ապահովումը, ինչպես պահանջվում է 8.5 կետով:

4.7.3. Յուրաքանչյուր Որակավորված հայտատու շարունակական պարտավորություն է կրում՝ իր Հայտի ապահովումը Հայտի ապահովման վավերականության ժամկետում պահպանելու : Հաղթողի հայտի ապահովումը ուժի մեջ է մնում մինչև Գործառնության ապահովումն Իրավասու մարմնին ներկայացնելը, ինչպես պահանջվում է 8.5 կետով: Հաղթողի հայտի ապահովումը վերադարձվում է Գործառնության ապահովումը Պայմանագրի պայմաններին համապատասխան ներկայացնելուց հետո:

4.7.4. Ընտրության ընթացակարգի հաղթող չճանաչված Որակավորված հայտատուների Հայտերի ապահովումները վերադարձվում են Ընտրության ընթացակարգի (բացառությամբ Երկրորդ Տեղը Զբաղեցրած հայտատուի, որի Հայտի ապահովումը ապահովումը կպահպանվի մինչև Հաղթողի հետ պայմանագրի կնքումը) արդյունքների հրապարակման հաջորդ աշխատանքային օրը՝ համաձայն 7.5.3 կետի:

4.7.5. Որակավորված հայտատուի հայտի ապահովումն իրագործում է ՊՄԳ օրենքի 14.11-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում:

4.7.6. Եթե Իրավասու մարմինը սույն ՀՆՀ-ի համաձայն պահանջում է Հայտի ապահովման իրագործում, Հայտի ապահովման համապատասխան գումարը բանկային երաշխիք տրամադրած բանկի կողմից փոխանցվում է Իրավասու մարմնի կողմից նշված հաշվին:

4.8. **Հայտերի ճշգրտության և ամբողջականության պատասխանատվությունը**

4.8.1. Որակավորված հայտատուն պատասխանատու է Հայտում ճշգրիտ և ամբողջական տեղեկատվության տրամադրման համար: Հայտը ներկայացնելով՝ Որակավորված հայտատուն նաև ընդունում է, որ.

(ա) Հայտում զետեղված ողջ տեղեկատվությունը շարունակում է մնալ ճիշտ և ճշգրիտ Ընտրության ընթացակարգի ողջ ընթացքում՝ մինչև Պայմանագրի կնքումը (Որակավորված հայտատուի՝ հաղթող ճանաչվելու դեպքում),

(բ) Ընտրության ընթացակարգի ցանկացած փուլում Գնահատող հանձնաժողովը կարող է որակազրկել Հայտատուին, և Իրավասու մարմինը կարող է հրաժարվել Պայմանագրի ստորագրումից, եթե պարզվի, որ Հայտատուն իր հայտում կամայականորեն ներկայացրել է սխալ կամ կեղծ տեղեկատվություն,

(գ) Գնահատող հանձնաժողովը և Իրավասու մարմինը պատասխանատվություն չեն կրում Հայտում պարունակվող տեղեկատվության ճշգրտության և ամբողջականության համար:

5. ՀԱՅՏԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԵՎ ԳՐԱՆՑՈՒՄԸ

5.1. **Հայտերի ներկայացման վերջնաժամկետ**

5.1.1. Որակավորված հայտատուները Հայտերը պետք է Գնահատող հանձնաժողով ներկայացնեն էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում ՀԵՀ-ի հրապարակման օրվանից իննսուն (90) օրվա ընթացքում (այսուհետ՝ **«Հայտերի ներկայացման վերջնաժամկետ»**): Հայտերն ամեն դեպքում պետք է ներկայացվեն Հայտերի ներկայացման վերջնաժամկետի վերջին օրվա ժամը 18:00-ից ոչ ուշ: Հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո ներկայացված ցանկացած հայտ չի դիտարկվի:

5.2. **Հայտերի ներկայացման կազմակերպում**

5.2.1. Լիազորված անձը նախնական դիմում է ուղարկում Գնահատող հանձնաժողովի քարտուղարին Հայտի ներկայացումը կազմակերպելու համար: Լիազորված անձը կարող է այս դիմումը ներկայացնել.

(ա) առձեռն՝ Տեղեկատվական թերթիկում նշված՝ Գնահատող հանձնաժողովի հասցեով և աշխատանքային ժամանակացույցի համաձայն, կամ

(բ) էլեկտրոնային փոստով՝ Տեղեկատվական թերթիկում նշված՝ Գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին:

5.2.2. Հայտի ներկայացման դիմումում պետք է.

(ա) նշվի Որակավորված հայտատուի լրիվ անվանումը,

(բ) նշվի Հայտը ներկայացնող Լիազորված անձի լրիվ անվանումը,

(գ) նշվի Հայտի ներկայացման վերջնաժամկետում Հայտը ներկայացնելու պահանջվող ամսաթիվը և ժամը և Տեղեկատվական թերթիկում նշված՝ Գնահատող հանձնաժողովի աշխատանքային ժամանակացույցի համաձայն,

(դ) նշված դիմումին կից պետք է ներկայացվեն անձը հաստատող փաստաթղթերի և Լիազորված անձի Լիազորող փաստաթղթերի պատճենները (տպված պատճենները, եթե դիմումը Գնահատող հանձնաժողովի հասցեով ներկայացվում է առձեռն, էլեկտրոնային նամակին կցված սկանավորված պատճենները՝ եթե դիմումը ներկայացվում է էլեկտրոնային փոստով):

Եթե դիմումը Գնահատող հանձնաժողովի հասցեով ներկայացվում է առձեռն, պա Լիազորված անձը պետք է ունենա անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները և Լիազորող փաստաթղթերի պատճենները՝ Գնահատող հանձնաժողովի շենք մուտք գործելու համար:

Վերոնշյալ (դ) կետում նշված անձը հաստատող փաստաթղթերի պատճենները, որոնք կազմվել են օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով), պետք է թարգմանվեն և վավերացվեն Հավելված 4-ում (*Հայտի բովանդակությունը*) սահմանված պահանջներին համաձայն:

5.2.3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը պարտավոր է ոչ ուշ, քան Որակավորված հայտատուի՝ Հայտը ներկայացնելու դիմումի օրվան հաջորդող աշխատանքային օրը, էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրել այդ դիմումի պատասխանը: Պատասխանում նշվում են Հայտի ներկայացման ամսաթիվը և ժամանակը (որո, ի սկզբանե, պետք է լինի ոչ ուշ, քան Որակավորված հայտատուի կողմից 5.2.2 կետի համաձայն պահանջվող ամսաթվից հետո երրորդ աշխատանքային օրը, բայց ամեն դեպքում ոչ ուշ, քան Հայտի ներկայացման վերջնաժամկետը), ինչպես նաև այլ տեղեկություններ, որոնք կարող են էական լինել Հայտի ներկայացման համար: Լիազորված անձը էլեկտրոնային նամակով հաստատում է Գնահատող հանձնաժողովի քարտուղարի պատասխանի ստացումը՝ նշելով Հայտի ներկայացման նախատեսված ամսաթիվը և ժամը:

5.2.4. Որակավորված հայտատուներին խորհուրդ է տրվում ժամանակին տրամադրել իրենց Հայտերը մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը: Որակավորված հայտատուները կրում են բոլոր ռիսկերը, որոնք կապված են իրենց Հայտերի ներկայացման ժամկետների ոչ պատշաճ պլանավորման հետ, մասնավորապես այն դեպքերում, երբ ներկայացումը պլանավորված է Հայտերի ներկայացման վերջնաժամկետից անմիջապես առաջ, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել բոլոր միջոցառումները, որոնք պահանջվում են Հայտերի ներկայացման համար՝ համաձայն սույն ՀՆՀ-ի:

5.3. **Հայտերի ներկայացում և գրանցում**

5.3.1. Հայտերի ներկայացումն ու գրանցումն իրականացվում են ստորև 5.3.2-5.3.4 կետերի համաձայն :

5.3.2. Լիազորված անձը Հայտը առձեռն հանձնում է Գնահատող հանձնաժողովի քարտուղարին 5.2 կետով սահմանված օրը և ժամին: Լիազորված անձը պետք է ունենա անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակը և Լիազորող փաստաթղթերի պատճենները՝ Գնահատող հանձնաժողովի տարածք մտնելու թույլտվություն ստանալու համար:

Տարընկալումներից խուսափելու համար հստակ ամրագրվում է, որ Որակավորված հայտատուներին չի թույլատրվում ներկայացնել իրենց հայտերը փոստով կամ ֆաքսով:

5.3.3. Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Լիազորված անձի ներկայությամբ գրանցում է ներկայացված հայտը իր գրանցամատյանում՝ ստուգելուց և հաստատելուց հետո, որ Հայտի արտաքին ծրարը կամ փոստային արկղը և Լիազորված անձի Լիազորող փաստաթղթերը պատրաստված են սույն ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան: Հայտը գրանցելիս արտաքին ծրարը կամ փոստային արկղը չի բացվում: Գնահատող հանձնաժողովի քարտուղարն իր գրանցամատյանում նշում է ՊՄԳ ընթացակարգի 110-րդ կետում նշված Հայտի գրանցման տվյալները, ինչպես նաև Լիազորված անձի լրիվ անվանումը և ըստ 4.3 կետի հայտերի արտաքին ծրարի կամ փոստային արկղի պատրաստման պահանջներին անհամապատասխանությունները: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Հայտի արտաքին ծրարի կամ փոստային արկղի վրա նշում է նաև ՊՄԳ ընթացակարգի 110-րդ կետում նշված Հայտի գրանցման տվյալները:

5.3.4. Հայտի գրանցման ժամանակ Լիազորված անձը ստորագրում է գրանցամատյանում՝ Հայտի պատշաճ ընդունումն ու գրանցումը հաստատելու համար: Լիազորված անձի կողմից ստորագրումից հրաժարվելու դեպքում Գնահատող հանձնաժողովի քարտուղարը համապատասխան նշում է կատարում գրանցամատյանում: Ստորագրման նույն կանոնները

կարող են կիրառվել (անհրաժեշտության դեպքում) այն դեպքում, երբ Հայտը ընդունման և գրանցման ենթակա չէ, ինչպես սահմանված է 5.3.5 կետում:

Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Լիազորված անձին տալիս է հետևյալ տեղեկությունները պարունակող գրություն.

(ա) Հայտի գրանցման տվյալներն՝ ըստ վերը նշված 5.3.3 կետի,

(բ) Հայտերի արտաքին փաթեթների բացման նիստի նախատեսված օրվա, ժամի և վայրի վերաբերյալ նշում,

(գ) Հայտը գրանցած՝ Գնահատող հանձնաժողովի քարտուղարի լրիվ անունը:

5.3.5. Չեն ընդունվում և չեն գրանցվում հետևյալ հայտերը.

(ա) Փոստով կամ ֆաքսով ներկայացված հայտերը: Փոստով ներկայացված հայտերը ուղարկողին վերադարձվում են չբացված վիճակում (արտաքին ծրարով կամ փոստային արկղի մեջ)՝ մերժման մասին համապատասխան ծանուցմամբ: Ֆաքսով ներկայացված հայտերը չեն դիտարկվում, և ուղարկողին ուղարկվում է ֆաքսով մերժման մասին համապատասխան ծանուցում:

(բ) 4.3 կամ 5.2 կետերի խախտմամբ ներկայացված հայտերը, ինչպես նաև Հայտերի ներկայացման ժամանակ պահանջի դեպքում անձը հաստատող փաստաթղթեր կամ Լիազորող փաստաթղթեր չներկայացրած անձանց կողմից ներկայացված հայտերը: Այդ հայտերը վերադարձվում են արտաքին ծրարի կամ փոստային արկղի մեջ (առկայության դեպքում) չբացված վիճակում՝ Լիազորված անձին և/կամ անձը հաստատող փաստաթղթեր կամ Լիազորող փաստաթղթեր չներկայացրած անձին (կախված հանգամանքներից) առձեռն փոխանցելով մերժման համապատասխան ծանուցումը:

(գ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետից հետո ներկայացված հայտերը: Այդ հայտերը պետք է Որակավորված հայտատուին վերադարձվեն չբացված արտաքին ծրարով կամ փոստային արկղի մեջ՝ մերժման մասին համապատասխան ծանուցմամբ:

5.3.6. Յուրաքանչյուր Որակավորված հայտատու համաձայնում և ընդունում է, որ սույն ՀՆՀ-ի շրջանակներում Հայտի ներկայացումը համարվում է սույն ՀՆՀ-ի պայմանների ընդունում այդ Որակավորված հայտատուի կողմից, ներառյալ, բայց չսահմանափակվելով հայտերի գնահատման չափանիշների մրցակցային և ոչ խտրական բնույթով: Որակավորված հայտատուները համաձայնում են մինչև հայտերի ներկայացման ժամկետի ավարտը նախաձեռնել սույն ՀՆՀ-ի պայմանների՝ Կիրառելի օրենքին համապատասխանության ցանկացած վիճարկում:

6. ՀԱՅՏԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ: ՀԱՅՏԵՐԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՀԵՏ ԿԱՆՉՈՒՄ

6.1. **Հայտերի վերաբերյալ հարցումների անցկացման կարգը**

6.1.1. Որակավորված հայտատուն կարող է լրացուցիչ տեղեկություններ կամ պարզաբանումներ ստանալ Ընտրության ընթացակարգին մասնակցելու, հայտերի նախապատրաստման և ներկայացման հետ կապված՝ ի պատասխան 6.1 կետի համաձայն իր գրավոր հարցումների կամ 6.2 կետի համաձայն հսատկեցման հանդիպումներիժամանակ: Ընտրության

ընթացակարգին մասնակցելու, հայտերի նախապատրաստման և ներկայացման հետ կապված լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների հարցումը ներկայացվում է Լիազորված անձի կողմից մինչև հայտերի ներկայացման ժամկետի ավարտը: Հարցումը կարող է ներկայացվել.

(ա) առձեռն՝ Տեղեկատվական թերթիկում նշված՝ Գնահատող հանձնաժողովի հասցեով և աշխատանքային ժամանակացույցի համաձայն,

(բ) էլեկտրոնային փոստով՝ Տեղեկատվական թերթիկում նշված՝ Գնահատող հանձնաժողովի էլեկտրոնային հասցեին,

Հարցումն առձեռն ներկայացնելու դեպքում հարցումը ներկայացնող Լիազորված անձը պետք է ունենա անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակը և Լիազորող փաստաթղթերի պատճենները՝ նման հարցում ներկայացնելու համար:

6.1.2. Հայտերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների հարցումը պետք է պարունակի հետևյալ տեղեկատվությունը.

(ա) հարցումը ներկայացնող սուբյեկտի (Որակավորված հայտատու) լրիվ անվանումը, գրանցման և կոնտակտային տվյալները,

(բ) ՀՆՀ-ին հղում,

(գ) Հայտի վերաբերյալ տեղեկություններ կամ պարզաբանումներ տրամադրելու վերաբերյալ հստակ ձևակերպված հարցում,

(դ) հարցման ամսաթիվը:

6.1.3. Հարցումներին ի պատասխան Գնահատող հանձնաժողովը տեղեկատվություն կամ պարզաբանումներ է տրամադրում դրանց ստացման հերթականությամբ՝ յուրաքանչյուր հարցումն ստանալուց հետո առնվազն հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում և ոչ ուշ, քան քսան (20) աշխատանքային օրվա ընթացքում: Սույն 6.1 կետի համաձայն տեղեկություններ/պարզաբանումներ ստանալու վերաբերյալ հարցումներին Գնահատող հանձնաժողովի բոլոր պատասխանները հանրամատչելի են և հրապարակվում են էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում ՝ ապաանձնավորված ձևով, այսինքն այնպես, որ հնարավոր չլինի բացահայտել հարցումները ներկայացրած Որակավորված հայտատուի վերաբերյալ որևէ տեղեկություն:

Գնահատող հանձնաժողովը հարցումներին ի պատասխան տեղեկատվություն կամ պարզաբանումներ է տրամադրում բացառապես սույն ՀՆՀ-ի համաձայն հայտերի պատրաստման և ներկայացման համար անհրաժեշտ ծավալով: Գնահատող հանձնաժողովը կարող է մի քանի նմանատիպ կամ միանման (կրկնվող) հարցումներին տալ ընդհանուր պատասխան:

6.1.4. Գնահատող հանձնաժողովն իրեն իրավունք է վերապահում չպատասխանել որոշ հարցումների, մասնավորապես այն հարցումներին, որոնք չեն համապատասխանում 6.1.1 և 6.1.2 կետերի պահանջներին, որոնք ներկայացվել են Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից հետո, ինչպես նաև այն դեպքում, երբ Գնահատող հանձնաժողովը չի հասցնում պատասխանել նման հարցումներին՝ Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու պատճառով:

6.2. **Հստակեցման հանդիպումներ**

6.2.1. Գնահատող հանձնաժողովը կարող է անցկացնել դռնբաց հանդիպումներ ՝ քննարկելու և հստակեցնելու այն հարցերը, որոնք կարող են ծագել Որակավորված հայտատուների մոտ՝ հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված: Գնահատող հանձնաժողովը Հայտերի ներկայացման ժամկետի ընթացքում կարող է անցկացնել հստակեցման հանդիպումներ ՝ Ժամանակացույցում նշված այդպիսի հանդիպումների անցկացման նախնական ժամանակացույցի համաձայն, ինչպես նաև հաշվի առնելով Որակավորված հայտատուների կողմից նման հանդիպումներ անցկացման դիմումները: Որակավորված հայտատուները կարող են հստակեցման հանդիպումներ անցկացնելու նպատակով դիմել Գնահատող հանձնաժողովին 6.1.1 (ա) և/կամ 6.1.1 (բ) կետերով նախատեսված կարգով և ոչ ուշ, քան Հայտերի ներկայացման վերջնաժամկետի քսաներորդ (20-րդ) օրը: Գնահատող հանձնաժողովը պարտավոր չէ հետևել Ժամանակացույցում նշված Հայտերի վերաբերյալ հստակեցման հանդիպումների ժամանակացույցին և կարող է կազմակերպել այնպիսի հանդիպումներ, որոնք կարող են պահանջվել և նպատակահարմար լինել ՀՆՀ-ի փուլում Ընտրության ընթացակարգն իրականացնելու նպատակով:

Գնահատող հանձնաժողովը մրցույթի մասնակցության հայտերի վերաբերյալ հստակեցման հանդիպման մասին հայտարարությունը հրապարակում է էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում այդպիսի հանդիպման անցկացման նշանակված օրվանից առնվազն չորս (4) օր առաջ: Հայտարարությունը պետք է պարունակի Գնահատող հանձնաժողովի կողմից սահմանված՝ յուրաքանչյուր հանդիպման հիմնական մանրամասները, այդ թվում՝ հանդիպման անցկացման ամսաթիվը, ժամը, ձևաչափը (առցանց/առկա) և վայրը / մուտքի մանրամասները:

6.2.2. Որակավորված հայտատուներն իրավունք ունեն մասնակցելու հստակեցման հանդիպմանը՝ հանդիպման նշանակված օրվանից երկու (2) օր առաջ Գնահատող հանձնաժողովին գրավոր ծանուցում ներկայացնելու դեպքում: Ծանուցումը պետք է պարունակի հանդիպմանը մասնակցության հարցում և Հայտերի վերաբերյալ տեղեկություններ կամ պարզաբանումներ տրամադրելու հարցում, որոնց Որակավորված հայտատուները կցանկանային անդրադառնալ հանդիպման ընթացքում: Հստակեցման հանդիպմանը մասնակցելու ծանուցումը կազմվում և ներկայացվում է 6.1.1 - 6.1.2 կետերին համապատասխան՝ հետևյալ փոփոխություններով.

(ա) Ծանուցումը լրացուցիչ պետք է պարունակի (i) հստակեցման հանդիպմանը մասնակցել ցանկացող անձանց (մինչև յոթ (7) անձանց) ցուցակը (Որակավորված հայտատուի Լիազորված անձինք) և (ii) հստակեցման հանդիպմանը մասնակցելու դիմածների անձը հաստատող փաստաթղթերի պատճենները:

6.2.3. Առկա հանդիպմանը մասնակցող Լիազորված անձինք իրենց մոտ պետք է ունենան անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակը և Լիազորող փաստաթղթերի պատճենները՝ Գնահատող հանձնաժողովի տարածք մուտք գործելու և հանդիպմանը մասնակցելու համար: Այդ անձինք պետք է ստորագրեն Գնահատող հանձնաժողովի քարտուղարի գրանցամատյանում՝ հաստատելով իրենց ներկայությունը: Նշված անձանց կողմից հանդիպմանը չներկայանալու դեպքում Գնահատող հանձնաժողովն սկսում է հանդիպումը անցկացնել առանց նրանց և իր արձանագրության մեջ նշում նրանց բացակայությունը:

Հստակեցման հանդիպմանը որևէ Լիազորված անձի բացակայությունը չի ազդում վերջինիս վավերության վրա:

6.2.4. Հստակեցման հանդիպմուները նվիրված են բացառապես հայտերի պատրաստման և ներկայացման հետ կապված հարցերի քննարկմանը՝ ի պատասխան Որակավորված հայտատուների կողմից 6.2.2 կետի համաձայն նախապես ներկայացված լրացուցիչ տեղեկությունների կամ պարզաբանումների հարցումների: Գնահատող հանձնաժողովը կարող է Որակավորված հայտատուներին լրացուցիչ պարզաբանել դռնբաց հանդիպման ընթացակարգային մանրամասները (օրինակ՝ օրակարգը, քննարկման ընթացակարգը և հանդիպման անցկացման ժամկետները)՝ նման հանդիպման հայտարարման և/կամ բացման ժամանակ:

6.2.5. Գնահատող հանձնաժողովը ՊՄԳ ընթացակարգին գործող պայմաններին և Գնահատող հանձնաժողովի աշխատակարգին համապատասխան անցկացնում և արձանագրում է հայտերի վերաբերյալ հստակեցման հանդիպման արդյունքները: Հանդիպման արձանագրությունը չի ստորագրվում հանդիպմանը ներկա Լիազորված անձանց կողմից:

Գնահատող հանձնաժողովը լրացուցիչ էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում հրապարակում է հստակեցման հանդիպմանը քննարկված և բարձրացված՝ հայտերի նախապատրաստման և ներկայացման հետ կապված հարցերի ամփոփ պատասխանը այդպիսի հանդիպման անցկացման օրվանից հետո 2 (երկու) աշխատանքային օրվա ընթացքում (պատասխանը պետք է լինի ապանձնավորված, այսինքն՝ թույլ չի տա բացահայտել Որակավորված հայտատուների վերաբերյալ որևէ տեղեկություն)

6.3. Հայտերի փոփոխություններ

6.3.1. Որակավորված հայտատուն կարող է փոփոխություններ կատարել հայտում մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը: Տարընկալումներից խուսափելու համար Հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուց հետո հայտերի ոչ մի փոփոխություն չի թույլատրվում, բացառությամբ 7.3.2 կետով նախատեսված պարզաբանումների:

6.3.2. Հայտում փոփոխությունները կարող են վերաբերել ամբողջ Հայտին կամ դրա առանձին մասերին կամ Հայտի մաս կազմող փաստաթղթերին՝ համաձայն Հավելված 4 -ում (*Հայտի բովանդակությունը*) ներկայացված կառուցվածքի և կարող են ներառել փոփոխություններ (ձևափոխություններ) և լրացումներ Հայտում:

6.3.3. Հայտերում փոփոխությունները պատրաստվում և ներկայացվում են ՊՄԳ ընթացակարգի 113-րդ կետի և հետևյալ պահանջների համաձայն.

(ա) Որակավորված հայտատուն 4.1 կետի պահանջների համաձայն պատրաստում է ներկայացվող Հայտի փոփոխությունների բնօրինակը և պատճենները՝ դրանցից յուրաքանչյուրի վրա հստակ նշելով փոփոխությունների տեսակը («ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ», «ԼՐԱՑՈՒՄ»)՝ կախված դեպքից: Որակավորված հայտատուն նաև ամփոփում է Հայտում բոլոր փոփոխությունները համեմատական աղյուսակում, որի բնօրինակը և պատճենները պատրաստվում են Հայտի փոփոխությունների համապատասխան բնօրինակի և պատճենների հետ միասին և տեղադրվում Հայտի փոփոխությունների ներքին ծրարի մեջ, ինչպես նշված է ստորև (բ) ենթակետում:

(բ) Որակավորված հայտատուն Հայտի փոփոխությունները տեղադրում է ներքին ծրար(ներ)ի մեջ, որը պետք է պատրաստվի 4.2 կետի պահանջներին համապատասխան, և հստակ նշում փոփոխության տեսակը («ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ», «ԼՐԱՑՈՒՄ») և Հայտի այն մասը, որը փոփոխվել է («ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ», «ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿ»)՝ կախված հանգամանքներից: Այնուհետև

Որակավորված հայտատուն Հայտի փոփոխություններով ներքին ծրար(ներ)ը տեղադրում է 4.3 կետի պահանջներին համապատասխան պատրաստված արտաքին ծրարի կամ փոստային արկղի մեջ, որտեղ հստակ նշվում է «ՀԱՅՏԻ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ ԱՐՏԱՔԻՆ ԾՐԱՐ/ՓՈՍՏԱՅԻՆ ԱՐԿՂ»:

(գ) Լիազորված անձը համաձայնեցնում է ներկայացման ամսաթիվը և ժամը և սույն 6.3 կետով նախատեսված անհրաժեշտ փոփոխությունների դեպքում 5.2-5.3 կետերով սահմանված կարգով Հայտի փոփոխությունները ներկայացնում է Գնահատող հանձնաժողովի քարտուղարին: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Լիազորված անձին տրամադրում է Հայտի փոփոխությունների ստացման գրավոր հաստատում:

6.3.4. Որակավորված հայտատուներին խորհուրդ է տրվում ժամանակին կատարել փոփոխություններ իրենց հայտերում՝ մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը: Որակավորված հայտատուները կրում են իրենց Հայտերի փոփոխությունների ժամանակի ոչ պատշաճ պլանավորման հետ կապված բոլոր ռիսկերը, հատկապես այն դեպքերում, երբ նման փոփոխությունները նախատեսված են Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտին մոտ ժամկետի համար, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել սույն ՀՆՀ-ի համաձայն Հայտերի փոփոխությունները ներկայացնելու և ընդունելու համար պահանջվող գործողությունները:

6.3.5. Սույն կետով սահմանված՝ Հայտերում փոփոխություններ կատարելու պահանջների խախտումը հիմք է հանդիսանում սույն ՀՆՀ-ի համաձայն հայտը մերժելու համար:

6.4. **Հայտերի հետ կանչում**

6.4.1. Որակավորված հայտատուն իրավունք ունի հետ վերցնել իր հայտը մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը: Հայտերը հետ են վերցվում ՊՄԳ ընթացակարգի 113-րդ կետի և հետևյալ պահանջների համաձայն.

(ա) Որակավորված հայտատուն պատրաստում է գրավոր ծանուցում Հայտը հետ կանչելու մասին: Ծանուցումը պետք է վերաբերի Որակավորված հայտատուի հայտին և հստակ նշվի որպես «ՀԱՅՏԻ ՀԵՏԿԱՆՉՄԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ», ինչպես նաև պարունակի Որակավորված հայտատուի լրիվ անվանումը և կոնտակտային տվյալները:

(բ) Լիազորված անձը համաձայնեցնում է Ծանուցման ներկայացման ամսաթիվը և ժամը և սույն 6.4 կետով նախատեսված անհրաժեշտ փոփոխությունների դեպքում 5.2-5

.3 կետերով սահմանված կարգով Հայտի հետկանչման ծանուցումը ներկայացնում է Գնահատող հանձնաժողովի քարտուղարին: Գնահատող հանձնաժողովի քարտուղարը Լիազորված անձին ներկայացնում է Հայտի հետկանչման մասին ծանուցման ստացմանը գրավոր հաստատումը և Հայտի չբացված արտաքին ծրարը կամ փոստային արկղը վերադարձնում Լիազորված անձին:

6.4.2. Իր Հայտը հետ կանչած Որակավորված հայտատուն կարող է մեկ այլ հայտ ներկայացնել մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը՝ սույն ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան:

6.4.3. Որակավորված հայտատուներին խորհուրդ է տրվում ժամանակին հետ վերցնել իրենց հայտերը՝ մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտը: Որակավորված հայտատուները կրում են իրենց Հայտերի հետկանչման ժամկետների ոչ պատշաճ պլանավորման հետ կապված բոլոր ռիսկերը, հատկապես այն դեպքերում, երբ այդ հետկանչումը նախատեսված է Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտին մոտ ժամկետի համար, ինչը հնարավորություն չի տալիս իրականացնել սույն ՀՆՀ-ի համաձայն

Հայտերի հետկանչման ծանուցումը ներկայացնելու և ընդունելու համար պահանջվող գործողությունները:

7. ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ԳՆԱՀԱՏՈՒՄ

7.1. **Հայտերի գնահատման վերջնաժամկետը և գնահատման ընթացակարգի կազմակերպումը**

7.1.1. Գնահատող հանձնաժողովը գնահատում է հայտերը և Հաղթողի ընտրության մասին որոշում կայացնում 7.2 կետի համաձայն Հայտերի արտաքին փաթեթների և Տեխնիկական առաջարկի ծրարների բացման նիստի անցկացման օրվանից հետո ութսուն (80) օրվա ընթացքում (այսուհետ՝ **«Հայտերի գնահատման վերջնաժամկետ»**):

7.1.2. Գնահատող հանձնաժողովը հայտերի բովանդակությունը կիրապարակի դռնբաց նիստերի ընթացքում, որին կարող են մասնակցել Որակավորված հայտատուները և նրանց Լիազորված անձինք: Գնահատող հանձնաժողովի որոշմամբ Գնահատող հանձնաժողովի Հայտերի գնահատման հանդիպումները, ինչպես նաև նման հարցերի շուրջ Խորհրդատուների հետ խորհրդակցությունները կարող են անցկացվել առանձին: Նման փակ հանդիպումները ու խորհրդակցությունները չեն համարվում Գնահատող հանձնաժողովի դռնբաց նիստեր սույն ՀՆՀ-ի համատեքստում և հասանելի չեն լինելու Որակավորված հայտատուների և Լիազորված անձանց մասնակցության համար:

7.1.3. Գնահատող հանձնաժողովը գնահատում է որակի և արժեքի վրա հիմնված ընտրության մեթոդի համաձայն՝ սույն ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան:

7.2. **Հայտերով և Տեխնիկական առաջարկների բովանդակությամբ արտաքին փաթեթների բացում**

7.2.1. Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտին հաջորդող առաջին աշխատանքային օրը Գնահատող հանձնաժողովը անցկացնում է Հայտերով և Տեխնիկական առաջարկների բովանդակությամբ արտաքին փաթեթների (արտաքին ծրարներ և/կամ փոստային արկղեր) բացմանը նվիրված նիստ: Այս նիստի նախատեսված ամսաթիվը, ժամը և վայրը նշված են Տեղեկատվական թերթիկում:

7.2.2. Նիստի ընթացքում Գնահատող հանձնաժողովը նիստին ներկա գտնվելու ցանկություն հայտնած Լիազորված անձանց ներկայությամբ իրականացնում է հետևյալ ընթացակարգերը.

(ա) բացել գրանցված Հայտերով արտաքին ծրարները և փոստային արկղերը, ներառյալ՝ 6.3-րդ կետին համապատասխան ներկայացված Հայտերում կատարված փոփոխություններով արտաքին ծրարները և փոստային արկղերը,

(բ) բացել ներկայացված Հայտերի Տեխնիկական առաջարկի ծրարները ՝ Հայտերի ամբողջականությունը ստուգելու համար:

Տարընկալումներից խուսափելու համար նշենք, որ 7.2 կետի համաձայն անցկացվող Գնահատող հանձնաժողովի նիստը չպետք է նախատեսի Ֆինանսական առաջարկների բովանդակության հրապարակում, ինչպես նաև Հայտերի գնահատում (ինչպես Տեխնիկական առաջարկների, այնպես էլ Ֆինանսական առաջարկների)՝ համաձայն սույն ՀՆՀ-ի:

7.2.3. Լիազորված անձինք պետք է ունենան անձը հաստատող փաստաթղթերի բնօրինակները և Լիազորող փաստաթղթերի պատճենները՝ Գնահատող հանձնաժողովի մուտք գործելու և

սույն 7.2 կետի համաձայն անցկացվող նիստին մասնակցելու համար: Նիստին ներկայացող Լիազորված անձինք ստորագրում են Գնահատող հանձնաժողովի քարտուղարի գրանցամատյանում՝ հաստատելով իրենց ներկայությունը: Լիազորված անձի՝ նիստին չներկայանալու դեպքում Գնահատող հանձնաժողովն սկսում է նիստի անցկացումը և իր արձանագրության մեջ նշում Լիազորված անձի բացակայությունը: 7.2-րդ կետի համաձայն անցկացվող նիստում Լիազորված անձի բացակայությունը չի ազդում նման նիստի վավերականության վրա:

7.2.4. Հայտը պարունակող յուրաքանչյուր արտաքին ծրար/փոստային արկղ բացելիս Գնահատող հանձնաժողովը հայտարարում է Որակավորված հայտատուի անունը, ստուգում 4.2 կետի համաձայն Տեխնիկական առաջարկի ծրար(ներ)ի և Ֆինանսական առաջարկի ծրար(ներ)ի առկայությունը և յուրաքանչյուր ներքին ծրարի վրա գրում Հայտի գրանցման տվյալները, որոնք 5.3.3 կետի համաձայն Հայտի գրանցման պահին նշվել էին արտաքին ծրարի/փոստարկի վրա: Հայտերի փոփոխություններով (եթե այդպիսիք կան) արտաքին ծրարները/փոստային արկղերը բացելիս Գնահատող հանձնաժողովը գործում է նույն կերպ՝ յուրաքանչյուր դեպքում ստուգելով արտաքին ծրարներում/փոստային արկղերում 6.3 կետի պահանջներին համապատասխան ձևակերպված ներքին ծրարների առկայությունը:

7.2.5. 7.2.4 կետով նախատեսված ընթացակարգերի կատարումից հետո Գնահատող հանձնաժողովը բացում է Տեխնիկական առաջարկի ծրարները՝ ստուգելու, թե արդյոք դրանց բովանդակությունը.

(ա) ամբողջական է և պարունակում է Տեխնիկական առաջարկի անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են Հավելված 4-ում (*Հայտի բովանդակությունը*) ներկայացված Տեխնիկական առաջարկի կառուցվածքին, և

(բ) իրենց ձևի և կառուցվածքի առումով համապատասխանում են սույն ՀՆՀ-ի պահանջներին՝ առանց ակնհայտ էական շեղումների, սխալների կամ այլ ձևական խախտումների:

Սույն 7.2.5 կետի (ա)-(բ) ենթակետերով նախատեսված բովանդակության պահանջները չպահպանելը հիմք է հանդիսանում հայտը մերժելու համար:

7.2.6. Սույն 7.2 կետի համաձայն անցկացված նիստի արդյունքներն արձանագրվում են Գնահատող հանձնաժողովի նիստի արձանագրությամբ: Արձանագրությունը չպետք է ստորագրվի նիստին ներկա Լիազորված անձանց կողմից:

7.3. **Տեխնիկական առաջարկների գնահատում**

7.3.1. Գնահատող հանձնաժողովը գնահատում է Տեխնիկական առաջարկները 7.2 կետի համաձայն անցկացվող բացման նիստի օրվանից հետո երեսունհինգ (35) օրվա ընթացքում (այսուհետ՝ **«Տեխնիկական առաջարկների գնահատման վերջնաժամկետ»**)՝ Հավելված 5-ում (*Հայտերի գնահատում*) ներկայացված Տեխնիկական առաջարկների գնահատման չափանիշների և մեթոդաբանության հիման վրա:

Գնահատող հանձնաժողովը կարող է 7.1.2 կետում ներկայացված իր աշխատակարգի համաձայն անցկացնել Տեխնիկական առաջարկների գնահատման վերաբերյալ փակ հանդիպումների և խորհրդակցություններ Խորհրդատուների հետ:

7.3.2. Գնահատող հանձնաժողովը կարող է դիմել ՊՄԳ ընթացակարգի 129-130 կետերով սահմանված պարզաբանման գործընթացի կիրառմանը՝ Տեխնիկական առաջարկի գնահատման ընթացքում դրանում առկա անհամապատասխանությունները պարզելու

համար: Գնահատող հանձնաժողովն այդ մասին համապատասխան ծանուցում է ուղարկում Որակավորված հայտատուին 6.1.1 (ա) և/կամ (բ) ենթակետերով սահմանված կարգով, բայց ամեն դեպքում մինչև Տեխնիկական առաջարկների գնահատման վերջնաժամկետը:

Հստակեցման գործընթացը սույն 7.3.2 կետի համաձայն կարող է, ըստ էության, ներառել Տեխնիկական առաջարկի փոփոխություններ (ներառյալ Տեխնիկական առաջարկը կազմող փաստաթղթերի լրացում, հեռացում, փոխարինում, վերահանձնում), որոնք չեն հանգեցնի Էական Փոփոխության: : Սույն 7.3.2 կետի իմաստով «Էական Փոփոխություն» նշանակում է Տեխնիկական առաջարկի մեջ ցանկացած փոփոխություն, որը.(ա) շեղվում կամ խախտում է Կիրառելի օրենքով կամ Մրցութային փաստաթղթերով սահմանված Ընտրության ընթացակարգի պարտադիր պահանջները (մասնավորապես՝ Որակավորված Հայտատուների և նրանց Հայտերի համար սույն ՀՆՀ-ով նախատեսված պարտադիր պահանջները). և/կամ

(բ) Եթե իրականացվի, անարդարացիորեն կազդի այլ Որակավորված Հայտատուների մրցակցային դիրքի վրա, ովքեր ներկայացնում են էականորեն համապատասխանող Տեխնիկական առաջարկներ:

Սույն 7.3.2 կետով նախատեսված պարզաբանման հարցմանն ի պատասխան Որակավորված հայտատուի կողմից տեղեկատվություն չտրամադրելը կհանգեցնի «ինչպես որ կա» սկզբունքով հայտի գնահատման և կարող է հանգեցնել Հայտի մերժմանը, եթե հայցվող տեղեկատվության բացակայությունը տվյալ Հայտի գնահատման էական շեղում է:

Կասկածներից խուսափելու համար սույն 7.3.2 կետը թույլ չի տա որևէ փոփոխություն կատարել Ֆինանսական առաջարկում:

7.3.3. Գնահատող հանձնաժողովը կայացնում է որոշում Տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների վերաբերյալ (այդ թվում՝ նշելով ՊՄԳ ընթացակարգի 121-րդ կետով նախատեսված գնահատման մանրամասները) ոչ ուշ, քան Տեխնիկական առաջարկների գնահատման վերջնաժամկետի վերջին օրը: Սույն որոշման օրը Գնահատող հանձնաժողովի քարտուղարը 6.1.1 (ա) և/կամ (բ) ենթակետերով սահմանված կարգով Լիազորված անձանց է ուղարկում նաև հետևյալ ծանուցումները.

(ա) Տեխնիկական առաջարկի համապատասխանության մասին ծանուցում. ներկայացվում է Որակավորված այն հայտատուներին, որոնց Տեխնիկական առաջարկները գնահատման արդյունքներով ճանաչվել են ՀՆՀ-ի պահանջներին համապատասխանող: Այս ծանուցումը պետք է պարունակի (i) նշում առ այն, որ Որակավորված հայտատուի Ֆինանսական առաջարկը ենթակա է հետագա գնահատման, և (ii) Ֆինանսական առաջարկների բովանդակության հրապարակման նիստի հրավեր, որը կանցկացվի 7.4 կետի համաձայն:

Այս ծանուցումը չպետք է պարունակի Գնահատող հանձնաժողովի կողմից կատարված Տեխնիկական առաջարկների գնահատման որևէ մանրամասնություն, ներառյալ Տեխնիկական առաջարկին շնորհված միավորների քանակը, Տեխնիկական առաջարկի գնահատման վարկանիշը կամ մյուս Որակավորված հայտատուների Տեխնիկական առաջարկների գնահատման վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

(բ) Հայտի մերժման մասին ծանուցում. ներկայացվում է Որակավորված այն հայտատուներին, որոնց Տեխնիկական առաջարկները գնահատման արդյունքներով

մերժվել են ՀՆՀ-ի պահանջներին չհամապատասխանելու փաստի հիմքով: Այս ծանուցումը պետք է պարունակի (i) Որակավորված հայտատուի Տեխնիկական առաջարկը ՀՆՀ-ի պահանջներին չհամապատասխանող ճանաչելու հիմնավորումը, և (ii) հայտարարություն այն մասին, որ Որակավորված հայտատուի ամբողջ Հայտը մերժվել է և ենթակա է վերադարձման Որակավորված հայտատուին՝ Հայտը (Տեխնիկական առաջարկ և չբացված Ֆինանսական առաջարկ) վերադարձնելու նախատեսվող գործողություններով:

Այս ծանուցումը չպետք է պարունակի մյուս Որակավորված հայտատուների Տեխնիկական առաջարկների գնահատման վերաբերյալ որևէ տեղեկատվություն:

7.4. **Ֆինանսական առաջարկների բովանդակության հրապարակում**

7.4.1. Գնահատող հանձնաժողովը հրավիրում է Ֆինանսական առաջարկների բացմանը նվիրված նիստ ոչ ուշ, քան 7.3.3 կետի համաձայն Տեխնիկական առաջարկների գնահատման արդյունքների մասին որոշման օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը: Այս նիստին կարող են ներկա գտնվել իրենց Տեխնիկական առաջարկի համապատասխանության մասին ծանուցում ստացած Որակավորված հայտատուների Լիազորված անձինք: Տվյալ նիստի նախատեսված ամսաթիվը, ժամը և վայրը նշված կլինեն 7.3.3 (ա) կետով նախատեսված ծանուցումներում:

Այս նիստին ներկա գտնվելու համար Իրավասու Լիազորված անձանց համար կգործեն 7.2 կետով նախատեսված պահանջները:

7.4.2. Այս նիստում Գնահատող հանձնաժողովը բացում է 7.3.3 (ա) կետում նշված ծանուցումները ստացած Որակավորված հայտատուների ներկայացված Ֆինանսական առաջարկի ծրարները՝ ստուգելու, թե արդյոք դրանց բովանդակությունը.

(ա) ամբողջական է և պարունակում է Ֆինանսական առաջարկի անհրաժեշտ փաստաթղթերը, որոնք ընդհանուր առմամբ համապատասխանում են Հավելված 4-ում (*Հայտի բովանդակությունը*) ներկայացված Ֆինանսական առաջարկի կառուցվածքին, և

(բ) իրենց ձևի և կառուցվածքի առումով համապատասխանում են սույն ՀՆՀ-ի պահանջներին՝ առանց ակնհայտ էական շեղումների, սխալների կամ այլ ձևական խախտումների:

7.4.3. Սույն 7.4.2 կետի (ա) և/կամ (բ) ենթակետերով նախատեսված բովանդակության կասկածներից խուսափելու համար սույն 7.4 կետի պահանջների համաձայն անցկացվող նիստը չպետք է նախատեսի հետևյալներից որևէ մեկը.

(ա) Գնահատող հանձնաժողովի կողմից կատարված Տեխնիկական առաջարկների գնահատման մանրամասների, այդ թվում՝ յուրաքանչյուր Տեխնիկական առաջարկին շնորհված միավորների, Տեխնիկական առաջարկների գնահատման վարկանիշի կամ որևէ այլ Որակավորված հայտատուի Տեխնիկական առաջարկների գնահատման վերաբերյալ որևէ տեղեակտվության հրապարակում:

(բ) Որակավորված այն հայտատուների Ֆինանսական առաջարկների բովանդակության հրապարակում, որոնց Տեխնիկական առաջարկները գնահատման արդյունքներով մերժվել են ՀՆՀ-ի պահանջներին չհամապատասխանելու փաստի հիմքով:

(գ) Սույն ՀՆՀ-ի պահանջների համաձայն Ֆինանսական առաջարկների գնահատում:

7.5. **Ֆինանսական առաջարկների գնահատում և Ծրագրի իրականացման պայմանագրի շնորհում**

7.5.1. Գնահատող հանձնաժողովը գնահատում է Ֆինանսական առաջարկները և որոշում Հաղթողին 7.4 կետի պահանջների համաձայն անցկացվող Ֆինանսների առաջարկների բովանդակության հրապարակման նիստի օրվանից մինչև Հայտերի գնահատման վերջնաժամկետի ավարտը մնացած ժամանակահատվածում՝ Հավելված 5 -ում (*Հայտերի գնահատում*) ներկայացված Ֆինանսական առաջարկների գնահատման և Հաղթողի որոշման չափանիշների և մեթոդաբանության հիման վրա:

Գնահատող հանձնաժողովը կարող է անցկացնել հանդիպումներ և խորհրդակցություններ Խորհրդատուների հետ Տեխնիկական առաջարկների գնահատման վերաբերյալ՝ 7.1.2 կետում ներկայացված իր աշխատակարգի համաձայն:

Գնահատող հանձնաժողովը կարող է 7.1.2 կետում ներկայացված իր աշխատակարգի համաձայն անցկացնել Ֆինանսական առաջարկների գնահատման և Հաղթողի որոշման վերաբերյալ փակ ժողովներ/նիստեր և խորհրդակցություններ Խորհրդատուների հետ:

7.5.2. Ֆինանսական առաջարկների գնահատումից և սույն ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան Հաղթողին որոշելուց հետո Գնահատող հանձնաժողովը կայացնում է Հայտերի գնահատման արդյունքների և Հաղթողին հայտարարելու մասին որոշում (այսուհետ՝ **«Պայմանագրի շնորհման մասին որոշում»**), ներառյալ՝ նշելով ՊՄԳ ընթացակարգի 127-րդ կետով նախատեսված գնահատման մանրամասները: Գնահատող հանձնաժողովը Պայմանագրի շնորհման մասին որոշումը կայացնում է Հայտերի գնահատման վերջնաժամկետի վերջին օրը:

7.5.3. Գնահատող հանձնաժողովը Հաղթողի անունը և ՊՄԳ ընթացակարգի 135-րդ կետով պահանջվող Հայտերի գնահատման արդյունքների մասին այլ տեղեկություններ իր կայքում հրապարակում է Պայմանագրի շնորհման մասին որոշման ընդունումից հետո հինգ (5) աշխատանքային օրվա ընթացքում:

7.6. **Գնահատումը պետք է գաղտնի լինի**

7.6.1. Հայտերի գնահատման արդյունքների մասին տեղեկատվությունը չպետք է բացահայտվի Որակավորված հայտատուներին կամ գնահատման գործընթացին պաշտոնապես չառնչվող այլ անձանց մինչև 7.5.3 կետի համաձայն Հաղթողի հայտարարումը:

7.6.2. Որակավորված հայտատուի կողմից հայտերի գնահատման գործընթացում Գնահատող հանձնաժողովի կամ Իրավասու մարմնի հետ բանակցելու կամ նրանց վրա ազդելու ցանկացած փորձ կարող է հանգեցնել հայտի մերժմանը:

8. ԾՐԱԳՐԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԿԱՐԳԸ

8.1. **Պայմանագրի շնորհման մասին ծանուցում**

8.1.1. Պայմանագրի շնորհման մասին որոշման ընդունումից հետո տասը (10) աշխատանքային օրվա ընթացքում Գնահատող հանձնաժողովը Հաղթող ճանաչված Որակավորված հայտատուին ուղարկում է ծանուցում (այսուհետ՝ **«Պայմանագրի շնորհման մասին ծանուցում»**)՝ հաղթողին տեղեկացնելու Ծրագրի պայմանագրի շնորհմանը հաջորդող հետագա ընթացակարգերի և պահանջների մասին:

8.1.2. Պայմանագրի շնորհման մասին ծանուցումն ուղարկվում է 6.1.1.կետի (ա) և/կամ (բ) ենթակետերով սահմանված կարգով և, մասնավորապես, պարունակում է.

(ա) Պայմանագրի վերջնական ձևակերպմանն ու ստորագրմանը մասնակցելու հրավեր,

(բ) Պայմանագրի վերջնական ձևակերպման և ստորագրման կարգի վերաբերյալ ցուցումներ,

(գ) Ծրագիրն իրականացնող Ընկերության ստեղծման պահանջ:

8.2. **Ծրագիրն իրականացնող ընկերության գրանցում**

8.2.1. Կիրառելի օրենքի համաձայն՝ Հաղթողը գրանցում է իրավաբանակն անձ, որը կհանդիսանա Պայմանագրի կողմ և կիրականացնի Ծրագիրը որպես մասնավոր գործընկեր (այսուհետ՝ **Ծրագիրն իրականացնող ընկերություն**): Հաղթողը գրանցում է Ծրագիրն իրականացնող ընկերությունը Պայմանագրի շնորհման մասին ծանուցման օրվանից երեսուն (30) օրվա ընթացքում:

8.2.2. Ծրագիրն իրականացնող ընկերության ստեղծման պահանջի կատարումը հաստատելու համար Հաղթողը պարտավոր 6.1.1.կետի (ա) կամ (բ) ենթակետերով սահմանված կարգով Իրավասու մարմնին տրամադրել (i) Ծրագիրն իրականացնող ընկերության հիմնադիր փաստաթղթերի և (ii) Պայմանագրի կնքումն ու կատարումը Ծրագիրն իրականացնող ընկերությանը լիազորած բաժնետերերի կողմից ընդունված որոշումների ամբողջական պատճենները:

8.2.3. Եթե Հաղթողը սույն կետին համապատասխան չի գրանցում Ծրագիրն իրականացնող ընկերություն, ապա դա Իրավասու մարմնի համար հիմք է հանդիսանում Ընտրության ընթացակարգը չեղարկելու համար:

8.3. **Ծրագիրն իրականացնող ընկերության բաժնեմասերի բաշխումը**

8.3.1. Պայմանագրի կնքման պահին Ծրագիրն իրականացնող ընկերության բաժնետիրական կապիտալի կառուցվածքը պետք է լիովին համապատասխանի Հաղթողի կողմից իր Հայտի շրջանակներում ներկայացված բաժնետիրական կապիտալի կառուցվածքին, ինչպես նաև համապատասխանի 8.3.2-8.3.3 կետերի դրույթներին:

8.3.2. Միանձնյա Հաղթողը պետք է անհատապես տիրապետի Ծրագիրն իրականացնող ընկերության ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի 100%-ին և ունենա արդյունավետ վերահսկողություն Ծրագրի ընկերության տեխնիկական և գործառնական գործունեության վրա:

8.3.3. Եթե Հաղթողը Կոնսորցիում է, ապա.

(ա) Դրա Առաջատար անդամը պետք է անհատապես տիրապետի Ծրագիրն իրականացնող ընկերության ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի առնվազն 50%+1-ին, լինի Ծրագրի ընկերության ամենախոշոր բաժնետերը և ունենա արդյունավետ վերահսկողություն Ծրագրի ընկերության տեխնիկական և գործառնական գործունեության վրա:

(բ) Հաղթող Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ, բացի այդ Կոնսորցիումի Առաջատար անդամից, պետք է տիրապետի Ծրագիրն իրականացնող ընկերության ձայնի իրավունքի կամ բաժնետիրական կապիտալի առնվազն 10%-ին:

(գ) Հաղթող Կոնսորցիումի բոլոր անդամները, ընդհանուր առմամբ, պետք է տիրապետեն Ծրագրի ընկերության ձայնի իրավունքի կամ կանոնադրական կապիտալի 100%-ին:

8.3.4. Պայմանագիրը կնքելուց հետո Հաղթողը և Կոնսորցիումի անդամները, որպես Ծրագրի ընկերության բաժնետերեր, պետք է համապատասխանեն Պայմանագրով սահմանված բաժնեմասերի բաշխման և վերահսկողության փոփոխության պահանջներին:

8.3.5. Ցանկացած ժամանակ, մինչև Պայմանագրի կնքումը, Իրավասու մարմինն իրավունք ունի դիմել Հաղթողին և/կամ Ծրագիրն իրականացնող ընկերությանը՝ պահանջելով ներկայացնել (անհրաժեշտության դեպքում) 8.3.2-8.3.3 կետերով սահմանված պահանջների կատարման արդի ապացույցներ: Եթե Հաղթողը և/կամ Ծրագրի ընկերությունը կամ (i) չի ներկայացնում այդպիսի ապացույց հարցումը ստանալու օրվանից հետո տասը (10) օրվա ընթացքում, կամ (ii) ներկայացնում է ապացույց, որը էապես չի հաստատում նման պահանջների կատարումը, ապա դա հիմք է հանդիսանում Իրավասու մարմնի կողմից Ընտրության ընթացակարգը չեղարկելու համար:

8.4. **Պայմանագրի վերջնական ձևակերպում և ստորագրում**

8.4.1. Պայմանագրի շնորհման մասին ծանուցումը Հաղթողին ներկայացնելուց հետո Իրավասու մարմինը նախաձեռնում է Պայմանագրի վերջնական ձևակերպման և ստորագրման գործընթաց: Այս գործընթացի մանրամասները պետք է նշվեն Պայմանագրի շնորհման մասին ծանուցման շրջանակներում Հաղթողին տրված համապատասխան ցուցումներում:

8.4.2. Պայմանագրի ստորագրման ենթակա տարբերակի լրամշակման ընթացքում Կողմերն իրավունք կունենան կատարել սահմանափակ փոփոխություններ և լրացումներ Պայմանագրում, որոնք չպետք է ազդեն կամ շեղվեն (i) տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ ներկայացված Ծրագրի էական պայմաններից, (ii) ՊՄԳ օրենքով պահանջվող Պայմանագրի էական պայմաններից, և (iii) Հաղթողի Հայտում պարունակվող պարտադիր առաջարկներից և ցուցանիշներից: Պայմանագրի ստորագրվող տարբերակի լրամշակման վերաբերյալ բոլոր քննարկումների արդյունքները պետք է ձևակերպվեն գրավոր արձանագրությամբ:

8.4.3. Պայմանագիրը Ծրագիրն իրականացնող ընկերության հետ պետք է կնքվի ոչ ուշ, քան Պայմանագրի շնորհման մասին ծանուցման օրվանից երկու (2) ամիս հետո (այսուհետ՝ **«Պայմանագրի կնքման վերջնաժամկետ»**): Պայմանագրի կնքման վերջնաժամկետը կարող է հետագայում երկարաձգվել ոչ ավելի, քան մեկ (1) ամսով՝ Հաղթողի և/կամ Ծրագիրն իրականացնող ընկերության՝ երկարաձգման վերաբերյալ գրավոր դիմումի հիման վրա: Պայմանագրի կնքման վերջնաժամկետի երկարաձգման մասին որոշումը կայացվում է բացառապես Իրավասու մարմնի հայեցողությամբ:

8.5. **Գործառնության ապահովում**

8.5.1. Ծրագիրն իրականացնող ընկերությունից կպահանջվի Պայմանագրի պայմաններին համապատասխան Իրավասու մարմնին ներկայացնել Գործառնության ապահովումը:

8.5.2. Հաղթողն ու Ծրագրի ընկերությունը պատասխանատու են Հայտի ապահովումը վավեր պահելու համար, մինչև Պայմանագրում նշված կարգով Գործառնության ապահովումն Իրավասու մարմնին ներկայացնելը:

8.5.3. Հաղթողը երկարաձգում է Հայտի ապահովման վավերականության սկզբնական ժամկետը Պայմանագրի շնորհման մասին ծանուցումը ստանալու օրվանից այնքան ժամանակ, որքան անհրաժեշտ լինի և/կամ պահանջվի Իրավասու մարմնի կողմից՝ մինչև Գործառնության ապահովման տրամադրումը: Նշված ժամկետի երկարաձգումը պետք է կատարվի ոչ ուշ, քան Հայտի ապահովման վավերականության սկզբնական ժամկետի ավարտից տասնհինգ (15) աշխատանքային օր առաջ:

8.6. **Հաղթողի ձախողումը**

8.6.1. Եթե ՊՄԳ ընթացակարգի 47-րդ պարբերությամբ նախատեսված բացառման հիմքերից որևէ մեկը հայտնաբերվում կամ կիրառելի է դառնում Հաղթողի նկատմամբ Պայմանագրի շնորհման մասին որոշման հրապարակումից հետո, ապա Հաղթողի հետագա մասնակցությունը (ներառյալ՝ վերջինիս հետ Պայմանագրի կնքումը) Ընտրության ընթացակարգին բացառվում է, և Գնահատող հանձնաժողովը որոշում է կայացնում երկրորդ տեղը զբաղեցրած Հայտատուին («Երկրորդ Տեղը Զբաղեցրած Հայտատու») Հաղթող ճանաչելու մասին:

Գնահատման հանձնաժողովի որոշումը Երկրորդ Տեղը Զբաղեցրած Հայտատուին Հաղթող ճանաչելու վերաբերյալ, որը կայացվել է 8.6.1 կետի համաձայն, պետք է համարվի Պայմանագրի շնորհման մասին որոշում: Երկրորդ Տեղը Զբաղեցրած Հայտատուն պետք է ստանձնի Հաղթողի կարգավիճակ նման որոշման հրապարակման օրվանից (ըստ 7.5.3 կետի պահանջների), և Պայմանագրի շնորհման հետագա գործընթացները պետք է իրականացվեն այնպես, ինչպես կիրականացվեին, եթե սույն ՀՆՀ-ի շրջանակներում Հաղթող հայտարարվեր Երկրորդ Տեղը Զբաղեցրած Հայտատուն (սա մասնավորապես ներառում է 8.1-8.5 կետերով նախատեսված քայլերի իրականացումը):

9. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

9.1. **Էթիկայի կանոնների չպահպանում**

9.1.1. Որակավորված հայտատուի կողմից Հայտերի գնահատման և Հաղթողի որոշման գործընթացում Գնահատող հանձնաժողովի հետ բանակցելու կամ դրա վրա ազդելու ցանկացած փորձ հիմք է հանդիսանում տվյալ Որակավորված հայտատուի Հայտը մերժելու համար:

9.1.2. Այն դեպքերում, երբ.

(ա) Իրավասու մարմնի, Գնահատման հանձնաժողովի կամ Ընտրության ընթացակարգում պաշտոնապես ներգրավված այլ անձանց հետ փոխգործակցության ընթացքում Որակավորված հայտատուն դիմում է խաբեության և/կամ խարդախության, կամ

(բ) ապացուցված է, որ Որակավորված հայտատուն անձամբ կամ միջնորդի միջոցով (ուղղակի կամ անուղղակի) առաջարկել է կամ փորձել է կաշառք առաջարկել Իրավասու մարմնի որևէ ներկայացուցչի և/կամ Գնահատող հանձնաժողովի որևէ անդամի, ապա

(գ) տվյալ Որակավորված հայտատուի Հայտը մերժվում է, Ընտրության ընթացակարգի արդյունքները չեղյալ են հայտարարվում (առկայության դեպքում), և Որակավորված հայտատուի Հայտի ապահովումը կամ Գործառնության ապահովումը (կախված դեպքից) հետ չի վերադարձվում:

9.1.3. Սույն 9.1 կետի դրույթները կիրառվում են առանց վնասելու Իրավասու մարմնի՝ վնասի փոխհատուցում պահանջելու իրավունքին և առանց վնասելու ցանկացած քրեական, վարչական կամ այլ վարույթ, որը կարող է իրականացվել Կիրառելի օրենքին համապատասխան:

9.2. **Ընտրության ընթացակարգն անվավեր (չկայացած) ճանաչելը և Ընտրության ընթացակարգի չեղարկումը**

9.2.1. Գնահատող հանձնաժողովը ՀՆՀ փուլում անվավեր (չկայացած) է ճանաչում Ընտրության ընթացակարգը ՊՄԳ օրենքով սահմանված դեպքերում: Տարընկալումներից խուսափելու համար Գնահատող հանձնաժողովն պետք է ՀՆՀ փուլում անվավեր (չկայացած) ճանաչել Ընտրության ընթացակարգը հետևյալ հանգամանքներում.

(ա) մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը Գնահատող հանձնաժողով ոչ մի հայտ չի ներկայացվել կամ Գնահատող հանձնաժողով ներկայացված բոլոր հայտերը ՀՆՀ-ի համաձայն հետ են կանչվել,

(բ) Գնահատող հանձնաժողով ներկայացված հայտերից ոչ մեկը չի համապատասխանում սույն ՀՆՀ-ի պահանջներին (այսինքն՝ Գնահատող հանձնաժողով ներկայացված բոլոր հայտերը մերժվել են սույն ՀՆՀ-ի համաձայն),

(գ) Պայմանագիր չի կնքվել:

9.2.2. Գնահատող հանձնաժողովը սույն 9.2 կետի համաձայն ընդունված իր որոշումները ՊՄԳ ընթացակարգի համաձայն (ներառյալ ՊՄԳ ընթացակարգի 136-138 կետերի պահանջների համաձայն) արձանագրում է իր նիստերի արձանագրություններում:

Ընտրության ընթացակարգի ցանկացած փուլում Իրավասու մարմինը կարող է իր նախաձեռնությամբ կամ Գնահատող հանձնաժողովի առաջարկությամբ չեղարկել (հետագայում վերսկսելով կամ առանց վերսկսելու) Ընտրության ընթացակարգը: Իրավասու մարմնի՝ սույն 9.2.3 կետի պահանջներին համապատասխան կայացրած որոշումը հրապարակվում է Իրավասու մարմնի և Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքերում ոչ ուշ, քան այդպիսի որոշման ընդունման օրվանից հետո առաջին աշխատանքային օրը:

9.2.3. Գնահատող հանձնաժողովի կամ Իրավասու մարմնի կողմից սույն 9.2 կետի համաձայն ընդունված որոշումներից ոչ մեկը որևէ Հայտատուի փոխհատուցման կամ վնասի հատուցման իրավունք կամ պահանջ չի առաջացնում:

9.3. **Փոփոխություններ ՀՆՀ-ում**

9.3.1. Գնահատող հանձնաժողովը կարող է Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ընթացքում էական կամ ոչ էական փոփոխություններ կատարել ՀՆՀ-ում:

ՀՆՀ-ի փոփոխությունները չպետք է հակասեն Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորմանը և պետք է համապատասխանեն թափանցիկության, հավասարության և խտրականության բացառման սկզբունքներին:

9.3.2. ՀՆՀ-ի էական փոփոխությունները ենթադրում են փոփոխություններ, որոնք էապես ազդում են ՀՆՀ-ի բնույթի, շրջանակի և պահանջների կամ ՀՆՀ փուլում Ընտրության ընթացակարգի անցկացման վրա: ՀՆՀ-ի էական փոփոխությունները կարող են ներառել, մասնավորապես.

(ա) ՀՆՀ-ում սահմանված՝ Հայտերին ներկայացվող պահանջների վրա էապես ազդող փոփոխությունները,

(բ) ՀՆՀ-ի շրջանակներում Հայտերի գնահատման մոտեցման վրա էապես ազդող փոփոխությունները,

(գ) ՀՆՀ-ի այլ էական պահանջների վրա էապես ազդող փոփոխությունները, որոնք Գնահատող հանձնաժողովի կողմից սահմանվել են որպես էական փոփոխություններ:

9.3.3. Գնահատող հանձնաժողովը կարող է կատարել և հրապարակել ՀՆՀ-ում փոփոխություններն առանց Հայտերի ներկայացման վերջնաժամկետը երկարաձգելու.

(ա) Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից ոչ ուշ, քան տասնհինգ (15) օր առաջ՝ ոչ էական փոփոխությունների դեպքում, կամ

(բ) Հայտերի ներկայացման վերջնաժամկետի ավարտից ոչ ուշ, քան երեսուն (30) օր առաջ՝ էական փոփոխությունների դեպքում:

9.3.4. 9.3.3 կետով սահմանված ժամկետներից հետո (ավելի ուշ, քան) ՀՆՀ-ում փոփոխություններ կատարելու և հրապարակելու դեպքում (համապատասխանաբար ոչ էական և էական փոփոխությունների դեպքում) Գնահատող հանձնաժողովը.

(ա) երկարաձգում է Հայտերի ներկայացման վերջնաժամկետն այնպես, որ հայտերի ներկայացման համար ապահովվի առնվազն տասնհինգ (15) օր՝ ՀՆՀ-ում ոչ էական փոփոխությունների հրապարակման օրվանից

(բ) երկարաձգում է Հայտերի ներկայացման վերջնաժամկետն այնպես, որ հայտերի ներկայացման համար ապահովվի առնվազն երեսուն (15) օր՝ ՀՆՀ-ում էական փոփոխությունների հրապարակման օրվանից:

9.3.5. Գնահատող հանձնաժողովը ՀՆՀ-ի փոփոխությունները հրապարակում է Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում՝ Գնահատող հանձնաժողովի կողմից նման փոփոխությունների հաստատման հաջորդ աշխատանքային օրը: ՀՆՀ-ի փոփոխությունների հրապարակումը պետք է ներառի (i) ՀՆՀ-ի նոր (թարմացված) տարբերակը՝ համապատասխան փոփոխություններով, և (ii) ՀՆՀ-ի փոփոխությունների ամփոփագիրը՝ առանձին փաստաթղթում:

9.3.6. Գնահատող հանձնաժողովն իրավունք ունի իր հայեցողությամբ հաստատել կամ մերժել ՀՆՀ-ի փոփոխությունները, ինչպես նաև սույն ՀՆՀ-ի համաձայն որոշել, թե արդյոք այդ փոփոխություններն էական են, թե ոչ էական, և կարող է այդ հարցերի շուրջ խորհրդակցել (անհրաժեշտության դեպքում) Իրավասու մարմնի հետ: Բացի այդ, Իրավասու մարմինը իրավունք ունի չեղարկել (հետագայում վերսկսելով կամ առանց վերսկսելու) Ընտրության ընթացակարգը՝ ՀՆՀ-ի այն փոփոխությունների վերանայման հիման վրա, որոնք առաջարկվել են Գնահատող հանձնաժողովի կողմից՝համաձայն Կիրառելի օրենքի:

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ

Հետևյալ տվյալները լրացնում են ՀՆՀ-ի դրույթները:

Ծրագրի անվանումը	Կենսաչափական անձնագրերի և ազգային նույնականացման քարտերի թողարկման ծառայությունների ծրագիր
Իրավասու մարմնի կոնտակտային տվյալներ	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 1 Վեբ կայք՝ https://www.gov.am
Գնահատող հանձնաժողովի կոնտակտային տվյալներ	Հասցե՝ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն, ք. Երևան 0025, Նալբանդյան փող. 130 Էլ. փոստեր՝ mcs@gov.am, passidppp@isaa.am
Գնահատող հանձնաժողովի աշխատանքային ժամանակացույց	Երկուշաբթի – ուրբաթ, ժամը 9:00 - 18:00
Հայտերի հետ կապված հաղորդակցության նպատակով Լիազորված անձինք	Արփինե Սարգսյան, ԳՀ Նախագահ, Ներքին գործերի նախարարի տեղակալ, ՀՀ Նելլի Դավթյան, ԳՀ Քարտուղար, ՆԳՆ Միգրացիայի և քաղաքացիության ծառայության պետի տեղակալ, ՀՀ
Հայտերի և նամակագրության լեզուն	Հայերեն, անգլերեն կամ ռուսերեն
Հայտերի պատճենների քանակը	• Մեկ (1) տպված բնօրինակ • Մեկ (1) տպված պատճեն • Երկու (2) էլեկտրոնային օրինակ (USB կրիչի վրա) •
Հայտերով և Տեխնիկական առաջարկների բովանդակության արտաքին փաթեթների բացման նիստի մանրամասներ	[Պետք է ավելացնել]

ՀԱՎԵԼՎԱԾ 2. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գործողություն	Նախատեսված ամսաթիվ/ժամկետ
Ընտրության ընթացակարգի ՀՆՀ փուլի մեկնարկ	Էկոնոմիկայի նախարարության պաշտոնական կայքում ՀՆՀ-ի հրապարակման ամսաթիվը (այսուհետ՝ «**ՀՆՀ-ի ամսաթիվ**»)
Հայտերի վերաբերյալ պարզաբանման հարցումներ	ՀՆՀ-ի ամսաթվից մինչև Հայտերի ներկայացման վերջնաժամկետը
Հայտերի վերաբերյալ պարզաբանման հարցումների պատասխանների ուղարկում	5 աշխատանքային օրվա ընթացքում և յուրաքանչյուր հարցումը ստանալուց հետո ոչ ավելի, քան 20 աշխատանքային օրվա ընթացքում
Հստակեցման հանդիպումներ	Ոչ պարտադիր մոտավոր ժամանակացույց Առաջին հանդիպում՝ ՀՆՀ ամսաթիվ + 10 աշխատանքային օր Հաջորդող ցանկացած հանդիպում՝ ՀՆՀ ամսաթիվ + Հայտերի ներկայացման վերջնաժամկետից ոչ ուշ, քան 5 օր առաջ
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	ՀՆՀ ամսաթիվ + 90 օր
Հայտերով և Տեխնիկական առաջարկների բովանդակությամբ արտաքին փաթեթների բացում	Հայտերի ներկայացման վերջնաժամկետ + հաջորդ աշխատանքային օրը (այսուհետ՝ **«Բացման առաջին նիստի ամսաթիվ»**)
Հայտերի գնահատման վերջնաժամկետ (ներառյալ Հաղթողի որոշում)	Բացման առաջին նիստի ամսաթիվ + 80 օր
Տեխնիկական առաջարկների գնահատման վերջնաժամկետ	Բացման առաջին նիստի ամսաթիվ + 35 օր
Ֆինանսական առաջարկների բովանդակության հրապարակում	Տեխնիկական առաջարկների գնահատման վերջնաժամկետ + 2 աշխատանքային օր (այսուհետ՝ **«Բացման երկրորդ նիստի ամսաթիվ»**)
Ֆինանսական առաջարկների գնահատում և Հաղթողի որոշում	Բացման երկրորդ նիստի ամսաթվից մինչև Հայտերի գնահատման վերջնաժամկետի ավարտը
Պայմանագրի շնորհման մասին որոշման ընդունում	Ոչ ուշ, քան Հայտերի գնահատման վերջնաժամկետի վերջին օրը
Հաղթողի և Հայտերի գնահատման արդյունքների հայտարարում	Պայմանագրի շնորհման մասին որոշում + 5 աշխատանքային օր
Պայմանագրի շնորհման մասին ծանուցում	Պայմանագրի շնորհման մասին որոշում + 10աշխատանքային օր
Ծրագիրն իրականացնող ընկերության գրանցում	Պայմանագրի շնորհման մասին ծանուցում + 30 օր
Պայմանագրի վերջնական ձևակերպում և ստորագրում (Պայմանագրի կնքման վերջնաժամկետ)	Պայմանագրի շնորհման մասին ծանուցում + 2 ամիս

Սույն ժամանակացույցը ներկայացված է ընդհանուր հղման նպատակներով

ՀԱՎԵԼՎԱԾ 3. ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՃԵՆԻ ՀԱՐՑՄԱՆ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

[ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՀԱՅՏԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱԹՂԹԻ ԳԼԽԱԳԻՐ]

Ամսաթիվ՝___ _____ 2024թ.

Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև նույնականացման քարտերի տրամադրման հաստատությունների գործարկման ու սպասարկման Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման պատճենի տրամադրման վերաբերյալ

Ներկայացվում է Գնահատող հանձնաժողովին՝ Ծրագրի Ընտրության ընթացակարգն իրականացնելու նպատակով

[Որակավորված հայտատուի անունը, կազմակերպության գրանցման տվյալները] ներկայացնում է դիմում՝ սույն ՀՆՀ-ի 3.3 կետի համաձայն Ծրագրի տեխնիկատնտեսական հիմնավորման (այսուհետ՝ **«Տեխնիկատնտեսական հիմնավորում»**) պատճենը տրամադրելու վերաբերյալ: Խնդրում ենք տրամադրել Տեխնիկատնտեսական հիմնավորման [տպված/էլեկտրոնային] պատճենը:

[Որակավորված հայտատուի անունը] սույնով.

(ա) ընդունում է, որ Տեխնիկատնտեսական հիմնավորման տրամադրումն ու օգտագործումը կարգավորվում է Իրավասու մարմնի նկատմամբ [Որակավորված հայտատուի անունը]-ի ստանձնած Գաղտնիության պահպանման պարտավորությամբ, մասնավորապես Տեխնիկատնտեսական հիմնավորման մեջ պարունակվող Գաղտնի տեղեկատվության օգտագործման և հրապարակման հետ կապված (ինչպես սահմանված է Գաղտնիության պահպանման պարտավորության դրույթով).

(բ) պարտավորվում է չհրապարակել Տեխնիկատնտեսական հիմնավորումը կամ դրա որևէ մասը.

(գ) պարտավորվում է որևէ կերպ կամ եղանակով չտրամադրել կամ չհրապարակել Տեխնիկատնտեսական հիմնավորումը կամ դրա որևէ մասը երրորդ անձանց՝ բացառությամբ այն դեպքերի, որոնք Գաղտնիության պահպանման համաձայն չեն որակվում որպես անօրինական հրապարակում.

(դ) գիտակցում է, որ Տեխնիկատնտեսական հիմնավորման օգտագործման և հրապարակման հետ կապված պարտավորությունների խախտումը (ներառյալ վերոնշյալ (բ) և (գ) կետերում նշված արտավորությունները) կարող են առաջացնել Գաղտնիության պահպանման պարտավորությունում սահմանված պատասխանատվությունը,

(ե) ընդունում է Որակավորված հայտատուի կողմից Տեխնիկատնտեսական հիմնավորման ստացման և ուսումնասիրման վերաբերյալ՝ սույն ՀՆՀ-ի 3.4 կետով սահմանված դրույթները:

[ստորագրություն]

Որպես _____[պաշտոնը] _____[Որակավորված հայտատուի անունը]

Որակավորված հայտատուի Լիազորված անձի (անձանց) կոնտակտային տվյալները

[Հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն]

Առդիրներ

1. Լիազորող փաստաթղթերի պատճենները

ՀԱՎԵԼՎԱԾ 4. ՀԱՅՏԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայտը պետք է բաղկացած լինի երկու (2) մասից, որոնցից յուրաքանչյուրը տեղադրվում է առանձին ներքին ծրարի մեջ, և պետք է պարունակի հետևյալ փաստաթղթերը.

Մաս	Նկարագրություն
Մաս I	**Տեխնիկական առաջարկ,** որը պարունակում է՝
1.1.	**Հայտի ներկայացման գրությունը**՝ ստորև 1-ին բաժնի 1-ին կետի պահանջների համաձայն
1.2.	**Տեխնիկական առաջարկի ձևը**՝ ինչպես պահանջվում է ստորև 1-ին բաժնի 2-րդ կետով
1.3.	**Հայտի ապահովությունը**՝ ինչպես պահանջվում է ստորև 1-ին բաժնի 3-րդ կետով
1.4.	**Շահերի բախման մասին հայտարարություն՝** ինչպես պահանջվում է ստորև 1-ին բաժնի 4-րդ կետով
1.5.	**Ծրագիրն իրականացնող ընկերության բաժնեմասերի բաշխումը՝** ինչպես պահանջվում է ստորև 1-ին բաժնի 5-րդ կետով
Մաս II	**Ֆինանսական առաջարկ,** որը պարունակում է՝
2.1.	**Ֆինանսական առաջարկի ձևը**՝ ինչպես պահանջվում է ստորև 2-րդ բաժնի 1-ին կետով
2.2.	**Ֆինանսական մոդելը**՝ ինչպես պահանջվում է ստորև 2-րդ բաժնի 2-րդ կետով

Եթե սույն Հավելված 4-ով (*Հայտի բովանդակությունը*) այլ կարգավորում նախատեսված չէ, ապա Հայտերը պետք է պատրաստվեն և ձևակերպվեն հետևյալ պահանջներին համապատասխան.

(ա) Հայտի մաս կազմող բոլոր փաստաթղթերը պետք է լինեն «A4» կամ «Letter» ձևաչափով, բացառությամբ այն դեպքերի, երբ Հայտի առանձին մասերը պահանջում են ավելի մեծ ձևաչափ:

(բ) Հայտի շրջանակներում ներկայացված օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով) փաստաթղթերը պետք է պատշաճ կերպով թարգմանվեն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով:

1. Տեխնիկական առաջարկի բովանդակությունը

Յուրաքանչյուր Որակավորված հայտատու պարտավոր է որպես Տեխնիկական առաջարկի մաս ներկայացնել սույն 1-ին բաժնի 1-5 կետերում նշված փաստաթղթերը:

1) Հայտի ներկայացման գրություն

Յուրաքանչյուր Որակավորված հայտատու պետք է ներկայացնի Հայտի ներկայացման գրություն Պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ օգտագործելով սույն փաստաթղթին կից «Ձև Ա»-ն (*Հայտի ներկայացման գրություն*): Հայտի ներկայացման գրությունը պետք է ստորագրվի Որակավորված հայտատուի կողմից:

2) Տեխնիկական առաջարկի ձև

Տեխնիկական առաջարկի ձևը կազմվում է Պաշտոնական լեզուներից որևէ մեկով՝ սույն Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) «Ձև Բ»-ին (*Տեխնիկական առաջարկի ձև*) համապատասխան: Այն պետք է պարունակի Հավելված 5-ում (*Տեխնիկական առաջարկների գնահատում*) ներկայացված Տեխնիկական առաջարկների գնահատման չափանիշներին Որակավորված հայտատուի համապատասխանությունը ցույց տալու համար անհրաժեշտ բոլոր կարևոր տեղեկությունները:

3) Հայտի ապահովումը

Յուրաքանչյուր Որակավորված հայտատու պետք է տրամադրի Հայտի ապահովում 170,000,000 ՀՀ դրամի չափով: Հայտի ապահովումը անկախ, անվերապահ և անվերադարձ բանկային երաշխիք է, որն առաջին իսկ պահանջով վճարվում է Իրավասու մարմնին:

Հայտի ապահովումը տրամադրվում է սույն Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) «Ձև Գ»-ով (*Հայտի ապահովման բովանդակությանը ներկայացվող պահանջներ*) սահմանված պահանջներին համապատասխանող երաշխիքային նամակի տեսքով՝ Հայտի ապահովման տրամադրման համապատասխան համաձայնագրի (համաձայնագրի պատճենի) հետ միասին:

Հայտի ապահովումը չպետք է տրամադրվի Հավելված 7-ի (*Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ*) համաձայն Հուսալի բանկ չհանդիսացող բանկերի կողմից:

Հայտի ապահովումը, որն ի սկզբանե կազմվել (ներկայացվել) է օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով), պետք է ներկայացվի Պաշտոնական լեզուներից որևէ մեկով դրա թարգմանության հետ միասին:

4) Շահերի բախման մասին հայտարարություն

Յուրաքանչյուր Որակավորված հայտատու պետք է ներկայացնի սույն փաստաթղթին կից «Ձև Դ»-ով (*Շահերի բախման մասին հայտարարություն*) պահանջվող ձևով կազմված շահերի բախման մասին գրավոր հայտարարություն (կամ հայտարարություններ, եթե Որակավորված հայտատուն Կոնսորցիում է ներկայացնում) Պաշտոնական լեզուներից որևէ մեկով: Հայտարարությունը պետք է ներկայացվի ցանկացած Շահերի հնարավոր բախման կամ Շահերի իրական բախման հետ կապված, որը Որակավորված հայտատուն (և Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամ՝ Կոնսորցիումի դեպքում) կարող է ունենալ Ընտրության ընթացակարգի, Ծրագրի, Իրավասու մարմնի, Գնահատող հանձնաժողովի կամ Ընտրության ընթացակարգում պաշտոնապես ներգրավված ցանկացած սուբյեկտի կամ անձի հետ:

Եթե Որակավորված հայտատուն Կոնսորցիում է, ապա այն ներկայացնում է (i) շահերի բախման մասին իր հայտարարությունը՝ ստորագրված Առաջատար անդամի կողմից, որը ներառում և վերաբերում է Կոնսորցիումի բոլոր անդամներին (ներառյալ այդ Առաջատար անդամին), և (ii) շահերի բախման մասին Կոնսորցիումի յուրաքանչյուր անդամի հայտարարությունները՝ ստորագրված Կոնսորցիումի համապատասխան անդամի կողմից, որը ներառում և վերաբերում է Կոնսորցիումի յուրաքանչյուր համապատասխան անդամին:

Շահերի բախման մասին ի սկզբանե օտար լեզվով (ոչ նշված Պաշտոնական լեզուներից որևէ մեկով) կազմված (ներկայացված) հայտարարությունը պետք է ներկայացվի Պաշտոնական լեզուներից որևէ մեկով դրա թարգմանության հետ միասին:

5) Ծրագիրն իրականացնող ընկերության բաժնեմասերի բաշխումը

Յուրաքանչյուր Որակավորված հայտատու, որը Կոնսորցիում է, պետք է տրամադրի տեղեկատվություն Ծրագիրին իրականացնող ընկերության բաժնետիրական կապիտալի կառուցվածքի մասին, որը կստեղծվի Պայմանագրի կողմ դառնալու և Ծրագիրն իրականացնելու նպատակով: Բաժնետիրական կապիտալի կառուցվածքը պետք է կազմվի գծապատկերի տեսքով՝ Պաշտոնական լեզուներից որևէ մեկով, ցույց տալով բաժնետիրական կապիտալում մասնաբաժինը (տոկոսներով), որը Ծրագրի ընկերության յուրաքանչյուր բաժնետեր կունենա Ծրագրի ապագա ընկերությունում՝ ՀՆՀ-ի պահանջների (մասնավորապես՝ 8.3.2-8.3.3 կետերով սահմանված պահանջների) համաձայն:

2. Ֆինանսական առաջարկի բովանդակությունը

Յուրաքանչյուր Որակավորված հայտատու պարտավոր է որպես Ֆինանսական առաջարկի մաս ներկայացնել սույն 2-րդ բաժնի 1)-2) կետերում նշված փաստաթղթերը:

1) Ֆինանսական առաջարկի ձև

Ֆինանսական առաջարկը ներառում է Պաշտոնական լեզուներից որևէ մեկով կազմված՝ սույն Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) «Ձև Ե»-ի (*Ֆինանսական առաջարկի ձև*) համաձայն լրացված Ֆինանսական առաջարկի ձևաթուղթը: Այն պետք է պարունակի Հավելված 5 -ում (*Տեխնիկական առաջարկների գնահատում*) ներկայացված Տեխնիկական առաջարկների գնահատման չափանիշներին Որակավորված հայտատուի համապատասխանությունը ցույց տալու համար անհրաժեշտ բոլոր կարևոր տեղեկությունները:

Գումարները Ֆինանսական առաջարկի ձևում պետք է նշվեն ԱՄՆ դոլարով, թվերով և բառերով, երկու (2) տասնորդական միավորի ճշգրտությամբ: Անհամապատասխանության դեպքում կգերակշռի բառերով նշված գումարը:

2) Ֆինանսական մոդել

Որակավորված հայտատուն պետք է ներկայացնի ֆինանսական մոդել, որը ցույց է տալիս Ֆինանսական առաջարկում ներառված վճարների ժամանակացույցը, հիմնավորում է առաջարկվող գին-ծախս կառուցվածքը և ընդգրկում է ՊՄԳ ծրագրի 11 տարի ժամանակահատվածի համար հետևյալ ցուցանիշները.

(ա) Կենսապարբերաշրջանի ծախսերի վերլուծություն նախատեսվող կապիտալ ներդրումների համար (կապիտալ ծախսեր)

(բ) Փոփոխական և հաստատուն գործառնական ծախսերի վերլուծություն ողջ կենսապարբերաշրջանի համար (գործառնական ծախսեր)

(գ) Գնահատված եկամուտներ (ընդհանուր և ըստ ապրանքային կատեգորիաների)

(դ) Սցենարների վերլուծություն (լավագույն / վատագույն սցենարներ), զգայունության վերլուծություն (ներառյալ բոլոր ելակետային տվյալները, ինչպիսիք են ՍԳԻ-ի գնաճը և տոկոսադրույքները, որոնք օգտագործվում են վերլուծության մեջ)

(ե) Ֆինանսական գործակիցներ, համախառն մարժա, գործառնական մարժա, զուտ շահույթի մարժա, ներդրումների շահութաբերություն (ROI), պարտքի և սեփական կապիտալի հարաբերակցություն

(զ) Ելակետային տվյալներ և ենթադրություններ (օրինակ՝ գնաճի մակարդակ, աշխատավարձի դրույքաչափեր և այլն)

Ֆինանսական մոդելը պետք է կազմվի Պաշտոնական լեզուներից որևէ մեկով .xlsx կամ .csv ձևաչափով, առանց թաքնված բանաձևերի կամ ակտիվացված մակրոների:

ՁԵՎ Ա. ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

[ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՀԱՅՏԱՏՈՒԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱԹՂԹԻ ԳԼԽԱԳԻՐ]

Ամսաթիվ՝___ _____ 2024թ.

Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման նպատակով Ընտրության ընթացակարգին մասնակցության Հայտի ներկայացման վերաբերյալ

Ներկայացվում է Գնահատող հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման հետ կապված Ընտրության ընթացակարգի իրականացման նպատակով

[Որակավորված հայտատուի անունը], [կազմակերպաիրավական տեսակը և գրանցման տվյալները] Մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխան ներկայացնում է սույն Հայտը՝ Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման նպատակով անցկացվող Ընտրության ընթացակարգին մասնակցելու համար և խնդրում է ընդունել այս Հայտը գնահատման համար:

[Կոնսորցիումի անդամների Կոնսորցիումի անվանումը] [(«**Կոնսորցիումի անդամ**») / («**Կոնսորցիումի անդամներ**»)] և [Առաջատար անդամի անվանումը] [(«**Առաջատար անդամ**») համաձայնել են պայմանավորվել են միասին համագործակցել Ընտրության ընթացակարգին Առաջատար անդամի մասնակցության հետ կապված, և եթե Կոնսորցիումը ճանաչվի Ընտրության ընթացակարգի հաղթող՝ համատեղ իրականացնել Ծրագիրը և կատարել Պայմանագրի պայմանները:] (*Ներկայացվում է, եթե Որակավորված հայտատուն Կոնսորցիում է*):

[Որակավորված հայտատուի անունը] սույնով.

(ա) հաստատում է, որ կարդացել և ծանոթացել է Մրցութային փաստաթղթերի (ներառյալ Հավելվածները) համար ներկայացված բոլոր պահանջներին և ունի բավարար հնարավորություններ Ընտրության ընթացակարգին մասնակցելու և [Որակավորված հայտատուի անունը] Հաղթող ճանաչվելու դեպքում Պայմանագիրը կնքելու համար,

(բ) պարտվորվում է պահպանել Ընտրության ընթացակարգի կանոնները և Ընտրության ընթացակարգը կարգավորող Կիրառելի օրենքի պահանջները,

(գ) հավաստիացնում և երաշխավորում է, որ Հայտի շրջանակներում ներկայացված բոլոր տեղեկությունները և փաստաթղթերը ճիշտ են, ամբողջական և ճշգրիտ,

(դ) ընդունում է Իրավասու մարմնի կամ Գնահատող հանձնաժողովի իրավունքը՝ (i) պահանջել Հայտը գնահատելու համար հիմնավորված կերպով պահանջվող լրացուցիչ տեղեկատվություն, (ii) փոփոխել կամ պարզաբանել կիրառելի ընթացակարգերն ու կանոնները, և (iii) ՀՆՀ-ով և Կիրառելի օրենքով սահմանված կանոնների համաձայն և կարգով մերժել Հայտը,

(ե) ընդունում է Հայտերի ներկայացման և գնահատման, ինչպես նաև Ընտրության ընթացակարգի արդյունքների որոշման կարգի նկատմամբ Կիրառելի օրենքի բացառիկ կիրառումը:

Հայտի ընդունման դեպքում [Որակավորված հայտատուի անունը] պարտավորվում է.

(ա) հետևել Մրցութային փաստաթղթերի և Կիրառելի օրենքի բոլոր պահանջներին, կանոններին և ընթացակարգերին, որոնք վերաբերում են Հայտի ուսումնասիրմանը, գնահատմանը և Ընտրության արդյունքների որոշմանը,

(բ) ՀՆՀ-ի 4.6.1 պահանջներին համապատասխան պահպանել Հայտի ապահովման վավերականության ժամկետը,

(գ) [Որակավորված հայտատուի անունը]-ի Հաղթող ճանաչվելու դեպքում՝ բարեխղճորեն վերջնական տեսքի բերել և կնքել Պայմանագիրը առանց որևէ վերապահման կամ սահմանափակման, Պայմանագրի շնորհման մասին ծանուցումը ստանալուց հետո հնարվորինս շուտ:

Մինչև Պայմանագրի պատրաստումն ու կնքումը Հայտը, դրա ընդունման վերաբերյալ ձեր գրության և Պայմանագրի շնորհման մասին ծանուցման հետ միասին, կհանդիսանա մեր միջև պարտադիր ուժ ունեցող պայմանագիր:

Մենք գիտակցում ենք, որ Գնահատող հանձնաժողովը պարտավոր չէ ընդունել ստացվող ցանկացած հայտ:

Մենք ընդունում և համաձայնում ենք, որ Իրավասու մարմինը և Գնահատող հանձնաժողովը պատասխանատվություն չեն լրելու սույն Հայտը պատրաստելիս մեր կողմից թույլ տրված սխալների կամ բացթողումների համար, և սույնով մենք անվերապահորեն պարտավորվում ենք այդ կապակցությամբ ամբողջությամբ փոխհատուցել Իրավասու մարմնին և Գնահատող հանձնաժողովին:

Մենք պատասխանատվություն ենք կրում մեր Հայտի պատրաստման և ներկայացման ընթացքում առաջացած ցանկացած ծախսերի և վնասների համար: Կառավարությունը որևէ կերպ պատասխանատվություն չի կրում որևէ այդպիսի ծախս կամ վնաս մեզ փոխհատուցելու համար՝ անկախ Ընտրության ընթացակարգի արդյունքից:

[Ստորագրություն]

Որպես _____[պաշտոնը] _____[Որակավորված հայտատուի անունը]

Լիազորված է ստորագրել Հայտի ներկայացման սույն գրությունը _____ [Որակավորված հայտատուի անունը]-ի անունից

Որակավորված հայտատուի Լիազորված անձի (անձանց) կոնտակտային տվյալները

[Հասցեն, հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստի հասցեն]

ՁԵՎ Բ. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

Ամսաթիվ՝___ _____ 2024թ.

Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման Ծրագրի նպատակով Ընտրության ընթացակարգի վերաբերյալ

Ներկայացվում է Գնահատող հանձնաժողովին Ընտրության ընթացակարգն իրականացնելու համար

[Որակավորված հայտատուի անունը] Մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխան ներկայացնում է սույն Տեխնիկական առաջարկի ձևը Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման նպատակով Ընտրության ընթացակարգին մասնակցելու իր Հայտի շրջանակներում և խնդրում է ընդունել այն:

[Որակավորված հայտատուի անունը]] հաստատում է, որ Տեխնիկական առաջարկի այս ձևում ներկայացված բոլոր տեղեկությունները և հայտարարությունները ճիշտ են և վավեր, և իր վրա է վերցնում սույն Տեխնիկական առաջարկի ձևի՝ Մրցութային փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու հետ կապված բոլոր ռիսկերը, ներառյալ Մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխան մերժումը:

[Որակավորված հայտատուի անունը] հաստատում է, Տեխնիկական առաջարկի այս ձևում ներկայացված որոշ տեղեկություններ և հայտարարություններ կպարտադրեն [Որակավորված հայտատուի անունը] պարտավորություններ, որոնք [Որակավորված հայտատուի անունը]]պետք է կատարի Պայմանագրի պայմանների համաձայն, եթե [Որակավորված հայտատուի անունը] ճանաչվի որպես Ընտրության ընթացակարգի հաղթող:

[Որակավորված հայտատուի անունը] մտադիր է ներգրավել հետևյալ երրորդ անձանց (կապալառուներին)՝ Պայմանագրի շրջանակներում Ծրագիրն իրականացնելու համար, եթե [Որակավորված հայտատուի անունը] դառնում է Ընտրության ընթացակարգի հաղթող. (*առկայության դեպքում ստորև բերված աղյուսակում նշեք կապալառուների վերաբերյալ տեղեկատվությունը*)

No.	**Կապալառուի անվանումը**	**Հասցեն և կոնտակտային տվյալները**	**Պարտականությունների նախատեսվող մասնաբաժինը (%) և կապալառուի կողմից մատուցվելիք ծառայությունների և կատարվելիք աշխատանքների տեսակը**
1			
2			
3			

Տեխնիկական առաջարկի մեր ձևաթղթի բովանդակությունն ու առարկան ներկայացված են ստորև.

[Խնդրում ենք ներկայացնել ձեր կողմից լրացված Տեխնիկական առաջարկի ձևի տեքստը՝ հետևելով ստորև բերված աղյուսակում նշված բովանդակության պահանջներին: Կստուգվի Ձեր կողմից լրացված Տեխնիկական առաջարկի ձևի յուրաքանչյուր բաժնի / կառուցվածքային այլ մասի համապատասխանությունը Հավելված 5 -ում (*Տեխնիկական առաջարկների գնահատում)* նշված Տեխնիկական առաջարկների գնահատման չափանիշներին և պահանջներին]:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ

No.	Բաժին	Ծավալ
1.	**Առաջարկվող ֆիզիկական ենթակառուցվածքների նկարագրությունը**	**Մինչև 5 էջ**
1.1.	Գրանցման (սպասարկման) կենտրոնների աշխարհագրական ցանցի հասանելիությունը	Մինչև 5 էջ
1.2.	Գրանցման կենտրոնների հայեցակարգը / դասավորության և դիզայնի ուղենիշները	
2.	**Առաջարկվող ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի հայեցակարգի նկարագրությունը**	**Մինչև 8 էջ**
2.1.	Առաջարկվող կենսաչափական անձնագրի անվտանգության (պաշտպանվածության) հայեցակարգը	Մինչև 3 էջ
2.2.	Առաջարկվող նույնականացման քարտի հայեցակարգը	Մինչև 5 էջ
2.2.1.	*Նույնականացման քարտի պաշտպանվածության հայեցակարգը*	
2.2.2.	*Նույնականացման քարտի մինի ծրագիր (հավելված կամ ապլետ)*	
2.2.3.	*Նույնականացման քարտի միջանկյալ ծրագիր*	
3.	**Առաջարկվող նույնականացման տվյալների և փաստաթղթերի կառավարման տեղեկատվական համակարգի նկարագրությունը**	**Մինչև 10 էջ**
3.1.	Քաղաքացիների էլեկտրոնային սպասարկման հավելված «Citizen eService» (վեբ պորտալ)	Մինչև 10 էջ
3.2.	Գրանցման լուծում	
3.3.	Նույնականացման տվյալների կառավարման և փաստաթղթերի տրամադրման լուծում	
3.4.	Կենսաչափական տվյալների և փաստաթղթերի գրանցամատյան	
3.5.	Կենսաչափական նույնականացման ավտոմատացված լուծում (ABIS)	
3.6.	Բաց բանալու (կոդի) ենթակառուցվածք	
3.7.	Տեղում հերթերի կառավարման լուծում	
3.8.	Հաշվետվությունների և վիճակագրության լուծում	
3.9.	Արտաքին տվյալների աղբյուրների հետ ինտեգրում	
4.	**Պահանջվող ծառայությունների վերաբերյալ առաջարկվող մոտեցման նկարագրությունը**	**Մինչև 10 էջ**
4.1.	Սպասարկման մակարդակի վերաբերյալ համաձայնագրի (SLA) արդյունավետության հիմնական ցուցանիշները (KPI)	Մինչև 1 էջ
4.1.1.	*Առաջարկվող կառավարման մեխանիզմ*	
4.1.2.	*Նվազագույն մակարդակի սպասարկման առաջարկվող բարելավումներ*	
4.2.	Նախագծման և իրականացման մոտեցում	Մինչև 5 էջ

No.	Բաժին	Ծավալ
4.2.1.	*Ծրագրի պլան*	
4.2.2.	*Ծրագրի նախատեսվող անձնակազմ*	
4.2.3.	*Կոնսորցիումի անդամների և մատակարարների կառուցվածքը և գործառույթները*	
4.3.	Ամբողջական (սկզբից մինչև վերջ, End-to-end) սպասարկման գործողություններ	Մինչև 3 էջ
4.3.1.	*Հաճախորդների սպասարկման որակի վերահսկման միջոցառումներ*	
4.3.2.	*Որակի վերահսկում և անվտանգության միջոցառումներ*	
4.4.	Պայմանագրի ավարտին հանձնման (փոխանցման) մոտեցումը	Մինչև 1 էջ
5.	**Հավելված 1. Տեխնիկական պահանջներին համապատասխանություն [*տե՛ս բովանդակությանը ներկայացվող պահանջները ստորև*]**	Մինչև 4 էջ

[*Տեխնիկական առաջարկի լրացված ձևի հետագա տեքստը՝ վերը նշված բովանդակության պահանջներին համապատասխան*]

Տեխնիկական առաջարկի ձևի Հավելված 1. Տեխնիկական պահանջներին համապատասխանություն: Բովանդակության պահանջներ

2.2. ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

No.	Պարտադիր / կամընտիր	Նկարագրություն	Պահանջը կատարվել է (Այո / Ոչ)	Ապացույց (հղում լրացված Տեխնիկական առաջարկի ձևի տեքստին)
2.2.1. Գրանցման կենտրոններին (սպասարկման կետերին) ներկայացվող պահանջներ				
Պահանջ 1	Պարտադիր	ՀՀ տարածքում գործող սպասարկման կենտրոնների թիվը կսահմանի Ծառայություններ մատուցողը՝ հաշվի առնելով հետևյալ պահանջները. Հայաստանի Հանրապետության աշխարհագրական / վարչական կենտրոններում պետք է տեղակայվի, գործարկվի և պահվի առնվազն տասներկու (12) գրանցման կենտրոն (առնվազն 12 սպասարկման կետ): Երևանում պետք է ստեղծվի երեք (3) կենտրոնացված հաստատություն (Երևանում գործող կենտրոնների թիվը չի կարող գերազանցել երեքը) Ներկայումս գործող գրանցման կենտրոնները ներկայացված են Հավելված 1-ում «Տրված փաստաթղթերի ծավալների, Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանյան ներկայացուցչություններում գործող գրանցման / հաճախորդների սպասարկման կենտրոնների մասին տվյալներ»: Մրցութային գործընթացի ընթացքում ծառայություն մատուցողներիը կհրավիրվեն այցելել այդ օբյեկտները:		
[…]	[…]	[…]		
2.2.2. Անձնական տվյալների գրանցման կենտրոն				
Պահանջ 7	Պարտադիր	Նույնականացման քարտում և անձնագրում անձնական տվյալների ներառումը կիրականացվի Երևանում անձնական տվյալների		

No.	Պարտադիր / կամընտիր	Նկարագրություն	Պահանջը կատարվել է (Այո / Ոչ)	Ապացույց (հղում լրացված Տեխնիկական առաջարկի ձևի տեքստին)
		գրանցման կենտրոնացված հաստատությունում՝ ՀՀ կառավարության կողմից հատկացվող տարածքում: Մրցութային գործընթացի ընթացքում ծառայություն մատուցողներիը կհրավիրվեն այցելել այդ օբյեկտները ՀՀ կառավարության կողմից հատկացվող շենքն ապահովված կլինի. Սարքավորումների տեղադրման և աշխատանքների կատարման համար բավարար տարածքով Էլեկտրահաղորդալարերով, զրահապատ դռներով Պատուհանների ճաղավանդակներով Անընդհատ լուսավորությամբ Ամենամոտ ոստիկանական բաժանմունքին միացված ահազանգման համակարգով		
2.2.3. Տեխնոլոգիական ենթակառուցվածքներին ներկայացվող պահանջներ				
Պահանջ 13	Պարտադիր	Ծառայություններ մատուցողը պետք է ապահովի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ ապարատային բոլոր ենթակառուցվածքները, որոնք բավարարում են հասանելիության բարձր մակարդակի պահանջները (կիրառելի է այս մրցույթի շրջանակներում SS բոլոր լուծումների համար):		
[…]	[…]	[…]		

[*Տեխնիկական առաջարկի ձևի լրացված տեքստի ավարտը*]

[Ստորագրություն]

Որպես _____[պաշտոնը] _____[Որակավորված հայտատուի անունը]
Լիազորված է ստորագրել սույն Տեխնիկական առաջարկի ձևը _____ [Որակավորված հայտատուի անունը]-ի անունից

ՁԵՎ Գ. ՀԱՅՏԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲՈՆՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Հայտի ապահովումն անկախ, անվերապահ և անվերադարձ բանկային երաշխիք է, որն առաջին իսկ պահանջով վճարվում է Իրավասու մարմնին: Հայտի ապահովումը կազմվում է երաշխիքային նամակի և Հայտի ապահովում տրամադրելու վերաբերյալ համապատասխան համաձայնագրի տեսքով և ներկայացվում է որպես Տեխնիկական առաջարկի մաս տեսքով: Հայտի ապահովումը պետք է պարունակի.

(ա) բանկի լրիվ անվանումը և գրանցման տվյալները,

(բ) Հայտի ապահովման գումարը Հայտի ապահովման տրամադրման ամսաթվի դրությամբ, որը պետք է կազմի 170,000,000 ՀՀ դրամ,

(գ) առաջին իսկ պահանջով Իրավասու մարմնին վճարել Հայտի ապահովման գումարը վճարելու՝ բանկի պարտավորությունը

(դ) հաստատում բանկից առ այն, որ տվյալ բանկը սույն ՀՆՀ-ի Հավելված 7 -ի (*Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ*) համաձայն հանդիսանում է Հուսալի բանկ,

(ե) Հայտի ապահովման վավերականության ժամկետը՝ ՀՆՀ-ի 4.6.1 կետի պահանջներին համապատասխան,

(զ) Հայտի ապահովման տրամադրման ամսաթիվը, բանկի լիազորված անձի լրիվ անվանումը և ստորագրությունը:

Երաշխիքային նամակի օրինակելի ձևը ներկայացված է ստորև: Այս օրինակելի ձևը պարտադիր չէ և կարող է օգտագործվել որպես Հայտի ապահովման շրջանակներում երաշխիքային նամակի կազմման ուղեցույց: Ամեն դեպքում, Հայտի ապահովումը պետք է համապատասխանի վերոնշյալ սույն «Ձև Գ»-ով սահմանված բովանդակության պահանջներին:

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՆԱՄԱԿԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎ

[ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՁԵՎԱԹՂԹԻ ԳԼԽԱԳԻՐ]

ԵՐԱՇԽԻՔԱՅԻՆ ՆԱՄԱԿ

Ամսաթիվ՝___ _____ 2024թ.

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը կազմակերպում և իրականացնում է պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր արդար և թափանցիկ մրցակցային ընտրության գործընթացի միջոցով (**«Ընտրության գործընթաց»**) Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման վերաբերյալ (**«Ծրագիր»**): **Այդ նպատակով [ամսաթիվը] ներկայացվել է Ընտրության ընթացակարգն անցկացնելու և Հաղթողին որոշելու համար Հայտերի ներկայացման հրավերը** («ՀՆՀ»**):**

[Որակավորված հայտատուի անունը] (**«Որակավորված հայտատու»**) նախապատրաստել է Ծրագրի Ընտրության ընթացակարգին մասնակցելու իր հայտը (**«Հայտ»**) և դիմել մեզ՝ խնդրելով տրամադրել Հայտի ապահովումը՝ ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան:

Այդ կապակցությամբ, մենք՝ [բանկի անվանումը], [երկիր] օրենսդրությանը համապատասխան ստեղծված և գործող իրավաբանական անձը, որի գրասենյակը գրանցված է [հասցեում] [անհրաժեշտության դեպքում ավելացնել գրանցման այլ տվյալներ] (այսուհետ՝ **«Բանկ»**) սունով անվերապահորեն և անչեղարկելիորեն պարտավորվում ենք առաջին իսկ պահանջով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությանը (**«Իրավասու մարմին»**) վճարել սույն երաշխիքի (**«Հայտի ապահովում»**) տրամադրման ամսաթվի դրությամբ նշված գումարը, այն է՝ 170,000,000 ՀՀ դրամ՝ հետևյալ պայմաններին համապատասխան.

[պայմանների ցանկ]

Մենք հաստատում ենք, որ, մեր բանկը հանդիսանում է Հուսալի բանկ՝ ՀՆՀ-ի պայմանների համաձայն:

Մենք Իրավասու մարմնին կվճարենք Հայտի ապահովման համապատասխան գումարը (կամ դրա մի մասը), որն Իրավասու մարմինը կարող է պահանջել Իրավասու մարմնի պաշտոնական գրավոր պահանջը ստանալուց հետո տասնհինգ (15) օրվա ընթացքում և անկախ Որակավորված հայտատուի կամ ցանկացած այլ կողմի որևէ առարկությունից, պայմանով, որ այդ գումարը չի գերազանցում վերը նշված Հայտի ապահովման ընդհանուր գումարը՝ փոխանցելով այդ գումարը Իրավասու մարմնի կողմից նշված հաշվին:

Իրավասու մարմնի պահանջով կատարված բոլոր վճարումները պետք է ամբողջությամբ զերծ լինեն ընթացիկ կամ ապագա ցանկացած հաշվանցումներից՝ ցանկացած տեսակի հարկերի, տուրքերի վճարումներից կամ ցանկացած բնույթի այլ պահումներից:

Սույն Հայտի ապահովման մեջ պարունակվող պարտավորությունները հանդիսանում են Բանկի ուղղակի և հիմնական պարտավորությունները, անվերապահ են և անչեղարկելի: Մենք չենք ազատվի նշված պարտավորություններից որևէ մեկից կամ բոլորից որևէ բնույթի կամ աղբյուրի պատճառով,

կամ Իրավասու մարմնի կամ երրորդ կողմի անգործության, գործողության կամ գործընթացի պատճառով, որը մեզ կազատի սույն Հայտի ապահովման մեջ նշված պարտավորություններից և պատասխանատվությունից:

Հայտի ապահովումը ուժի մեջ կմնա մինչև և ներառյալ [նշել ամսաթիվը, որը պետք է համապատասխանի ՀՆՀ-ի 4.6.1 կետով սահմանված Հայտի ապահովման վավերականության ժամկետին]:

Սույն Հայտի ապահովումը կարգավորվում և մեկնաբանվում է Կիրառելի օրենքին համապատասխան, իսկ դրա հետ կապված ցանկացած վեճ ենթակա է լուծման Հայաստանի իրավասու մարմինների կողմից և Կիրառելի օրենքին համապատասխան:

Բանկային երաշխիքի պայմանագրի (Հայտի ապահովման պայմանագիր) պատճենը կցվում է սույն նամակին:

Հարգանքներով՝

[ստորագրություն]

[լիազորված ստորագրողի անունը և պաշտոնը]

ՁԵՎ Դ. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

[ՈՐԱԿԱՎՈՐՎԱԾ ՀԱՅՏԱՏՈՒԻ / ԱՌԱՋԱՏԱՐ ԱՆԴԱՄԻ / ԿՈՆՍՈՐՑԻՈՒՄԻ ԱՆԴԱՄԻ ՁԵՎԱԹՂԹԻ ԳԼԽԱԳԻՐ]

Ամսաթիվ՝___ _____ 2024թ.

Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման Ծրագրի նպատակով Ընտրության ընթացակարգի վերաբերյալ

Ներկայացվում է Գնահատող հանձնաժողովին Ընտրության ընթացակարգն իրականացնելու համար

Մենք՝ ներքոստորագրյալներս, [Որակավորված հայտատուի / Առաջատար անդամի / Կոնսորցիումի անդամի անունը] (*անհրաժեշտության դեպքում փեղադրեք*), տեղյակ չենք նախկին կամ գոյություն ունեցող պայմանագրից կամ հարաբերություններից բխող Շահերի հնարավոր բախման կամ Շահերի իրական բախման մասին, որը կարող է էապես ազդել սույն Ծրագրի շրջանակներում Մրցութային փաստաթղթերով նախատեսված մեր պարտավորությունները կատարելու մեր կարողության վրա:

Մասնավորապես, բացի ստորև նշվածից, մենք չունենք նախկին կամ գոյություն ունեցող պայմանագրեր, բանակցություններ կամ հարաբերություններ Իրավասու մարմնի, Գնահատող հանձնաժողովի, նրանց ներկայացուցիչների կամ խորհրդատուների հետ, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Մրցութային փաստաթղթերով սահմանված մեր պարտավորությունները կատարելու կարողության, կամ Ծրագիրն իրականացնող ընկերության՝ Պայմանագրով ստանձնած իր պարտավորությունները կատարելու իր կարողության վրա:

Մենք բացահայտում ենք հետևյալ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք կարող են ունենալ Շահերի հնարավոր կամ իրական բախում Ծրագրի հետ.

Ծրագրի անվանումը	**Մեկնարկի ամսաթիվ**	**Շահերի բախման նկարագրություն**

Հարգանքներով՝

[ստորագրություն]

Որպես _____ [պաշտոնը]

Լիազորված է ստորագրելու Հայտը _____ [Որակավորված հայտատուի անունը] անունից

ՁԵՎ Ե. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

Ամսաթիվ՝___ _____ 2024թ.

Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման նպատակով Ընտրության ընթացակարգին մասնակցության Հայտի ներկայացման վերաբերյալ

Ներկայացվում է Գնահատող հանձնաժողովին՝ Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման հետ կապված Ընտրության ընթացակարգի իրականացման նպատակով

[Որակավորված հայտատուի անունը] Մրցութային փաստաթղթերի պահանջներին համապատասխան ներկայացնում է սույն Ֆինանսական առաջարկի ձևը Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկման և բաշխման, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկման ու սպասարկման նպատակով Ընտրության ընթացակարգին մասնակցելու իր Հայտի շրջանակներում և խնդրում է ընդունել այն:

[Որակավորված հայտատուի անունը] հաստատում է, Ֆինանսական առաջարկի այս ձևում ներկայացված ցուցանիշները և առաջարկները կպարտադրեն [Որակավորված հայտատուի անունը] պարտավորություններ, որոնք [Որակավորված հայտատուի անունը]պետք է կատարի Պայմանագրի պայմանների համաձայն, եթե [Որակավորված հայտատուի անունը] ճանաչվի որպես Ընտրության ընթացակարգի հաղթող:

Մեր Ֆինանսական առաջարկի առարկան ներկայացված է ստորև սույն Ֆինանսական առաջարկի ձևի 1-3 բաժիններում:

1. Առաջարկվող վճարներ[1]. գնահատված ծավալներ

No.	Առարկա	Գնահատված ծավալ[2]		Միավոր փաստաթղթի վճարը, ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և գանձումները)		Ընդհանուր գումարը, ՀՀ դրամ
			Ընդհանուր վճար մեկ միավորի համար (Ա+Բ)	Վճար մեկ դատարկ փաստաթղթի համար (Ա)	Մեկ միավոր ծառայության վճար (Բ)	
1.1	Կենսաչափական անձնագրեր գնահատված ծավալի սահմաններում	2 261 111				

[1] 11 տարի ժամանակահատվածի համար
[2] Գնահատված ծավալը նշված է միայն որպես ուղենիշ և պարտադիր չէ: Վճարները վճարվում են փաստացի թողարկված միավորի հիման վրա՝ հաշվի առնելով ծավալի երաշխիքները և Պայմանագրի նախագծում սահմանված այլ պայմանները

1.2	Կենսաչափական նույնականացման քարտեր գնահատված ծավալի սահմաններում	4 969 450		
			Ընդամենը	

2. Առաջարկվող վճարներ. գնահատված ցուցանիշները գերազանցող ծավալներ

No.	Առարկա	Միավորի վճարը, ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և գանձումները)
2.1	Գնահատված ծավալը գերազանցող ծավալի դեպքում մեկ կենսաչափական անձնագրի համար վճարը	
2.2	Գնահատված ծավալի գերազանցման դեպքում մեկ նույնականացման քարտի համար վճարը	

3. Առաջարկվող այլ վճարներ. ՀՀ դեսպանություններում և արտասահմանյան ներկայացուցչություններում գրանցման կենտրոնների համար

No.	Առարկա	Միավորի վճարը, ՀՀ դրամ (ներառյալ հարկերը և գանձումները)
3.1	1 (մեկ) գրանցման կենտրոնի վճար, ներառյալ տեղակայման և սպասարկման հետ կապված ծախսեր[3]	

[ստորագրություն]

Որպես _____ [պաշտոնը] _____
[Որակավորված հայտատուի անունը]

Լիազորված է ստորագրելու սույն Ֆինանսական առաջարկի ձևը _____
[Որակավորված հայտատուի անունը] անունից

_____

[3] Գինը պետք է նշվի մեկ գրանցման կենտրոնի համար: Իրավասու մարմինը ձեռք կբերի գրանցման լուծումներ միայն գործող սպասարկման կենտրոնների համար: Երբ Պայմանագրի իրականացման ընթացքում նախատեսվում է բացել նոր սպասարկման կենտրոն, կնքվում է լրացուցիչ գնման պատվեր և կիրառվում է սույն առաջարկում նշված միավորի վճարը:

ՀԱՎԵԼՎԱԾ 5. ՀԱՅՏԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

1. Հայտերի գնահատման որակի և արժեքի վրա հիմնված ընտրության մեթոդի հստակեցում

Հայտերը գնահատվելու են հաջորդական կարգով (նախ բացվում և գնահատվում են Տեխնիկական առաջարկները, այնուհետև՝ բացվում և գնահատվում են Ֆինանսական առաջարկները) և ընդհանուր առմամբ (Տեխնիկական և Ֆինանսական առաջարկների գնահատումից հետո Հայտի ընդհանուր գնահատական տալով)՝ հիմնվելով ստորև բերված աղյուսակում ներկայացված տեխնիկական որակի և գնի չափանիշների վրա:

No.	Գնահատման չափանիշներ	Պահանջվող հաստատում	Առավելագույն միավոր	Ֆունկցունալ պարամետրի համեմատական տոկոսը	Հայտի գնահատման մեջ համեմատական տոկոսը
1.	**Տեխնիկական առաջարկի որակը (T)**				**Y = 70**
1.1.	**Ֆիզիկական ենթակառուցվածքների մասով՝ տեխնիկական պահանջներին առաջարկվող մոտեցման համապատասխանությունը, որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը (T_1)**				**Y_1 = 17,5**
1.1.1.	**Գրանցման կենտրոնների** հետ կապված՝ առաջարկվող մոտեցման որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը. 1) **աշխարհագրական ցանցի**, ներառյալ առաջարկվող տեղանքների հասանելիությունը, տարածքների տեսակները 2) Տարբեր կատեգորիայի (օրինակ՝ փոքր, միջին, մեծ, անշարժ, շարժական) գրանցման հաստատությունների (կենտրոնների) **հայեցակարգը / դասավորության և դիզայնի ուղենիշները**, ներառյալ՝ սպասարկման կայաններից յուրաքանչյուրում աշխատատեղերի քանակը	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը)* 1-ին բաժնի 2-րդ կետը	$R_{1, max}$ = 100	L_1 = 0,8	
1.1.2.	Տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը հետևյալի մասով՝ 1) Գրանցման կենտրոններ 2) Անձնական տվյալների գրանցման կենտրոն	Տեխնիկական առաջարկի ձևի Հավելված 1. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին	$R_{2, max}$ = 100	L_2 = 0,2	

No.	Գնահատման չափանիշներ	Պահանջվող հաստատում	Առավելագույն միավոր	Ֆունկցունալ պարամետրի համեմատական տոկոսը	Հայտի գնահատման մեջ համեմատական տոկոսը
	3) Տվյալների կենտրոն և վթարների վերականգնման հանգույց	բաժնի 2) կետը			
1.2.	**Ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթերի մասով՝ տեխնիկական պահանջներին համապատասխանությունը, որակը, անվտանգությունը և զարգանալու (նորարարության) հանձնառությունը (T_2)**				**Y_2 = 17,5**
1.2.1.	**Առաջարկվող կենսաչափական անձնագրի անվտանգության հայեցակարգը.** Կենսաչափական անձնագրի որակը, պաշտպանվածությունը և դիզայնի զարգացման (նորարարության) հանձնառությունը	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{3, max}$ = 100	L_3 = 0,3	
1.2.2.	Անձնագրերի մասով՝ տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը	Տեխնիկական առաջարկի ձևի Հավելված 1. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{4, max}$ = 100	L_4 = 0,2	
1.2.3.	**Առաջարկվող նույնականացման քարտի անվտանգության հայեցակարգը.** 1) Անվտանգության (պաշտպանվածության) հայեցակարգ. Նույնականացման քարտերի որակը, անվտանգությունը և դիզայնի զարգացման (նորարարության) հանձնառությունը	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{5, max}$ = 100	L_5 = 0,1	
1.2.4.	2) Նույնականացման քարտի մինի ծրագիր. առաջարկվող չիպի որակը, անվտանգությունը և զարգացման (նորարարության) հանձնառությունը, պրոդուկտի ճանապարհային քարտեզի (սխեմայի), սպասարկման և սերտիֆիկացման հետ կապված մոտեցումը	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{6, max}$ = 100	L_6 = 0,1	

No.	Գնահատման չափանիշներ	Պահանջվող հաստատում	Առավելագույն միավոր	Ֆունկցունալ պարամետրի համեմատական տոկոսը	Հայտի գնահատման մեջ համեմատական տոկոսը
1.2.5.	3) Միջանկյալ ծրագիր. առաջարկվող միջանկյալ ծրագրի որակը, անվտանգությունը և զարգացման (նորարարության) հանձնառությունը, սպասարկման մոտեցումը	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{7,\ max} = 100$	$L_7 = 0,1$	
1.2.6.	Տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը հետևյալի մասով՝ 1) նույնականացման քարտ 2) նույնականացման քարտի մինի ծրագիր 3) միջանկյալ ծրագիր	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{8,\ max} = 100$	$L_8 = 0,2$	
1.3.	**Նույնականացման տվյալների և փաստաթղթերի կառավարման տեղեկատվական համակարգի մասով՝ տեխնիկական պահանջներին համապատասխանությունը, որակը, անվտանգությունը և զարգանալու (նորարարության) հանձնառությունը (T_3)**				**Y_3 = 17,5**
1.3.1.	**SS ծրագրային, ապարատային և սարքավորումային լուծում.** Տեխնոլոգիական նորարարություններ, ներկայացված լուծումներից օգտվող քաղաքացիներին օգտագործման առավելագույն հարմարավետության ապահովման ապացուցված մոտեցում և SS անվտանգության մոտեցում հետևյալ բաղադրիչների համար. 1. Քաղաքացիների էլեկտրոնային սպասարկման հավելված «Citizen eService» (վեբ պորտալ) 2. Գրանցման լուծում 3. Նույնականացման տվյալների կառավարման և փաստաթղթերի տրամադրման լուծում 4. Կենսաչափական տվյալների և փաստաթղթերի գրանցամատյան 5. Կենսաչափական նույնականացման	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{9,\ max} = 100$	$L_9 = 0,6$	

No.	Գնահատման չափանիշներ	Պահանջվող հաստատում	Առավելագույն միավոր	Ֆունկցունալ պարամետրի համեմատական տոկոսը	Հայտի գնահատման մեջ համեմատական տոկոսը
	ավտոմատացված լուծում (ABIS) 6. Բաց բանալու (կոդի) ենթակառուցվածք 7. Տեղում հերթերի կառավարման լուծում 8. Հաշվետվությունների և վիճակագրության լուծում 9. Արտաքին տվյալների աղբյուրների հետ ինտեգրում				
1.3.2.	Օգտագործողի փորձառության, նորարարության և անվտանգության տեսանկյունից անհրաժեշտ **ցուցադրական սցենարների** իրականացում. 1) Քաղաքացիների էլեկտրոնային սպասարկման հավելված «Citizen eService» (վեբ պորտալ). այցի ամրագրում 2) Քաղաքացիների գրանցում Հայաստանում 3) Քաղաքացիների գրանցում դեսպանատանը 4) Ինքնության ստուգման և վավերացման աշխատանքների ընթացքը ներքին (սերվերային) համակարգում 5) Կենսաչափական տվյալների համապատասխանեցում	Ցուցադրություն. առավել մանրամասն տե՛ս ստորև	$R_{10, max} = 100$	$L_{10} = 0,2$	
1.3.3.	Բոլոր SS ծրագրային, ապարատային և սարքավորումային բաղադրիչների մասով տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը	Տեխնիկական առաջարկի ձևի Հավելված 1. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{11, max} = 100$	$L_{11} = 0,2$	
1.4.	**Պահանջվող ծառայությունների մասով՝ տեխնիկական պահանջներին առաջարկվող մոտեցման համապատասխանությունը, որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը (T_4)**				**Y_4 = 17,5**

No.	Գնահատման չափանիշներ	Պահանջվող հաստատում	Առավելագույն միավոր	Ֆունկցունալ պարամետրի համեմատական տոկոսը	Հայտի գնահատման մեջ համեմատական տոկոսը
1.4.1.	**Սպասարկման մակարդակի վերաբերյալ համաձայնագրեր.** 1) Առաջարկվող կառավարման մեխանիզմ. Արդյունավետության հիմնական ցուցանիշների մոնիթորինգ, անհրաժեշտության դեպքում բարելավման պլանի մոտեցում 2) Նվազագույն մակարդակի սպասարկման առաջարկվող բարելավումներ	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{12, max} = 100$	$L_{12} = 0,2$	
1.4.2.	**Նախագծման և իրականացման** մոտեցման որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը. 1) Ծրագրի պլան 2) Ծրագրի նախատեսվող անձնակազմ 3) Կոնսորցիումի Անդամների և մատակարարների կառուցվածքը և գործառույթները	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{13, max} = 100$	$L_{13} = 0,2$	
1.4.3.	**Գործունեության մոտեցման** որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը. 1) Հաճախորդների սպասարկման որակի վերահսկման միջոցառումներ 2) Գործընթացների, կազմակերպման և անվտանգության միջոցառումների որակի վերահսկում ամբողջ մատակարարման շղթայում (ներառյալ՝ արտադրություն, նյութատեխնիկական միջոցների կառավարում, անհատականացում, լոգիստիկա):	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{14, max} = 100$	$L_{14} = 0,2$	
1.4.4.	**Պայմանագրի ավարտին հանձնման** մոտեցման որակը, ամբողջականությունը և	Տեխնիկական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի	$R_{15, max} = 100$	$L_{15} = 0,2$	

No.	Գնահատման չափանիշներ	Պահանջվող հաստատում	Առավելագույն միավոր	Ֆունկցունալ պարամետրի համեմատական տոկոսը	Հայտի գնահատման մեջ համեմատական տոկոսը
	իրագործելիությունը	(*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը			
1.4.5.	Տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը հետևյալի մասով՝ 1) Սպասարկման մակարդակի վերաբերյալ համաձայնագրեր 2) Նախագծման և իրականացման պահանջներ 3) Ամբողջական սպասարկման գործողությունների պահանջներ 4) Հանձնման պահանջներ	Տեխնիկական առաջարկի ձևի Հավելված 1. S Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետը	$R_{16,\ max} = 100$	$L_{16} = 0,2$	
2.	**Գին (C)**				**X = 30**
2.1.	Կենսաչափական անձնագրերի և կենսաչափական նույնականացման քարտերի առաջարկվող վճարների (և գանձումների) ընդհանուր արժեքը Իրավասու մարմնի կողմից գնահատված ծավալի դեպքում	Ֆինանսական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 2-րդ բաժնի 1) կետը	$C_{1,max} = 100$	$\omega_1 = 0.9$	**X_1 = 27**
2.2.	Մեկ կենսաչափական անձնագրի և մեկ կենսաչափական նույնականացման քարտի համար առաջարկվող վճարների (և գանձումների) գումարը Իրավասու մարմնի կողմից գնահատված ծավալի գերազանցման դեպքում	Ֆինանսական առաջարկի ձև. Տե՛ս Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 2-րդ բաժնի 1) կետը	$C_{2,max} = 100$	$\omega_2 = 0.1$	**X_2 = 3**

1.2. Տեխնիկական առաջարկների գնահատում

Գնահատող հանձնաժողովը Տեխնիկական առաջարկները գնահատում է ստորև Հավելված 5-ի (*Հայտերի գնահատում*) Հավելված Ա-ում ներկայացված յուրաքանչյուր տեխնիկական չափանիշի գնահատման մանրամասն մոտեցմանը համապատասխան: Այն դեպքում, երբ Գնահատող հանձնաժողովի անդամի ներկայացրած գնահատականը 40 և ավելի տոկոսով տարբերվում է Գնահատող հանձնաժողովի մյուս անդամների կողմից տրված գնահատականից, ապա այդպիսի տարբերությամբ գնահատական տվող անդամը պետք է առանձին գրավոր հիմնավորում ներկայացնի Գնահատող հանձնաժողովին այդ միավորը շնորհելու համար:

Հավելված 5-ի (*Հայտերի գնահատում*) 1-ին բաժնում ներկայացված ամփոփիչ աղյուսակում նշված տեխնիկական չափանիշների (T) միավորները կհաշվարկվեն առանձին չափանիշների (T_i) միավորների գումարմամբ.

$$T = \sum_i T_i$$

Տեխնիկական չափանիշների (T_i) միավորները կհաշվարկվեն՝ այս չափանիշի պարամետրերի գնահատականների (P_s) գումարը բազմապատկելով գնահատված տեխնիկական չափանիշի համեմատական տոկոսով (Y_i).

$$T_i = \left(\sum_s P_s \right) \cdot Y_i$$, որտեղ՝

T_i-ն i չափանիշի կշռված ընդհանուր միավորն է

P_s -ը՝ s ֆունկցիոնալ պարամետրի միավորը

Y_i -ը՝ s ֆունկցիոնալ պարամետրի համեմատական տոկոսը

Տեխնիկական չափանիշների (P_s) պարամետրի գնահատումը հաշվարկվելու է՝ (R_s) պարամետրի արժեքը նույն պարամետրի լավագույն արժեքի (R_{max}) հետ համեմատելով և բազմապատկելով այն գնահատված տեխնիկական չափանիշի (L_s) պարամատերի համեմատական տոկոսով.

$P_s = \frac{R_s}{R_{\max}} \times L_s$, որտեղ՝

P_s– ն s ֆունկցիոնալ պարամետրի միավորն է

R_s – ը՝ s ֆունկցիոնալ պարամետրի արժեքը

$R_{\max}$ – ը՝ s ֆունկցիոնալ պարամետրի մասով Որակավորված հայտատուի հավաքած առավելագույն արժեքը

L_s – ը՝ s ֆունկցիոնալ պարամետրի համեմատական տոկոսը

Ցուցադրություն

Գնահատող հանձնաժողովը կկազմակերպի առաջարկվող համակարգի ցուցադրում՝ ստուգելու, թե արդյոք Տեխնիկական առաջարկում նկարագրված ֆունկցիոնալ հնարավորությունները կարող են կիրառվել Որակավորված հայտատուի առաջարկած համակարգում (այսուհետ՝ «**Ցուցադրություն**»):

Ցուցադրությունը կիրականացվի հեռավար կարգով Microsoft Teams ծրագրի միջոցով Տեխնիկական առաջարկների գնահատման վերջնաժամկետի սահմաններում: Ժամի և ամսաթվի համար

առաջարկվող տարբերակները, ինչպես նաև հանդիպման հղումը կուղարկվեն յուրաքանչյուր Որակավորված հայտատուին առանձին՝ Հայտերի ներկայացման վերջնաժամկետից առնվազն երկու (2) շաբաթ առաջ: Ֆունկցիոնալ հնարավորությունների ցուցադրումը պետք է իրականացվի լիովին գործող ցուցադրական միջավայրում (այսինքն՝ տեսագրություն չի կարող ներկայացվել):

Որակավորված հայտատուն պետք նշի, թե Ցուցադրության որ սցենարն է պատրաստվում ցուցադրել: Որակավորված հայտատուն կարող է ընտրել սցենարների և/կամ դրանց քայլերի հերթականությունը, եթե դա թույլ է տալիս ավելի ճշգրիտ և օպերատիվ իրականացնել Ցուցադրությունը՝ պահպանելով և բացահայտելով բուն գործընթացի տրամաբանությունն ու շարունակականությունը:

Ցուցադրական նիստի ընդհանուր տևողությունը պետք է լինի երկու (2) ժամից ոչ ավելի:

Հավելված Ա. Տեխնիկական առաջարկների գնահատման մոտեցում (Հավելված 5-ի (*Հայտերի գնահատում*) կետ 1.2 շարունակ.)

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
1. Ֆիզիկական ենթակառուց-վածքներ	25%	**Գրանցման կենտրոնների** հետ կապված՝ առաջարկվող մոտեցման որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը. 1) **աշխարհագրական ցանցի**, ներառյալ առաջարկվող տեղանքների հասանելիությունը, տարածքների տեսակները 2) Տարբեր կատեգորիայի (օրինակ՝ փոքր, միջին, մեծ, անշարժ, շարժական) գրանցման հաստատությունների (կենտրոնների) **հայեցակարգը / դասավորության և դիզայնի ուղենիշները**, ներառյալ՝ սպասարկման կայաններից յուրաքանչյուրում աշխատատեղերի քանակը	Նկարագրություն **Մինչև 5 էջ**	2.2.1	Գրանցման կենտրոններին վերաբերող առաջարկվող մոտեցման նկարագրությունը ներկայացված է, սակայն բացակայում է հիմնավորումը և ընդամենը / հիմնականում կրկնում է պահանջները: Գրանցման կենտրոնների վերաբերյալ առաջարկվող մոտեցումը շատ ընդհանրական է. Կենտրոնների առաջարկվող աշխարհագրական ցանցը (գտնվելու վայրը, քաղաքացիների համար դրանց հարմարավետությունը և այլն), ինչպես նաև հայեցակարգը / դասավորության և դիզայնի ուղենիշները (ներառյալ յուրաքանչյուր սպասարկման կայանում աշխատատեղերի քանակը) կոնկրետացված չեն և պատշաճ կերպով նկարագրված չեն: Քիչ շեշտադրումներ և ապացույցներ կան տեղանքի և դասավորության առումով օպտիմալ աշխարհագրական մատչելիության և ֆունկցիոնալության ապահովման վերաբերյալ:	1-25	80%	20.0%
					Ներկայացված են գրանցման կենտրոնների առաջարկվող կոնկրետ վայրերը, սակայն բացակայում են յուրաքանչյուր վայրում դիմումների գնահատված ծավալի վրա (աշխատանքային ծանրաբեռնվածության) վրա հիմնված ընտրված մոտեցման մանրամասները, փաստերը / հիմնավորումները: Առաջարկում բացակայում է օպտիմալ աշխարհագրական հասանելիության ապահովման մեխանիզմի հիմնավորումը: Յուրաքանչյուր վայրում հաստատությունների տեսակները (դրանց չափը, տարածքների տեսակը, սեփականությունը և այլն) կոնկրետ նշված չեն: Չկա որևէ ապացույց կամ քիչ են ապացույցները նշված գրանցման կենտրոնի տարածքների առկայության, ըստ նշանակության դրանց համապատասխանության վերաբերյալ՝ հաշվի առնելով աշխատանքային ծանրաբեռնվածությունը և ժողովրդագրական վիճակը: Յուրաքանչյուր տարածքում աշխատատեղերի քանակը ներկայացված է և որոշ չափով հիմնավորված, սակայն բացակայում են մանրամասն հաշվարկներն ու նկատառումները: Նախագծման հայեցակարգը / դասավորության ուղենիշները ընդհանուր են, հաստատությունների տարբեր կատեգորիաները (օրինակ՝ փոքր, միջին, մեծ, անշարժ, շարժական) պատշաճ կերպով հաշվի առնված չեն, բացակայում են առանձնահատկությունները և հաճախորդների սպասարկման բարձր չափանիշներին համապատասխանելու հանձնառությունը:	26-50		
					Առաջարկում ներկայացվում է միջազգային չափանիշների / փորձի, ինչպես նաև տեղական առանձնահատկությունների որոշակի պատկերացման (օրինակ՝ ժողովրդագրական իրավիճակը, անշարժ գույքի վարձակալության շուկան և այլնը հաշվի առնելը) վրա հիմնված գրանցման հաստատությունների ստեղծման հիմնավորված մոտեցում: Հայտատուն ներկայացնում է կոնկրետ վայրեր հաստատությունների համար, ինչպես նաև տեղեկատվություն յուրաքանչյուր տարածքում հաստատության օբյեկտի տեսակի վերաբերյալ: Առաջարկները որոշակիորեն հիմնավորված են, հիմնված ժողովրդագրականիրավիճակի, գնահատված աշխատանքային ծանրաբեռնվածության հաշվարկների վրա:	51-75		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					Ներկայացված է տեղեկատվություն, թե պետական որ հաստատություններն (եթե այդպիսիք կան) են օգտագործվելու, բայց առաջարկը հիմնված է ՀՀ կառավարության կողմից հատկացվող հաստատությունների վրա, մինչդեռ անհրաժեշտ բոլոր օբյեկտների առկայությունը հստակ երաշխավորված / հիմնավորված չէ: Աշխատատեղերի առաջարկվող քանակն արտացոլում է կոնկրետ վայրի և հաստատության գործունեության կարիքների ճշգրիտ պատկերացումը: Բերվում են հիմնավորվումներ՝ բավականին մանրամասն հաշվարկներով: Բարելավման տեղ կա՝ կապված առավել նորարարական և հարմարվողական նկատառումների հետ, որոնք թույլ կտան ծանրաբեռնված շրջանում ճկուն կերպով բավարարել կարիքները: Ներկայացված են յուրաքանչյուր տեսակի (օրինակ՝ փոքր, միջին, մեծ, անշարժ, շարժական) օբյեկտի հայեցակարգը / դասավորությունը և դիզայնի ուղենիշները, դրանք չունեն հաճախորդների բարձր մակարդակի սպասարկման ստանդարտին և/կամ նորարարությանը նպատակաուղղվածություն:			
					Առաջարկը ներկայացնում է գրանցման հաստատությունների տեղաբաշխման և ստեղծման օրինակելի մոտեցում՝ հիմնված գործնական փորձի, պատկերացումների և միջազգայնորեն ճանաչված լավագույն փորձի վրա: Այն նաև շատ լավ արտացոլում է տեղական առանձնահատկությունների մասին պատկերացումը (օրինակ՝ հաշվի է առնում ժողովրդագրական իրավիճակը, անշարժ գույքի վարձակալության շուկան և այլն): Հայտատուն ներկայացնում է հաստատությունների համար կոնկրետ վայրերը և տեղեկատվություն յուրաքանչյուր վայրի համար հաստատության տեսակի, չափերի և կատեգորիայի (օրինակ՝ փոքր, միջին, մեծ, անշարժ, շարժական) վերաբերյալ: Ընտրված վայրերը լավ հիմնավորված են և արտացոլում են դյուրամատչելիության և ժողովրդագրական խտության նկատառումները: Բացի այդ, Հայտատուն տրամադրում է տեղեկություններ, թե արդյոք հաստատությունները վարձակալվելու են, պետական որ օբյեկտներն են (եթե այդպիսք առկա են) օգտագործվելու: Օբյեկտների վարձակալության դեպքում Հայտատուն ներկայացնում է հավաստի ապացույցներ առաջարկվող տարածքների առկայության վերաբերյալ (օրինակ՝ տեղեկատվություն վարձակալության նախնական պարտավորվածությունների կամ հնարավոր այլընտրանքների վերաբերյալ): Աշխատատեղերի առաջարկվող քանակն արտացոլում է կոնկրետ վայրի և հաստատության գործունեության կարիքների ճշգրիտ պատկերացումը: Տրվում են հիմնավորվումներ ժողովրդագրական իրավիճակի, գնահատված ծանրաբեռնվածության վրա հիմնված բավականին մանրամասն հաշվարկներով: Բացի այդ առաջարկում ուրվագծվում է հեռանկարային ռազմավարություն, ներառյալ պահանջարկի փոփոխություններին անդրադառնալու ճկունությունը (օրինակ՝ ծանրաբեռնված ժամանակահատվածում պահանջարկը): Տարբեր չափի և կատեգորիայի յուրաքանչյուր գրանցման կենտրոնի հայեցակարգը / դասավորությունն ու դիզայնի ուղենիշները ներկայացված են մանրամասն նկարագրություններով, որոնք արտացոլում են տարածքի և ռեսուրսների նորարարական օգտագործումը, հաճախորդների սպասարկման բարձր	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					չափանիշների վրա կենտրոնացումը: Առաջարկում ցույց է տրվում յուրաքանչյուր օբյեկտի համար առանձնահատուկ պահանջների ընկալման բարձր մակարդակ (օրինակ՝ տարբերությունները Երևանում և հեռավոր մարզային կենտրոններում) և պարունակում է համապարփակ պլաններ՝ պայմանագրի գործողության ողջ ընթացքում աշխատանքի բարձրագույն չափանիշները պահպանելու համար:			
		Տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը հետևյալի մասով՝ 1) Գրանցման կենտրոններ 2) Անձնական տվյալների գրանցման կենտրոն 3) Տվյալների կենտրոն և վթարների վերականգնման հանգույց	Համապատասխանության աղյուսակ	2.2.	Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր տեխնիկական պահանջներից որոշների կամ բոլորի կատարումն ապահովելու համար: Յուրաքանչյուր պահանջի համար գնահատականը տրվում է ներկայացված հիմնավորումների հիման վրա. - 0՝ որևէ հիմնավորում չի տրվում, - 1՝ տրվում է ձևական հիմնավորում, - 2՝ տրվում է մանրամասն և համապարփակ հիմնավորում: Վերջնական միավորը հաշվվում է համամասնորեն՝ կախված համապատասխան պահանջների քանակից:	1-100	20%	5.0%
2. Ճամփորդական և անձը հաստատող փաստաթղթեր	25%	**Առաջարկվող կենսաչափական անձնագրի անվտանգության հայեցակարգը.** Կենսաչափական անձնագրի որակը, անվտանգությունը և դիզայնի զարգացման (նորարարության) հանձնառությունը	Նկարագրություն **Մինչև 3 էջ**	2.3.1., 2.3.3.	Կենսաչափական անձնագրի նվազագույն պաշտպանվածության հայեցակարգի (անվտանգության առաջարկվող միջոցառումների համադրություն) նկարագրությունը ներկայացված է, սակայն բացակայում է անվտանգության կոնկրետ միջոցի ընտրության հիմնավորումը, ընդամենը / հիմնականում կրկնում է տեխնիկական պահանջները: Չկա նորարարության կամ զարգացման հստակ նշված հանձնառություն կամ այն ընդամենը ձևական բնույթ է կրում, ինչը վկայում է զարգացող տեխնոլոգիաների և ապագայում անվտանգության մարտահրավերների կանխատեսման հնարավոր բացակայության մասին:	1-25	30%	7.5%
					Կենսաչափական անձնագրի առաջարկվող դիզայնը ներառում է անվտանգության բարելավված տարրեր՝ տեխնիկական նվազագույն պահանջների և ոլորտի ստանդարտների համեմատ: Բերվում են անվտանգության միջոցառումների ընտրության որոշ հիմնավորումներ, սակայն չկա հստակություն, թե ինչպես է դրանցիամադրությունն ապահովելու ամենաբարձր մակարդակի պաշտպանվածություն: Ապագայում զարգացման հանձնառության որոշակի հիմնավորում կա, ինչը ցույց է տալիս անվտանգության միջոցառումների արդիականացման պլանների առկայությունը: Կան նոր տեխնոլոգիաների զարգացումներին կամ անվտանգության սպառնալիքներին արձագանքելու որոշակի հեռանկարային պլանների մշակման փաստեր: Սակայն անվտանգության համակարգի արդիականացման և զարգացման պլաններն այնքան էլ կոնկրետ և համապարփակ չեն:	26-50		
					Դիզայնը ներառում է բարձր չափանիշների անվտանգության տարրեր՝ տեխնիկական նվազագույն պահանջների և ոլորտի ստանդարտների համեմատ: Ներկայացված են հիմնավորումներ անվտանգության առաջարկվող միջոցառումների վերաբերյալ՝ ցույց տալով, թե ինչպես է առաջարկվող անվտանգության միջոցառումների համակցությունն ապահովելու ամենաբարձր մակարդակի անվտանգությունը: Հիմնավորումը հիմնված է փորձառության և միջազգային առաջատար մեթոդների վրա: Կա զարգացման հստակ հանձնառություն՝ ապագայում դիզայնի բարելավման և անվտանգության համակարգի արդիականացման	51-75		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					նախանշված ծրագրերով, ներառյալ անվտանգության միջոցառումների արդիականացումը: Տեխնոլոգիաների զարգացման և հնարավոր սպառնալիքների ապագա սցենարների պլանավորումն ակնհայտ է և լավ կառուցված: Նախատեսված է հատուկ մոտեցում կենսաչափական անձնագրերի անվտանգության միջոցառումների զարգացման համար, սակայն առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների որևէ թարմացում իրականացնելու հանձնառություն չկա: Բացի այդ, Հայտատուն պատրաստակամություն է ցուցաբերում կատարել կենսաչափական անձնագրերի թողարկման համար ոչ միայն պարտադիր, այլ նաև որոշ կամընտիր պահանջներ (կամ դրանց համարժեք այլընտրանքները՝ տեխնոլոգիական բարդության և արդյունավետության տեսանկյունից):			
					Կենսաչափական անձնագրերի անվտանգության առաջարկվող հայեցակարգը ցույց է տալիս ոլորտի առավել ժամանակակից մեթոդներին հակվածությունը՝ ցուցադրելով անվտանգության բարձր մակարդակ և բարդ միջոցներ: Առաջարկը պարունակում է անվտանգության ամենաժամանակակից տարրերը, որոնք ակնհայտորեն գերազանցում են նվազագույն տեխնիկական պահանջները՝ ընդգրկուն և մանրամասն հիմնավորումներով, ներառյալ հստակ փաստարկներ պաշտպանության միջոցների ընտրության վերաբերյալ, և թե ինչպես է դրանց համակցությունն ապահովելու ամենաբարձր մակարդակի անվտանգություն: Հիմնավորվումները հիմնված են գործնական փորձի, միջազգային առաջատար մեթոդների և/կամ կոնկրետ օրինակների վրա և հնարավորության դեպքում պարունակում են հղումներ համապատասխան աղբյուրներին: Կա ապագայում զարգացման հստակ հանձնառություն՝ տեխնոլոգիաների կատարելագործման լավ մշակված ռազմավարությամբ, ներառյալ կոնկրետ առաջարկ, թե ինչպես են արդիականացվելու անվտանգության միջոցառումները, այսինքն՝ թարմացման հաճախականությունը, համագործակցությունը կառավարության և այլ որոշում կայացնողների հետ և այլն: Նախաձեռնողական մոտեցման շնորհիվ հստակ ցուցադրվում է ոլորտում առաջատարությունը զարգացող տեխնոլոգիաների, անվտանգության սպառնալիքների կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև օգտատերերի փորձառության առումով: Բացի այդ, Հայտատուն պատրաստակամություն է ցուցաբերում կատարել կենսաչափական անձնագրերի թողարկման համար ոչ միայն պարտադիր, այլ նաև որոշ կամընտիր պահանջներ (կամ դրանց համարժեք այլընտրանքները՝ տեխնոլոգիական բարդության և արդյունավետության տեսանկյունից):	76-100		
		Անձնագրերի մասով՝ տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը	Համապատասխանության աղյուսակ	2.3.1., 2.3.3., 2.3.4., 2.3.6.	Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր տեխնիկական պահանջներից որոշների կամ բոլորի կատարումն ապահովելու համար: Յուրաքանչյուր պահանջի համար գնահատականը տրվում է ներկայացված հիմնավորումների հիման վրա. - 0՝ որևէ հիմնավորում չի տրվում, - 1՝ տրվում է ձևական հիմնավորում, - 2՝ տրվում է մանրամասն և համապարփակ հիմնավորում: Վերջնական միավորը հաշվվում է համամասնորեն՝ կախված համապատասխան պահանջների քանակից:	1-100	20%	5.0%

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր բոլոր տեխնիկական պահանջների և մեկ կամ մի քանի համապատասխան կամընտիր (ընդհանուր 5 կամընտիր պահանջ, լրացուցիչ 2 միավոր յուրաքանչյուր պահանջի համար) տեխնիկական պահանջների կատարումն ապահովելու համար:	102-110		
		Առաջարկվող նույնականացման քարտի հայեցակարգը. 1) Անվտանգության հայեցակարգ. Նույնականացման քարտերի որակը, անվտանգությունը և դիզայնի զարգացման (նորարարության) հանձնառությունը	Նկարագրություն **Մինչև 5 էջ**	2.3.1., 2.3.2.	Նույնականացման քարտի նվազագույն պաշտպանվածության հայեցակարգի (անվտանգության առաջարկվող միջոցառումների համադրություն) նկարագրությունը ներկայացված է, սակայն բացակայում է անվտանգության կոնկրետ միջոցի ընտրության հիմնավորումը, միայն / հիմնականում կրկնում է տեխնիկական պահանջները: Չկա նորարարության կամ զարգացման հստակ նշված հանձնառություն կամ այն ընդամենը ձևական բնույթ է կրում, ինչը վկայում է զարգացող տեխնոլոգիաների և ապագայում անվտանգության մարտահրավերների կանխատեսման հնարավոր բացակայության մասին:	1-25	10%	2.5%
					Նույնականացման քարտի առաջարկվող դիզայնը ներառում է անվտանգության բարելավված տարրեր՝ տեխնիկական նվազագույն պահանջների և ոլորտի ստանդարտների համեմատ: Բերվում են անվտանգության միջոցառումների ընտրության որոշ հիմնավորումներ, սակայն չկա հստակություն, թե ինչպես է դրանցհամադրությունն ապահովելու ամենաբարձր մակարդակի պաշտպանվածություն: Ապագայում զարգացման հանձնառության չափավոր հիմնավորում կա, ինչը ցույց է տալիս անվտանգության միջոցառումների արդիականացման պլանների առկայությունը: Կան նոր տեխնոլոգիաների զարգացումներին կամ անվտանգության սպառնալիքներին արձագանքելու որոշակի հեռանկարային պլանների մշակման փաստեր: Սակայն անվտանգության համակարգի արդիականացման և զարգացման պլաններն այնքան էլ կոնկրետ և համապարփակ չեն:	26-50		
					Դիզայնը ներառում է բարձր չափանիշների անվտանգության տարրեր՝ տեխնիկական նվազագույն պահանջների և ոլորտի ստանդարտների համեմատ: Ներկայացված են հիմնավորումներ անվտանգության առաջարկվող միջոցառումների վերաբերյալ՝ ցույց տալով, թե ինչպես է առաջարկվող անվտանգության միջոցառումների համակցությունն ապահովելու ամենաբարձր մակարդակի անվտանգությունը: Հիմնավորումը հիմնված է փորձառության և միջազգային առաջատար մեթոդների վրա: Կա զարգացման հստակ հանձնառություն՝ ապագայում դիզայնի բարելավման և անվտանգության համակարգի արդիականացման նախանշված ծրագրերով, ներառյալ անվտանգության միջոցառումների արդիականացումը: Տեխնոլոգիաների զարգացման և հնարավոր սպառնալիքների ապագա սցենարների պլանավորումն ակնհայտ է և լավ կառուցված: Նախատեսված է հատուկ մոտեցում նույնականացման քարտերի անվտանգության միջոցառումների զարգացման համար, սակայն առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների որևէ թարմացում իրականացնելու հանձնառություն չկա:	51-75		
					Նույնականացման քարտերի անվտանգության առաջարկվող հայեցակարգը գերազանցում է ոլորտի ստանդարտներից՝ ցուցադրելով անվտանգության գերազանց մակարդակ և բարդ	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					միջոցներ: Առաջարկը պարունակում է անվտանգության ամենաժամանակակից տարրերը, որոնք ակնհայտորեն գերազանցում են նվազագույն տեխնիկական պահանջները՝ ընդգրկուն և մանրամասն հիմնավորումներով, ներառյալ հստակ փաստարկներ պաշտպանության միջոցների ընտրության վերաբերյալ, և թե ինչպես է դրանց համակցությունն ապահովելու ամենաբարձր մակարդակի անվտանգություն: Հիմնավորվումները հիմնված են գործնական փորձի, միջազգային առաջատար մեթոդների և/ կոնկրետ օրինակների վրա և հնարավորության դեպքում պարունակում են հղումներ համապատասխան աղբյուրներին: Կա ապագայում զարգացման հստակ հանձնառություն՝ տեխնոլոգիաների կատարելագործման լավ մշակված ռազմավարությամբ, ներառյալ կոնկրետ առաջարկ, թե ինչպես են արդիականացվելու անվտանգության միջոցառումները, այսինքն՝ թարմացման հաճախականությունը, համագործակցությունը կառավարության և այլ որոշում կայացնողների հետ և այլն: Նախաձեռնողական մոտեցման շնորհիվ հստակ ցուցադրվում է ոլորտում առաջատարությունը զարգացող տեխնոլոգիաների, անվտանգության սպառնալիքների կանխարգելիչ միջոցառումներ, ինչպես նաև օգտատերերի փորձառության առումով: Նախատեսված է կենսաչափական անձնագրերի անվտանգության համակարգի զարգացման հատուկ մոտեցում, այդ թվում՝ առանց փոփոխություն կատարելու լրացուցիչ հանձնարարականների պարբերական որոշ թարմացումներ կատարելու հանձնառությունը:			
		2) Նույնականացման քարտի մինի ծրագիր. առաջարկվող չիպի որակը, անվտանգությունը և զարգացման (նորարարության) հանձնառությունը, պրոդուկտի ճանապարհային քարտեզի, սպասարկման և սերտիֆիկացման հետ կապված մոտեցումը		2.3.5.	Նույնականացման քարտի մինի ծրագրի որակի և անվտանգության նկարագրությունը չունի հիմնավորում և ընդամենը / հիմնականում կրկնում է տեխնիկական պահանջները: Առաջարկվող չիպն ունի որակի և անվտանգության հիմնական տարրեր, հետագա զարգացման կամ նորարարության վերաբերյալ պլանները հստակ չեն կամ սահմանված չեն: Պրոդուկտի ճանապարհային քարտեզի, սպասարկման և սերտիֆիկացման հետ կապված մոտեցումն անորոշ է և ոչ կոնկրետ:	1-25	10%	2.5%
					Չիպը ներառում է որակի և անվտանգության բարելավված տարրեր՝ տեխնիկական նվազագույն պահանջների և ոլորտի ստանդարտների համեմատ: Առաջարկը պարունակում է ցուցումներ հզորության բարելավման, աշխատանքի արագության և երկարակեցության վերաբերյալ, սակայն մանրամասներ և ապացույցներ չի պարունակում: Ապագայում զարգացման հանձնառության չափավոր հիմնավորում կա, ինչը ցույց է տալիս չիպերի արդիականացման պլանների առկայությունը: Կան նոր տեխնոլոգիաների զարգացումներին կամ անվտանգության սպառնալիքներին արձագանքելու որոշակի հեռանկարային պլանների մշակման փաստեր, սակայն այդ պլաններն այնքան էլ կոնկրետ և համապարփակ չեն: Պրոդուկտի ճանապարհային քարտեզի, սպասարկման և սերտիֆիկացման հետ կապված պլանները պատշաճ կերպով մշակված են՝ որոշակի պատկերացում տալով ժամկետների և գործընթացների մասին, որոնք հիմնված են ոլորտին բնորոշ մոտեցման վրա:	26-50		
					Չիպը բարձրորակ է, ունի պաշտպանության ժամանակակից միջոցներ, որոնք արդարացված են միջազգայնորեն ճանաչված լավագույն փորձով: Ներկայացվում է նույնականացման քարտի	51-75		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					հզորության, աշխատանքի արագության և երկարակեցության բարելավման հանձնառությունը ապացույցների և հիմնավորումների հետ միասին: Հիմնավորումները հիմնված են փորձառության և միջազգային առաջատար մեթոդների վրա: Առկա է նորարարության և հետագա զարգացման մոտեցումը, որն արտացոլված է պրոդուկտի մանրամասն ճանապարհային քարտեզում, ներառյալ թարմացումների հաճախականությունը և աշխատանքի վերաբերյալ որոշ մանրամասներ: Այդուհանդերձ, առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների որևէ թարմացում իրականացնելու հանձնառություն չկա: Սպասարկման և սերտիֆիկացման գործընթացը լավ կառուցված է և համապատասխանեցված միջազգային ստանդարտներին, որոնք ապահովում են պրոդուկտի կայունությունն ու երկարակեցությունը:			
					Առաջարկվող չիպն առանձնանում է բացառիկ որակով, բարձր ճշգրտության և տվյալների տարողունակությամբ՝ անձնական տեղեկատվության, կենսաչափական և այլ անհրաժեշտ տվյալների ճգրիտ պահպանման և մշակման համար, ինչպես նաև մշակման բարձր արագությամբ: Ապլետը դիմացկուն է և պատրաստված է բարձրորակ նյութերից՝ երկարակեցություն ապահովելու և վնասներին դիմակայելու համար: Առաջարկում նկարագրվում է անվտանգության ուժեղ բաղադրիչները, ներառյալ տվյալների պաշտպանության համար գաղտնագրման և գաղտնազերծման առաջադեմ տեխնիկայի կիրառումն ապահովելու կարողությունը: Ներկայացված է նորարարական զարգացման հանձնառությունը, որը գերազանցում է ոլորտի ընդունված ստանդարտները, ներառյալ թարմացումների հաճախականությունը և պարբերական թարմացումների ապահովման հանձնառությունը՝ առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների: Պրոդուկտի ճանապարհային քարտեզը ներկայացված է մանրամասն և ռազմավարական բնույթ ունի, նախատեսում է հետագա զարգացումներ՝ միևնույն ժամանակ պահպանելով պրոդուկտի օպտիմալ վիճակը: Բերվում են գործնական կիրառության և միջազգայնորեն ճանաչված մեթոդների վրա հիմնված կոնկրետ և սպառիչ հիմնավորումներ: Տեխնիկական սպասարկման և սերտիֆիկացման գործընթացները համապարփակ են և հեռանկարային, սահմանում են ուղենիշներ ոլորտի համար: Ապլետի համար պահանջվում է նվազագույն սպասարկում կամ ընդհանրապես սպասարկում չի պահանջվում, այն համապատասխանում է համաշխարհային և տեղական խիստ ստանդարտներին, որպեսզի ապահովի դրա համապատասխանությունը արդյունավետության, անվտանգության և հուսալիության ամենաբարձր չափանիշներին:	76-100		
		3) Միջանկյալ ծրագիր. առաջարկվող միջանկյալ ծրագրի որակը, անվտանգությունը և զարգացման (նորարարության) հանձնառությունը, սպասարկման մոտեցումը		2.3.7.	Նույնականացման քարտի միջանկյալ ծրագրի որակի և անվտանգության նկարագրությունը չունի հիմնավորում և ընդամենը / հիմնականում կրկնում է տեխնիկական պահանջները: Առաջարկվող միջանկյալ ծրագիրն ունի որակի և անվտանգության հիմնական տարրեր, հետագա զարգացման կամ նորարարության վերաբերյալ պլանները հստակ չեն կամ սահմանված չեն: Պրոդուկտի ճանապարհային քարտեզի, սպասարկման և սերտիֆիկացման հետ կապված մոտեցումն անորոշ է և թերի, այն ցույց է տալիս ճանաչված չափանիշներին կամ առաջատար	1-25	10%	2.5%

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					փորձին նվազագույն համապատասխանություն կամ իսպառ բացակայություն:			
					Առաջարկվող միջանկյալ ծրագիրն ունի որակի և անվտանգության բարելավված տարրեր՝ տեխնիկական նվազագույն պահանջների և ոլորտի ստանդարտների համեմատ: Առաջարկը պարունակում է ցուցումներ հզորության բարելավման, աշխատանքի արագության և ֆունկցիոնալ հնարավորությունների վերաբերյալ, սակայն մանրամասներ և ապացույցներ չի պարունակում: Ապագայում զարգացման հանձնառության չափավոր հիմնավորում կա, ինչը ցույց է տալիս միջանկյալ ծրագրերի արդիականացման պլանների առկայությունը: Կան նոր տեխնոլոգիաների զարգացումներին կամ անվտանգության սպառնալիքներին արձագանքելու որոշակի հեռանկարային պլանների մշակման փաստեր, սակայն այդ պլաններն այնքան էլ կոնկրետ և համապարփակ չեն: Պրոդուկտի ճանապարհային քարտեզի, սպասարկման և սերտիֆիկացման հետ կապված պլանները պատշաճ կերպով մշակված են՝ որոշակի պատկերացում տալով ժամկետների և գործընթացների մասին, որոնք հիմնված են ոլորտին բնորոշ մոտեցման վրա:	26-50		
					Առաջարկվող միջանկյալ ծրագիրը բարձր որակ է դրսևորում, ունի պաշտպանության ժամանակակից միջոցներ, որոնք արդարացված են միջազգայնորեն ճանաչված լավագույն փորձով: Ապացույցների և հիմնավորումների հետ միասին ներկայացվում է դրա համատեղելիության, աշխատանքի արագության և ֆունկցիոնալ հնարավորությունների բարելավման հանձնառությունը: Առկա է նորարարության և հետագա զարգացման մոտեցումը, որն արտացոլված է պրոդուկտի մանրամասն ճանապարհային քարտեզում, ներառյալ թարմացումների հաճախականությունը և աշխատանքի վերաբերյալ որոշ մանրամասներ: Ներկայացվում են փորձառության և առաջատար մեթոդների վրա հիմնված բավականին կոնկրետ հիմնավորումներ: Այդուհանդերձ, առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների որևէ թարմացում իրականացնելու հանձնառություն չկա: Սպասարկման և սերտիֆիկացման գործընթացը լավ կառուցված է և համապատասխանեցված միջազգային ստանդարտներին, որոնք ապահովում են պրոդուկտի դիմակայունությունն ու երկարակեցությունը:	51-75		
					Առաջարկվող միջանկյալ ծրագիրն առանձնանում է բացառիկ որակով, տարբեր օպերացիոն համակարգերի, սարքերի, բրաուզերների և հավելվածների հետ բարձր համատեղելիությամբ, մշակման բարձր արագությամբ, ինչը հեշտացնում է նույնականացման քարտից տվյալների արագ դուրս բերումը և գործարքները: Այն ունի նաև առաջադեմ ֆունկցիաներ, ներառյալ ընթերցելու և գրելու, գաղտնագրելու և վերծանելու, ինչպես նաև տարբեր տվյալների բազաների կամ հավելվածների հետ կապելու հնարավորություններ: Առաջարկն ընդգծում է անվտանգության ուժեղ բաղադրիչները, ներառյալ գաղտնագրման առավել առաջադեմ ստանդարտները և պրոտոկոլները՝ տվյալների արտահոսքը և չարտոնված մուտքը կանխարգելելու համար:	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					Անվտանգության միջոցների հիմնավորումը համապարփակ է և կոնկրետ: Ներկայացված է նորարարական զարգացման հանձնառությունը, որը գերազանցում է ոլորտի ընդունված ստանդարտները, ներառյալ թարմացումների հաճախականությունը և պարբերական թարմացումների ապահովման հանձնառությունը՝ առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների: Պրոդուկտի ճանապարհային քարտեզը ներկայացված է մանրամասն և ռազմավարական բնույթ ունի, նախատեսում է հետագա զարգացումներ՝ միևնույն ժամանակ պահպանելով պրոդուկտի օպտիմալ վիճակը: Բերվում են գործնական կիրառության և միջազգայնորեն ճանաչված մեթոդների վրա հիմնված համապարփակ հիմնավորումներ: Պրոդուկտի ճանապարհային քարտեզը և տեխնիկական սպասարկման գործընթացները համապարփակ են և հեռանկարային, սահմանում են ուղենիշներ ոլորտի համար: Հայտատուն առաջարկում է հուսալի տեխնիկական աջակցություն և կանոնավոր սպասարկում՝ ապահովելու, որ միջանկյալ ծրագիրը կշարունակի օպտիմալ աշխատել՝ նվազագույն դադարով: Միջանկյալ ծրագիրը նաև համապատասխանում է համաշխարհային և տեղական խիստ ստանդարտներին, որպեսզի ապահովի դրա համապատասխանությունը արդյունավետության, անվտանգության և հուսալիության ամենաբարձր չափանիշներին:			
		Տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը հետևյալի մասով՝ 1) նույնականացման քարտ 2) նույնականացման քարտի մինի ծրագիր 3) միջանկյալ ծրագիր	Համապատասխանության աղյուսակ	2.3.2., 2.3.5., 2.3.7.	Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր տեխնիկական պահանջներից որոշների կամ բոլորի կատարումն ապահովելու համար: Յուրաքանչյուր պահանջի համար գնահատականը տրվում է ներկայացված հիմնավորումների հիման վրա. - 0՝ որևէ հիմնավորում չի տրվում, - 1՝ տրվում է ձևական հիմնավորում, - 2՝ տրվում է մանրամասն և համապարփակ հիմնավորում: Վերջնական միավորը հաշվվում է համամասնորեն՝ կախված համապատասխան պահանջների քանակից:	1-100	20%	5.0%
3. Նույնականացման տվյալների և փաստաթղթերի կառավարման տեղեկատվական համակարգ	25%	**SS ծրագրային, ապարատային և սարքավորումային լուծում.** Տեխնոլոգիական նորարարություններ, ներկայացված լուծումներից օգտվող քաղաքացիներին օգտագործման առավելագույն հարմարավետության ապահովման ապացուցված մոտեցում և SS անվտանգության մոտեցում հետևյալ բաղադրիչների համար. 1. Քաղաքացիների էլեկտրոնային սպասարկման հավելված «Citizen eService» (վեբ պորտալ) 2. Գրանցման լուծում 3. Նույնականացման տվյալների կառավարման և փաստաթղթերի տրամադրման լուծում 4. Կենսաչափական տվյալների և փաստաթղթերի գրանցամատյան	Նկարագրություն **Մինչև 10 էջ**	2.4.	Առաջարկվող SS գործնականում չի ցուցադրում տեխնոլոգիական նորարարություններ կամ դրանք քիչ են, այն պարունակում է միայն ապարատային, ծրագրային ապահովման և սարքավորումների ընդհանուր նկարագրություններ: Պրոդուկտի վերաբերյալ ոչ մի հստակեցում (ներառյալ, թե կոնկրետ ինչ SS ծրագրակազմ, ապարատային և սարքավորումներ լուծումներ են օգտագործվելու, ինչպես նաև պահանջվող քանակը) չի ներկայացվում՝ առանց հիմնավորելու, թե որքանով են դրանք համապատասխանում տեխնիկական պահանջներին: Կարծես թե նվազագույն մոտեցում է ցուցաբերվում օգտատերերի համար հարմարավետության և SS անվտանգության ապահովման համար, կիրառվում է ընդհանուր մեթոդը՝ առանց հստակ վկայակոչելով ոլորտի միտումները կամ ստանդարտները:	1-25	60%	15%
					Առաջարկվող SS լուծումը ցույց է տալիս տեխնոլոգիական նորարարության որոշ վկայություններ՝ ապարատային, ծրագրային ապահովման և սարքավորումների որոշակի նկարագրությամբ, որոնք բավականին սահմանափակ են: Ներկայացվում են պրոդուկտի տեխնիկական բնութագրերն ու համարները՝ որոշ հիմնավորումներով, սակայն բավականին սահմանափակ են: Առաջարկվող ծրագրային, ապարատային և սարքավորումային	26-50		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
		5. Կենսաչափական նույնականացման ավտոմատացված լուծում (ABIS) 6. Բաց բանալու (կոդի) ենթակառուցվածք 7. Տեղում հերթերի կառավարման լուծում 8. Հաշվետվությունների և վիճակագրության լուծում 9. Արտաքին տվյալների աղբյուրների հետ ինտեգրում			լուծումները հիմնված չեն առաջատար տեխնոլոգիաների վրա և/կամ բավարար չափով հիմնավորված չեն: Օգտատերերի հարմարավետության ապահովման մոտեցումն ընդունելի է, և SS անվտանգության պլանը համապատասխանում է ոլորտի ստանդարտներին: Այդուհանդերձ, այն չունի ապագա կատարելագործման կամ զարգացման միտումներին հարմարվելու նախաձեռնողական ռազմավարություն:			
					Առաջարկվող SS լուծումը լավ մշակված է և ունի տեխնոլոգիական նորարարության հստակ նշաններ: Ապարատային, ծրագրային ապահովման և սարքավորումների բնութագրերը և համարները ներկայացված են և լավ հիմնավորված: Առաջարկվող տեխնոլոգիաները առաջադեմ են, և հիմնավորումներն այն մասին, թե ինչպես են դրանք համապատասխանում կամ գերազանցում տեխնիկական պահանջներին՝ մանրամասն են և հիմնված գործնական կիրառության և միջազգային առաջատար փորձի վրա: Հատուկ ուշադրություն է դարձվում օգտատերերի համար հարմարավետության և SS անվտանգության համապարփակ միջոցառումների ապահովմանը: Հետագա բարելավումների հակվածությունը, ներառյալ աջակցությունը, սպասարկումը և SS լուծումների թարմացման հաճախականությունը ակնհայտ է ռազմավարական պլանավորման մեջ, որը հիմնված է տեխնոլոգիական կանխատեսումների և ոլորտի միտումների վրա: Այդուհանդերձ, առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների որևէ թարմացում իրականացնելու հանձնառություն չկա:	51-75		
					Առաջարկվող SS լուծումն առանձնանում է տեխնոլոգիական նորարարություններով՝ առաջարկվող ապարատային, ծրագրային ապահովման և սարքավորումների մանրամասն բնութագրերով, ինչպես նաև կոնկրետ օրինակների, գործնական կիրառության և առաջատար փորձի վրա հիմնված ծավալուն հաշվարկներով և հիմնավորումներով: Առաջարկվող տեխնոլոգիաները ներառում են ամենաժամանակակից ապարատային, ծրագրային ապահովումը և սարքավորումները և մանրամասն հիմնավորումների հիման վրա ակնհայտորեն գերազանցում են նվազագույն տեխնիկական պահանջները: Օգտատերերի համար հարմարավետության ապահովման մոտեցումը բացառիկ է: Այն կենտրոնանում է ինտուիտիվ, օգտագործողի համար հարմար ինտերֆեյսերի և համակարգերի վրա: SS անվտանգության մոտեցումը բացառիկ է, կանխատեսում է ապագա սպառնալիքները և համապատասխանում է ոլորտի ամենախիստ չափանիշներին: Կա զարգացող միտումներին շարունակաբար հարմարվելու և ոլորտում առաջատարությունը պահպանելու համար ռազմավարական պլանի մշակման հստակ փաստեր: Հատուկ մոտեցում է ցուցաբերվում SS լուծման աջակցության, սպասարկման և թարմացման նկատմամբ, ներառյալ որոշակի պարբերական թարմացումներ ապահովելու հանձնառությունը՝ առանց փոփոխություններ կատարելու լրացուցիչ հանձնարարականների:	76-100		
		Օգտագործողի փորձառության, նորարարության և անվտանգության տեսանկյունից անհրաժեշտ **ցուցադրական սցենարների**	Ցուցադրությունը	Ինչպես նշված է 1.2 կետում	Ցուցադրությունը չի ներառում անհրաժեշտ բոլոր սցենարները, համակարգը գործում է հիմնական մակարդակում՝ ցուցադրելով միայն հիմնական ֆունկցիոնալ հնարավորությունները: Օգտատերերի համար հարմարավետության ապահովման մակարդակը ցածր է, նվազագույն ջանքեր են գործադրվել	1-25	20%	5%

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
		իրականացում. 1) Քաղաքացիների էլեկտրոնային սպասարկման հավելված «Citizen eService» (վեբ պորտալ). այցի ամրագրում 2) Քաղաքացիների գրանցում Հայաստանում 3) Քաղաքացիների գրանցում դեսպանատանը 4) Ինքնության ստուգման և վավերացման աշխատանքների ընթացքը ներքին (սերվերային) համակարգում 5) Կենսաչափական տվյալների համապատասխանեցում			ինտուիտիվ և օգտագործողի համար հարմար ինտերֆեյս մշակելու համար: Անվտանգության պրոտոկոլները բազային են և կարող են խոցելի դառնալ, ինչը ցույց է տալիս կազմակերպությունների կողմից ռիսկերի կառավարման անբավարար ջանքերը: Գրեթե ոչ մի նորարարություն ներկայացված չէ, ինչը ենթադրում է ապագայում հաջողության երաշխիքների բացակայություն: Ցուցադրման ընթացքում առաջադրանքների կատարման ընթացքն անկազմակերպ է և իրար հետ չկապված, ինչը վկայում է աշխատանքի վատ կառավարման մասին:			
					Համակարգի ցուցադրումը պատշաճ կերպով ընդգրկում է պահանջվող սցենարների մեծ մասը: Օգտագործողի համար հարմարավետությունը պատշաճ ապահովվում է, ինչը ցույց է տալիս օգտագործման պարզության և հարմարավետության վրա ուշադրությունը, սակայն բարելավումների տեղ կա: Ներկայացված անվտանգության երաշխիքները ոլորտում կիրառվող ստանդարտ են, բայց ոչ արտառոց, ինչը ցույց է տալիս ռիսկերի կառավարման միջակ համակարգ: Համակարգն առաջարկում է տալիս համեստ նորամուծություններ, այնուամենայնիվ, սցենարների շրջանակում քայլերը սահուն չեն, հնարավոր է, որ մի գործընթացից մյուսը փոքր թռիչքներ լինեն, ինչը ցույց է տալիս գործընթացների ավելի լավ հաջորդականության և կազմակերպման անհրաժեշտությունը:	26-50		
					Համակարգի ցուցադրությունն իրականացվում է բարձր մակարդակով՝ համակողմանիորեն ցուցադրելով բոլոր անհրաժեշտ սցենարները: Համակարգն առաջարկում է օգտագործողի համար հարմարավետ ներկայացվածություն՝ լավ մշակված ինտերֆեյսով և տեխնոլոգիական սխեմայով: Անվտանգության միջոցառումները կրում են համալիր բնույթ, ինչը վկայումէ ռիսկերի կառավարման աննկուն հանձնառության մասին: Ակնհայտ նորարարական բաղադրիչները հուշում են հեռանկարային մոտեցման մասին: Այդուհանդերձ, տեխնոլոգիական սխեմայում կարող են ի հայտ գալ աննշան խախտումներ, ինչը ենթադրում է գործընթացի որոշակի բարելավման անհրաժեշտություն: Բացի այդ, Հայտատուն պատրաստակամություն է ցուցաբերում կատարել SS ծրագրային, ապարատային և սարքավորումային բաղադրիչների համար ոչ միայն պարտադիր, այլ նաև որոշ կամընտիր պահանջներ:	51-75		
					Համակարգի ցուցադրումը բացառիկ է, այն գերազանցում է սցենարների հիմնական պահանջները: Օգտագործողի համար հարմարավետության ապահովումն օրինակելի է, ինչը ցույց է տալիս օգտատերերի կարիքների, գերադասության և վարվեցողության խորը ընկալման մասին: Համակարգն ունի անվտանգության համապարփակ պրոտոկոլներ, որոնք առաջարկում են ռիսկերի կառավարման բարձրակարգ համակարգ: Համակարգի ցուցադրությունը ցույց է տալիս բազմաթիվ ֆունկցիաներում և դիզայնում տարբերվող նորարարություն: Յուրաքանչյուր սցենարի շրջանակներում քայլերն ունեն սահուն հոսք՝ ցուցադրելով գործընթացի անթերի անցումը և կառավարումը: Սա վկայում է ոլորտում առաջատարության և տեխնիկական գերազանցության մասին: Բացի այդ, Հայտատուն պատրաստակամություն է ցուցաբերում կատարել SS ծրագրային, ապարատային և սարքավորումային բաղադրիչների համար ոչ միայն պարտադիր, այլ նաև որոշ կամընտիր պահանջներ:	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
		Բոլոր ՏՏ ծրագրային, ապարատային և սարքավորումային բաղադրիչների մասով տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը	Համապատասխանության աղյուսակ	2.4.	Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր տեխնիկական պահանջներից որոշների կամ բոլորի կատարումն ապահովելու համար: Յուրաքանչյուր պահանջի համար գնահատականը տրվում է ներկայացված հիմնավորումների հիման վրա. - 0՝ որևէ հիմնավորում չի տրվում, - 1՝ տրվում է ձևական հիմնավորում, - 2՝ տրվում է մանրամասն և համապարփակ հիմնավորում: Վերջնական միավորը հաշվվում է համամասնորեն՝ կախված համապատասխան պահանջների քանակից:	1-100	20%	5%
					Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր բոլոր տեխնիկական պահանջների և մեկ կամ մի քանի համապատասխան կամընտիր (ընդհանուր 3 կամընտիր պահանջ, լրացուցիչ 3 միավոր յուրաքանչյուր պահանջի համար) տեխնիկական պահանջների կատարումն ապահովելու համար:	102-109		
4. Պահանջվող ծառայություններ	25%	**Սպասարկման մակարդակի վերաբերյալ համաձայնագրեր.** 1) Առաջարկվող կառավարման մեխանիզմ. Արդյունավետության հիմնական ցուցանիշների մոնիթորինգ, անհրաժեշտության դեպքում բարելավման պլանի մոտեցում 2) Նվազագույն մակարդակի սպասարկման առաջարկվող բարելավումներ	Նկարագրություն **Մինչև 1 էջ**	2.5.	Առաջարկը ընդամենը / հիմնականում կրկնում է տեխնիկական պահանջները և չի առաջարկում արդյունավետության հիմնական ցուցանիշների (ԱՀՑ, KPI) մոնիթորինգի որևէ կոնկրետ միջոցառում կամ այդ ցուցանիշների մոնիթորինգի արդյունքների վրա հիմնված բարելավում: Նվազագույն մակարդակի ծառայությունների համար առաջարկվող ցանկացած բարելավում նվազագույն է և չի վկայում ծառայության կարիքների կամ հնարավոր զարգացման վերաբերյալ խորը պատկերացման մասին:	1-25	20%	5%
					Արդյունավետության հիմնական ցուցանիշների մոնիթորինգի առաջարկվող կառավարման մեխանիզմը որոշ չափով սահմանվում է ԱՀՑ մոնիթորինգի որոշ միջոցառումների ապահովման միջոցով, սակայն ԱՀՑ մոնիթորինգի արդյունքների հիման վրա բարելավումների մոտեցում չի ներկայացվում: Նվազագույն մակարդակի ծառայությունների համար առաջարկվող բարելավումները ցույց են տալիս ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտության մասին որոշակի պատկերացում, սակայն համապարփակ կամ նորարարական մոտեցում չեն պարունակում:	26-50		
					Առաջարկվում է կառավարման բավականին ուժեղ մեխանիզմ, ներառյալ ԱՀՑ մոնիթորինգի միջոցառումները, ԱՀՑ մոնիթորինգի արդյունքների վրա հիմնված բարելավումների բավականին հստակ դրույթներով, որոնք ցույց են տալիս ծառայությունների շարունակական օպտիմալացման անհրաժեշտության մասին պատկերացումը: Նվազագույն մակարդակի ծառայությունների համար առաջարկվող բարելավումները լավ հաշվի են առնված, պրակտիկ են և համապատասխանում են ոլորտի լավագույն փորձին:	51-75		
					Առաջարկվող կառավարման մեխանիզմը հիանալի մոտեցում է ցուցաբերում արդյունավետության հիմնական ցուցանիշների մոնիթորինգի նկատմամբ, ներառյալ ԱՀՑ-ի մոնիթորինգի մանրամասն և հիմնավորված միջոցառումները, որոնք հիմնված են փորձառության և ոլորտի լավագույն փորձի վրա: Առաջարկվում է բարելավումների նկատմամբ նախաձեռնողական մոտեցում, որը վկայում է որակի ապահովման և ծառայությունների որակի բարելավման համալիր ռազմավարության առկայության մասին:	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					Նվազագույն մակարդակի ծառայությունների համար առաջարկվող բարելավումները լավ մտածված են, նորարարական և ճշգրիտ չափորոշված, որը թույլ կտա բարձրացնել սպասարկման ստանդարտներն ու արդյունավետությունը: Բարելավումների հիմնավորման հիմքում ընկած է փորձառություն և ոլորտի առաջատար փորձը:			
		Նախագծման և իրականացման մոտեցման որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը. 1) Ծրագրի պլան 2) Ծրագրի նախատեսվող անձնակազմ 3) Կոնսորցիումի անդամների և մատակարարների կառուցվածքը և գործառույթները	Նկարագրություն **Մինչև 5 էջ**	2.6.1.	Առաջարկվող ծրագրի պլանը համապատասպանում է նվազագույն տեխնիկական պահանջներին, սակայն չունի մանրամասնություն և հիմնավորում: Ներկայացվում են ծրագրի թիմի կառուցվածքը և անդամները, սակայն նախատեսվող անդամների փորձառության վերաբերյալ քիչ մանրամասներ են ներկայացված: Կոնսորցիումի Անդամների և մատակարարների գործառույթներն ու պարտականությունները շատ հստակ են և հիմնավորված:	1-25	20%	5%
					Առաջարկը ներկայացնում է ծրագրի որոշակիորեն համապարփակ պլան, որն ընդհանուր առմամբ համապատասխանեցված է տեխնիկական պահանջներին: Բերվում են որոշ հիմնավորումներ: Ներկայացվում են ծրագրի նախատեսվող թիմի կառուցվածքն ու անդամները, նկարագրվում է նրանց փորձառությունը, սակայն, համապատասխան փորձը բավականին սահմանափակ է: Սահմանված են Կոնսորցիումի Անդամների և մատակարարների գործառույթները, ինչը ցույց է տալիս անհրաժեշտ գործառույթների և փորձառության մասին պատկերացումը, որոշակիորեն հիմնավորված է, բայց չկա հստակեցում: Առաջատար մեթոդների և միջազգային փորձի վրա հիմնված հիմնավորումները չափավոր աջակցություն են ապահովում ծրագրին, սակայն չունեն նորարարական բարելավման և ռիսկերի մեղմման հստակ ռազմավարություններ:	26-50		
					Առաջարկը պարունակում է ծրագրի համապարփակ և հատուկ պլան, որը համապատասխանում է ժամանակացույցի պահանջներին և առաջարկում օպտիմալացման որոշ տարբերակներ: Հիմնավորումները բավականին մանրամասն են և հիմնված են փորձառության և առաջատար փորձի վրա: Առաջարկում ներկայացվում է ծրագրի թիմի հստակ սահմանված կառուցվածքը, գործառույթներն ու պարտականությունները, համապատասխան ոլորտում նրանց բավականին մեծ փորձառությունն ու գիտելիքները: Հայտատուն ներկայացնում է նաև կոնսորցիումի կառուցվածքը, որը ցույց է տալիս անդամների և մատակարարների արդյունավետ օգտագործումը: Բերվում են հիմնավորումներ թիմի և կոնսորցիումի օպտիմալ կառուցվածքի վերաբերյալ: Նախագծման և իրականացման ընդհանուր մոտեցումը ցույց է տալիս լավագույն փորձի մասին պատկերացման մասին և արժանահավատ հիմնավորումներով հաշվի է առնում բոլոր անհրաժեշտ ասպեկտները: Ռիսկերի կառավարման, ապագայում հնարավոր փոփոխությունների և նորարարական բարելավումների հետ կապված մոտեցումը նախաձեռնողական է, ոլորտին վերաբերող և ուղղված է շարունակական կատարելագործմանը:	51-75		
					Առաջարկը ներկայացնում է ծրագրի մանրակրկիտ մշակված և հատուկ պլան, որը համապատասխանում է ժամանակացույցի պահանջներին և պարունակում է առաջարկություններ՝ ծրագրի տարբեր փուլերի տևողության նվազագույն պահանջները օպտիմալացնելու համար: Հիմնավորումները համապարփակ և տեղեկատվական բնույթ են կրում՝ ցուցադրելով ոլորտի	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					առաջատար մեթոդների, նորարարական միտումների և հաջողված ծրագրերի փորձի մասին տպավորիչ գիտելիքներ: Ներկայացվում է ծրագրի թիմի մանրամասն կառուցվածքը, ներառյալ հատուկ փորձագետները, նրանց գործառույթներն ու համապատասխան փորձառության ոլորտը: Ներկայացվում են թիմի օպտիմալ կառուցվածքի և հաջողության վերաբերյալ մանրամասն հիմնավորումներ, որոնք հիմնված են համապատասխան երկարաժամկետ փորձառության, տվյալ ոլորտում համապատասխան գիտելիքների և այլ նախագծերում ունեցած հաջողությունների վրա: Ներկայացված են Կոնսորցիումի մանրամասն կառուցվածքը և Կոնսորցիումի յուրաքանչյուր Անդամի առանձնահատկություններն ու գործառույթները: Հատուկ նկարագրված են Կոնսորցիումի յուրաքանչյուր Անդամի համապատասխանությունն ու գործառույթը՝ ցույց տալով ոլորտում մեծ փորձառությունը, ինչն ապահովում է կոնսորցիումի առավելագույն օպտիմալ կառուցվածք: Իրականացման ընդհանուր մոտեցումը, ներառյալ ինչպես ծրագրի պլանը, այնպես էլ Կոնսորցիումի և թիմի կառուցվածքը, լավ կառուցված և հիմնավորված են հեղինակավոր աղբյուրների, հաջող օրինակների և ոլորտի միտումների հիման վրա՝ հաշվի առնելով հնարավոր ռիսկերը, ապագա միտումները և փոփոխությունները և ռազմավարական բարելավումները: Սա խոսում է ոլորտում նախագծերի կառավարման, տեխնիկական փորձաքննության և պրոֆեսիոնալիզմի անսովոր բարձր մակարդակի մասին:			
		Գործունեության մոտեցման որակը, ամբողջականությունը և իրագործելիությունը. 1) Հաճախորդների սպասարկման որակի վերահսկման միջոցառումներ 2) Գործընթացների, կազմակերպման և անվտանգության միջոցառումների որակի վերահսկում ամբողջ մատակարարման շղթայում (ներառյալ՝ արտադրություն, նյութատեխնիկական միջոցների կառավարում, անհատականացում, լոգիստիկա):	Նկարագրություն **Մինչև 3 էջ**	2.6.2.	Գործողությունների մոտեցումը նկարագրված է շատ ընդհանուր և ընդամենը / հիմնականում կրկնում է տեխնիկական պահանջները: Հաճախորդների սպասարկման որակի վերահսկման միջոցառումները, ինչպես նաև գործընթացների որակի վերահսկումը, կազմակերպումը և անվտանգության միջոցառումները ամբողջ մատակարարման շղթայի համար բավականին պարզ և ընդհանուր են, սպասարկման որակի վերահսկման և բարելավման հատուկ միջոցներ չեն ներկայացվում:	1-25	20%	5%
					Գործողությունների հետ կապված մոտեցումը ներկայացված է և որոշակիորեն հիմնավորված: Այն առաջարկում է տեխնիկական պահանջների համեմատ կատարելագործված միջոցառումներ: Ներկայացված են հաճախորդների սպասարկման որակը գնահատելու և բարելավելու որոշ միջոցառումներ: Առաջարկը ներառում է նաև գործընթացների որակի վերահսկողության գնահատման և բարելավման միջոցներ, ինչպես նաև մատակարարման շղթայի տարբեր տարրերի անվտանգության բարելավման միջոցառումներ: Միջոցառումները որոշակիորեն հիմնավորված են, սակայն չկա դրանց կոնկրետ կամ համապարփակ պլանավորումը: Ներկայացված է ապագա ընկերության կազմակերպական կառուցվածքը, սակայն, այն շատ հստակ և/կամ օպտիմալ չէ: Աշխատակիցների հավաքագրման և վերապատրաստման գործընթացները բավականին անորոշ են: Որոշ հիմնավորումներ բերվում են, բայց դրանք այնքան էլ կոնկրետ և համոզիչ չեն և չեն օգտագործում առաջատար մեթոդները արդյունավետությունն ապահովելու համար:	26-50		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
					Գործողությունների մոտեցումը համապարփակ է, լավ ծրագրված դրույթներով և միջոցառումներով, որոնք գերազանցում են նվազագույն տեխնիկական պահանջները: Այս մոտեցումը ցույց է տալիս հաճախորդների սպասարկման և գործընթացների որակի վերահսկման և բարձրացման, ինչպես նաև մատակարարման շղթային տարբեր տարրերի անվտանգության վերահսկման և բարելավման աննկուն հանձնառություն՝ ցուցաբերելով բոլոր գործառնական ոլորտները վերահսկելու հստակ և կիրառելի մոտեցում: Ներառված են բավականին կոնկրետ միջոցառումներ, որոնք հիմնավորված են: Հայտատուն ներկայացնում է նաև կազմակերպության հստակ կառուցվածքը և բավականին մանրամասն նկարագրում աշխատակիցների թվաքանակը, գործառույթներն ու պարտականությունները, պահանջվող որակավորումն ու աշխատողների հավաքագրման և վերապատրաստման գործընթացի մոտեցումը՝ հետևելով աշխատանքների կազմակերպման լավագույն փորձին: Այդուհանդերձ առաջարկի որոշ ոլորտներում բացակայում են գործողությունների արդյունավետության և անվտանգության բացառիկ տարրերը:	51-75		
					Գործողությունների հետ կապված առաջարկվող մոտեցումը առանձնանում է հաճախորդների սպասարկման որակի վերահսկման միջոցառումների, գործընթացների որակի վերահսկման, կազմակերպման և մատակարարման ողջ շղթայի անվտանգության միջոցառումների բացառիկ լավ մշակված պլանի մանրամասներով: Առաջարկը ներկայացնում է ծավալուն և մանրամասն միջոցները, որոնք կօգտագործվեն հաճախորդների սպասարկման որակի գնահատման և բարելավման համար: Հայտատուն ներկայացնում է նաև գործընթացների որակի վերահսկողության, ինչպես նաև մատակարարման շղթային տարբեր տարրերի անվտանգության գնահատման և բարելավման համապարփակ միջոցներ, որոնք լավ հիմնավորված են և հիմնված են գործնական կիրառության, միջազգայնորեն ճանաչված լավագույն մեթոդների և նորարարական միջոցառումների վրա: Առաջարկում ուրվագծվում է նաև կազմակերպության հստակ, համապարփակ և մանրակրկիտ նկարագրված կառուցվածքը. աշխատակիցների թվաքանակը, գործառույթներն ու պարտականությունները, անհրաժեշտ որակավորումը և աշխատողների հավաքագրման և վերապատրաստման գործընթացի հետ կապված մոտեցումը: Կազմակերպության օպտիմալ կառուցվածքը և նկարագրված մոտեցումը լավ հիմնավորված են՝ հաշվի առնելով գործնական կիրառությունը և միջազգայնորեն ճանաչված լավագույն մեթոդները: Ընդհանուր մոտեցումը ցույց է տալիս շարունակական կատարելագործման, ապագայի համար պատրաստվածության և օգտագործողի համար հարմարավետության բարձրացման կայուն հակվածություն՝ արտացոլելով գործողությունների կառավարման իրագործելիության և հմտության բարձր մակարդակը:	76-100		
		Պայմանագրի ավարտին հանձնման (փոխանցման) մոտեցման որակը,	Նկարագրություն **Մինչև 1 էջ**	2.6.3., 2.6.4.	Պայմանագրի ավարտին հանձնման առաջարկվող մոտեցումը նվազագույնս համապատասխանում է ակտիվների փոխանցման, երաշխիքային սպասարկման, վերապատրաստման, շահագործման և պահպանման տեխնիկական պահանջներին: Անցումային պլանը	1-25	20%	5%

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
		ամբողջականությունը և իրագործելիությունը			(ներառյալ անձնակազմի ուսուցումը, որակի վերահսկման միջոցառումները, կենսացիկլի կառավարումը և ծառայությունների շարունակական մատուցումը) միայն մակերեսորեն է արծարծվում՝ ցույց տալով թույլ ռազմավարություն և հնարավոր հետընթացներ ծրագրի կարիքների և ժամկետների բավարարման հարցում:			
					Պայմանագրի ավարտին հանձնման մոտեցումը ցույց է տալիս անհրաժեշտ ասպեկտների որոշակի պատկերացում, ինչպիսիք են ակտիվների ժամանակին փոխանցումը, անցումային շրջանում փաստաթղթերի տրամադրման շարունակումը, անձնակազմի վերապատրաստումը և երաշխիքային սպասարկումը: Սակայն, այն չունի արդյունավետ անցման մանրամասն ռազմավարություն, ներառյալ հանձնման մանրամասն ընթացակարգը, փոխանցման տարբեր ասպեկտների հստակ ժամկետները, տեխնիկական սպասարկման ծառայությունների մանրամասն նկարագրությունը և երաշխիքային սպասարկման ընթացքում սխալների և/կամ խնդիրների լուծման լավ կառուցված պլանը: Հանձնումից հետո ընթացիկ գործողությունների մոտեցումը մնում է միջին՝ առավել համապարփակ ռազմավարությունների մշակելու հնարավորությամբ:	26-50		
					Առաջարկը նախանշում է լավ կառուցված մոտեցում պայմանագրի հանձնման գործընթացին, որը խստորեն հետևում է պահանջներին, ներառյալ ակտիվների փոխանցումը, անցումային շրջանում փաստաթղթերի տրամադրման շարունակումը, երաշխիքային ծառայությունների մատուցումը և անձնակազմի վերապատրաստման լավ մշակված ծրագիրը: Առաջարկվող մեթոդները երաշխավորում են հստակ հաղորդակցություն, արդյունավետ ուսուցում և սպասարկում հանձնումից հետո: Առաջարկը նշում է նաև երաշխիքային ժամանակահատվածում սխալների հայտնաբերման և շտկման, ինչպես նաև հաճախորդների սպասարկման համապարփակ ռազմավարություններ: Այդուհանդերձ, որոշ ասպեկտներ, այդ թվում՝ նախաձեռնողականությունը և բարելավումները բացահայտելու համապարփակ մոտեցումը, հաճախորդների բողոքների հասցեագրումը և ակտիվների երկարաժամկետ կառավարումը կարող են հետագայում օպտիմալացվել:	51-75		
					Հանձնման մոտեցումն օրինակելի է, այն ցույց է տալիս պահանջների չափանիշներին համապատասխանություն և ներկայացնում է լավ կառուցված պլան, որն ապահովում է սահուն անցում ծառայությունների նվազագույն խափանումներով: Հստակ ուշադրություն է դարձվում հանձնման յուրաքանչյուր ասպեկտի վրա՝ սկսած ակտիվների և ծրագրակազմի լիցենզիաների փոխանցումից մինչև նոր աշխատակիցների բարձրոակ վերապատրաստում և յուրաքանչյուր համապատասխան գործընթացի փաստաթղթավորում: Հանձնումից հետո ընթացիկ սահուն գործողությունների ապահովման, որակի խիստ հսկողության, սխալների արդյունավետ կառավարման և սպասարկման ակտիվ բարելավման մոտեցումը ցույց է տալիս փորձառությունը ծրագրի կառավարման, տեխնիկական խորաթափանցության և հաճախորդների հետ փոխգործակցության առումով: Առաջարկը ցույց է տալիս աշխատանքների հանձնման ռազմավարության բարձր չափանիշ, որն, ամենայն հավանականությամբ, կապահովի սահուն անցում:	76-100		

Գնահատման չափանիշներ	Որակի չափանիշի գնահատական	Ենթաչափանիշներ / գնահատման բաղադրիչ	Գնահատման հիմք	Հղումն տեխնիկական պահանջին	Գնահատման մոտեցում	Գնահատման սանդղակ	Ենթաչափանիշի առավելագույն միավորը	Ընդհանուր գնահատականում ենթաչափանիշների միավորը
		Տեխնիկական բնութագրերի պահանջներին համապատասխանությունը հետևյալի մասով՝ 1) Սպասարկման մակարդակի վերաբերյալ համաձայնագրեր 2) Նախագծման և իրականացման պահանջներ 3) Ամբողջական սպասարկման գործողությունների պահանջներ 4) Հանձնման պահանջներ	Համապատասխանության աղյուսակ	2.5., 2.6.	Հայտատուն ցուցաբերում է իր հանձնառությունը և ներկայացնում հիմնավորում համապատասխան պարտադիր տեխնիկական պահանջներից որոշների կամ բոլորի կատարումն ապահովելու համար: Յուրաքանչյուր պահանջի համար գնահատականը տրվում է ներկայացված հիմնավորումների հիման վրա. - 0՝ որևէ հիմնավորում չի տրվում, - 1՝ տրվում է ձևական հիմնավորում, - 2՝ տրվում է մանրամասն և համապարփակ հիմնավորում: Վերջնական միավորը հաշվվում է համամասնորեն՝ կախված համապատասխան պահանջների քանակից:	1-100	20%	5%
	100%							**100.0%**

1.3. Ֆինանսական առաջարկների գնահատում

Հայտի գնային բաղադրիչի (C) միավորները հաշվարկվում են սույն Հավելված 5-ի (*Հայտերի գնահատում*) 1-ին բաժնի ամփոփիչ աղյուսակում ներկայացված 2.1 և 2.2 գնային չափանիշներով Որակավորված հայտատուի միավորները գումարելու միջոցով՝ բազմապատկած դրանց համապատասխան տոկոսով, արդյունքում՝

$C = \frac{C_{1min}}{C_1} \times X_1 + \frac{C_{2min}}{C_2} \times X_2$, որտեղ՝

C – ն՝ Որակավորված հայտատուի միավորն է ըստ Հայտի գնային բաղադրիչի:

$C_{1_{min}}$ – ը՝ Որակավորված հայտատուի կողմից կենսաչափական անձնագրերի և կենսաչափական նույնականացման քարտերի գնահատված ծավալի համար առաջարկվող ամենացածր արժեքը:

C_1– ը՝ Որակավորված հայտատուի կողմից առաջարկվող վճարները (և գանձումները) կենսաչափական անձնագրերի և կենսաչափական նույնականացման քարտերի գնահատված ծավալի համար:

X_1 – ը՝ C_1 գնային բաղադրիչի համեմատական տոկոսը:

$C_{2_{min}}$ – ը՝ Որակավորված հայտատուի կողմից մեկ կենսաչափական անձնագրի և մեկ կենսաչափական նույնականացման քարտի համար առաջարկվող վճարների (և գանձումների) նվազագույն գումարը, որը բարձր է Իրավասու մարմնի գնահատված ծավալից:

C_2 – ը՝ Որակավորված հայտատուի կողմից մեկ կենսաչափական անձնագրի և մեկ կենսաչափական նույնականացման քարտի համար առաջարկվող վճարների (և գանձումների) գումարը, որը բարձր է Իրավասու մարմնի գնահատված ծավալից:

X_2 – ը՝ C_2 գնային բաղադրիչի համեմատական տոկոսը:

C_1 և C_2 ենթաբաղադրիչները հաշվարկվելու են հետևյալ կերպ.

ա) $C_1 = P_{BP_1} \times \mathrm{V}_{BP} + P_{ID_1} \times V_{ID}$, որտեղ՝

C_1 – ը կենսաչափական անձնագրերի և կենսաչափական նույնականացման քարտերի գնահատված ծավալի մրցույթի ընդհանուր առաջարկվող արժեքն է:

P_{BP_1} – ը՝ մեկ կենսչափական անձնագրի համար Որակավորված հայտատուի կողմից առաջարկվող վճարները (ներառյալ գանձումները) կենսաչափական անձնագրերի գնահատված ծավալի դեպքում:

V_{BP} – ը՝ կենսաչափական անձնագրերի գնահատված ծավալը:

P_{ID_1} – ը՝ մեկ կենսչափական նույնականացման քարտի համար Որակավորված հայտատուի կողմից առաջարկվող վճարները (ներառյալ գանձումները) կենսաչափական նույնականացման քարտերի գնահատված ծավալի դեպքում:

V_{ID} – ը՝ կենսաչափական նույնականացման քարտի գնահատված ծավալը:

բ) $C_2 = P_{BP_2} + P_{ID_2}$, որտեղ՝

C_2 – ը Որակավորված հայտատուի կողմից մեկ կենսաչափական անձնագրի և մեկ կենսաչափական նույնականացման քարտի համար առաջարկվող վճարների (և գանձումների) գումարն է, որը բարձր է գնահատված ծավալից:

P_{BP_2} – ը՝ մեկ կենսաչափական անձնագրի համար Որակավորված հայտատուի կողմից առաջարկվող վճարը (և գանձվող գումարները), եթե դրա ծավալը գերազանցում է գնահատված ծավալը: Առաջարկվող վճարը չպետք է լինի P_{BP_1} -ի 90%-ից բարձր և P_{BP_1}-ի 30%-ից ցածր:

P_{ID_2} – ը՝ մեկ կենսաչափական նույնականացման քարտի համար Որակավորված հայտատուի կողմից առաջարկվող վճարը (և գանձվող գումարները), եթե դրա ծավալը գերազանցում է գնահատված ծավալը: Առաջարկվող վճարը չպետք է լինի P_{ID_1}-ի 90%-ից բարձր և P_{ID_1}-ի 30%-ից ցածր:

2. Ընդհանուր միավորներ

Հայտի տնտեսական օգուտը (S) կհաշվարկվի Որակավորված հայտատուի առաջարկած գինը (C) գումարելով սույն Հավելված 5-ի (*Հայտերի գնահատում*) 1-ին բաժնի ամփոփիչ աղյուսակում ներկայացված տեխնիկական առաջարկի (T) որակի միավորներին.

$S = C + T$

Ընտրության ընթացակարգի Հաղթող կճանաչվի Հայտի համար ամենաբարձր տնտեսական օգուտի (S) ամենաբարձր միավորը հավաքած Որակավորված հայտատուն:

3. Պահանջներին չհամապատասխանող հայտեր

Հայտը համարվում է պահանջներին չհամապատասխանող, եթե դրա գնահատման ժամանակ պարզվում է հետևյալ պայմաններից որևէ մեկը.

ա) ցանկացած փաստաթուղթ, որը պետք է ներկայացվի որպես Տեխնիկական և/կամ Ֆինանսական առաջարկի մաս, չի համապատասխանում Հավելված 4-ում (*Հայտի բովանդակությունը*) նախատեսված այդպիսի փաստաթղթի էության և/կամ բովանդակության պահանջներին,

բ) Տեխնիկական առաջարկի ձևի որևէ մասի էությունը չի համապատասխանում Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետով սահմանված Տեխնիկական առաջարկի ձևի Հավելված 1-ում նախատեսված պարտադիր տեխնիկական պահանջներին,

գ) Տեխնիկական առաջարկի ձևի որևէ մաս չի պարունակում նկարագրությունը (տեքստային տեղեկատվություն), որը պետք է ներկայացվի Հավելված 4-ի (*Հայտի բովանդակությունը*) 1-ին բաժնի 2) կետով սահմանված Տեխնիկական առաջարկի ձևի բովանդակության պահանջների համաձայն,

դ) Ցանկացած Տեխնիկական առաջարկի չափանիշի (Հավելված 5-ի (*Հայտերի գնահատում*) 1-ին բաժնի ամփոփիչ աղյուսակում ներկայացված գնահատման չափանիշների թիվ 1.1.-1.4. չափանիշներ) գնահատման միավորը առավելագույն միավորի 70%-ից ցածր է:

ՀԱՎԵԼՎԱԾ 6. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՆԱԽԱԳԻԾ

Ավելացվել է որպես ՀՆՀ-ի Ընտրության ընթացակարգի փուլի համար հրապարակված Մրցութային փաստաթղթերի մաս և հասանելի է էլոնոմիկայի նախարարության կայքում:

ՀԱՎԵԼՎԱԾ 7. ՀՈՒՍԱԼԻ ԲԱՆԿԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐ

Սույն ՀՆՀ-ի համատեքստում Հուսալի բանկ է հանդիսանում.

ա) ցանկացած ռեզիդենտ բանկ, որը համապատասխանում է հետևյալ պահանջներից որևէ մեկին.

1) բանկը օտարերկրյա բանկային խմբի անդամ է, կամ

2) Հայտը ներկայացնելու պահին բանկն ունի Հայաստանի Հանրապետության (-) սուվերեն վարկանիշից ոչ ցածր վարկանիշ,

բ) ցանկացած ոչ ռեզիդենտ բանկ, որն ունի «A-»-ից (ըստ «Standard and Poor's»-ի կամ «Fitch»-ի վարկանիշների) կամ «A3»-ից (ըստ «Moody»-ի վարկանիշի) ոչ ցածր վարկանիշ:

գ) Հետևյալներ բանկերից որևէ մեկը չի որակվում որպես Հուսալի բանկ.

1) ցանկացած բանկ (կամ բանկի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ցանկացած անձ), որի վրա տարածվում են ՊՄԳ ընթացակարգի 47-րդ կետով նախատեսված սահմանափակումները,

2) ցանկացած բանկ (կամ բանկի նկատմամբ վերահսկողություն իրականացնող ցանկացած անձ), որի նկատմամբ Կիրառելի օրենքի կամ միջազգային օրենսդրության համաձայն կիրառվում են պատժամիջոցներ,

3) ցանկացած ռեզիդենտ բանկ, որը նախորդ 12 ամիսների ընթացքում խախտել է ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կապիտալի համարժեքության նորմատիվի պահանջները

ՀԱՎԵԼՎԱԾ 8. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Սույն ՀՆՀ-ում մեծատառերով արտահայտված տերմինները, արտահայտությունները և հապավումները պետք է ունենան սույն 1.1 կետում դրանց վերագրվող նշանակությունը:

Խորհրդատուներ	Ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք, ովքեր ունեն համապատասխան ոլորտի փորձագիտական գիտելիքներ և Ընտրության ընթացակարգի ընթացքում կարող են ներկայացնել եզրակացություններ, պարզաբանումներ, առաջարկություններ և տալ խորհուրդներ նման գիտելիքներ և փորձ պահանջող հարցերի վերաբերյալ (օրինակ՝ իրավական, տեխնիկական, առևտրային, ֆինանսական հարցեր):
Պայմանագիր	Կախված համատեքստից՝ ՀՆՀ-ի շրջանակներում հաստատված Ծրագրի Պայմանագրի նախագիծ կամ Պայմանագիր, որը կկնքվի Իրավասու մարմնի և Ծրագիրն իրականացնող ընկերության միջև:
Կիրառելի օրենք	Հայաստանի օրենսդրություն, ներառյալ ՀՀ սահմանադրությունը, օրենքները, հրամանագրերը, որոշումները կամ նորմատիվ ակտերը և Հայաստանում գործող առաջնային և երկրորդային օրենսդրության այլ ձևեր, ներառյալ միջազգային պայմանագրերը:
Հայտատու	Իրավաբանական անձինք կամ Կոնսորցիումներ, որոնք ՊՄԳ օրենքի 2-րդ հոդվածի 1- ին մասի սահմանված կարգով մասնակցում են Ընտրության ընթացակարգին
Հայաստան	Հայաստանի Հանրապետություն
Լիազորված պաշտոնյաներ	Գնահատող հանձնաժողովի նախագահև քարտուղար:
Լիազորված անձինք	Ֆիզիկական անձինք, ովքեր Ընտրության ընթացակարգի հետ կապված լիազորված են համապատասխան Լիազորող փաստաթղթերով ներկայացնելու Հայտատուին:
Լիազորող փաստաթղթեր	Փաստաթուղթ կամ փաստաթղթեր, որոնք հաստատում են Հայտատուին Ընտրության ընթացակարգում ներկայացնելու՝ Լիազորված անձի լիազորությունը: Լիազորող փաստաթղթերը կարող են ձևակերպվել լիազորագրի տեսքով, որի բովանդակությանը ներկայացվող պահանջները սահմանված են Որակավորման հարցման Հավելված 6-ի (*Որակավորման հայտի բովանդակությունը*) Ձև Բ-ում (*Լիազորագրի բովանդակության պահանջներ*), կամ այլ փաստաթղթեր, որոնք հստակ հաստատում են Հայտատուին ներկայացնելու՝ Լիազորված անձի լիազորությունը, և սահմանում առնվազն նույն լիազորությունների շրջանակը, որը նշված է Որակավորման հարցման Հավելված 6-ի (*Որակավորման հայտի բովանդակությունը*) Ձև Բ-ում:

Պայմանագրի շնորհման մասին որոշում	Գնահատող հանձնաժողովի որոշումը 7.5.2 կետով սահմանված կարգով Հայտերի գնահատման արդյունքների վերաբերյալ և Հաղթողին հայտարարելը:
Հայտ	Տեխնիկական և ֆինանսական առաջարկներից բաղկացած փաստաթղթերի փաթեթ, որը պետք է կազմվի և ներկայացվի Որակավորված հայտատուի կողմից՝ ՈՀՆՀ-ի համաձայն:
Հայտի ապահովում	ՀՆՀ փուլում Հայտի շրջանակներում ստանձնած պարտավորությունների կատարումն ապահովող և 4.6.1 կետի պահանջներին համապատասխանող փաստաթուղթ:
Հայտի ապահովման վավերականության ժամկետ	4.7.2 կետով նախատեսված Հայտի ապահովման վավերականության ժամկետ:
Հայտի գնահատման վերջնաժամկետ	Ունի 7.1.1 կետում տրված նշանակությունը:
Հայտերի ներկայացման վերջնաժամկետ	Ունի 5.1.1 կետում տրված նշանակությունը:
Հայտի վավերականության ժամկետ	Այն ժամանակահատվածը, որի ընթացքում Հայտը պետք է ուժի մեջ մնա, ինչպես սահմանված է 4.6 կետով:
Աշխատանքային օր	Այն օրը, երբ բանկերը բաց են Հայաստանում գործարքներ իրականացնելու համար, և որը շաբաթ կամ կիրակի չէ, պետական տոն է կամ Կիրառելի օրենքի համաձայն՝ ոչ աշխատանքային օր:
Իրավասու մարմին	Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարություն
Գաղտնիության պահպանման պարտավորություն	ՈՀՆՀ-ի Հավելված 7-ում (*Գաղտնիության պահպանման պարտավորության ձև*) նախատեսված ձևով ներկայացվող փաստաթուղթ, որը ՈՀՆՀ-ի պահանջների համաձայն կնքվել է Որակավորված հայտատուի հետ և ներկայացվել է Իրավասու մարմին, և որը սահմանում է Ընտրության ընթացակարգի շրջանակներում ներկայացվող տեղեկատվության գաղտնիության և չհրապարակման պայմանները:
Կոնսորցիում	Իրավաբանական անձինք (Առաջատար անդամ կամ Կոնսորցիումի այլ անդամներ), ռեզիդենտ և/կամ ոչ ռեզիդենտ, որոնք համատեղ գործունեության հիման վրա մասնակցում են Ընտրության ընթացակարգին որպես Հայտատու և, ի թիվս այլոց, պայմանավորվել են միասին իրականացնել Ծրագիրը և գործել Պայմանագրի պայմաններին համապատասխան, եթե Կոնսորցիումը դառնա հաղթող:

Կոնսորցիումի անդամ	Կոնսորցիումի մաս հանդիսացող իրավաբանական անձ, լինի դա Առաջատար անդամը, թե Կոնսորցիումի մյուս անդամները:
Վերահսկողություն (ղեկավարում)	Որոշիչ ազդեցություն տնտեսվարող սուբյեկտի կամ դրա մի մասի տնտեսական գործունեության վրա, որն իրականացվում է մեկ կամ մի քանի փոխկապակցված իրավաբանական և (կամ) ֆիզիկական անձանց կողմից ուղղակիորեն կամ այլ անձանց միջոցով, մասնավորապես՝ ամբողջ գույքի կամ դրա զգալի մասի տիրապետման կամ օգտագործման իրավունքով, տնտեսվարող սուբյեկտի կառավարման մարմինների կազմի որոշման, քվեարկության արդյունքների և որոշումների վրա որոշիչ ազդեցություն ապահովող իրավունքով, այնպիսի համաձայնագրերի և պայմանագրերի կնքմամբ, որոնք հնարավորություն են տալիս սահմանել ձեռնարկատիրական գործունեության պայմանները, տալ պարտավորեցնող ցուցումներ կամ իրականացնել տնտեսվարող սուբյեկտի կառավարման մարմնի գործառույթները, տնտեսվարող սուբյեկտի վերահսկիչ խորհրդի, տնօրենների խորհրդի կամ այլ վերահսկիչ խորհրդի կամ գործադիր մարմնի ղեկավարի կամ տեղակալի պաշտոնի զբաղեցումը այլ տնտեսվարող սուբյեկտում վերոնշյալ պաշտոններից մեկը կամ մի քանիսը զբաղեցնող անձի կողմից: Իրավաբանական և/կամ ֆիզիկական անձինք, որոնք համատեղ կամ համաձայնեցված իրականացնում են ձեռնարկատիրական գործունեություն, ներառյալ նրանք, որոնք համատեղ կամ համաձայնեցված կերպով ազդում են տնտեսվարող սուբյեկտի ձեռնարկատիրական գործունեության վրա, համարվում են փոխկապակցված: Փոխկապակցված անձինք են հանդիսանում, ի թիվս այլոց, ամուսինները, ծնողները և երեխաները, եղբայրները և/կամ քույրերը: «Վերահսկողություն (ղեկավարություն)» տերմինը պետք է համապատասխանաբար մեկնաբանվի:
Տեղեկատվական թերթիկ	Տվյալներ պարունակող թերթիկ, որը կցվում է որպես Հավելված 1 (*Տեղեկատվական թերթիկ*):
ՊՄԳ ծրագրի նախագիծ	Ունի ՊՄԲ ընթացակարգի 7-րդ կետի 1-ին ենթակետում տրված նշանակությունը:
Գնահատող հանձնաժողով	Ընտրության ընթացակարգի իրականացման, մասնավորապես (սույն ՀՆՀ-ի նպատակների համար)՝ Հայտերի բացման և գնահատման համար պատասխանատու հատուկ մարմին:
Պայմանագրի կնքման վերջնաժամկետ	8.4.3 կետով նախատեսված Պայմանագրի կնքման վերջնաժամկետ
Ֆինանսական առաջարկ	Ֆինանսական և գնային առաջարկ, որը պետք է Որակավորված հայտատուն ներկայացնի որպես Հայտի մաս՝ գնահատման ֆինանսական/գնային չափանիշներին

	և ՀՆՀ-ով սահմանված պահանջներին համապատասխան:
Ֆինանսական առաջարկի ծրար	4.2.1 (բ)կետով պահանջվող ներքին ծրար՝ Ֆինանսական առաջարկի բնօրինակով և պատճեններով
Կառավարություն	ՀՀ կառավարություն
Առաջատար անդամ	Կոնսորցիումի անդամ, որը նշանակված է ներկայացնելու և անվերապահորեն պարտավորեցնելու Կոնսորցիումի բոլոր անդամներին կատարել Ընտրության ընթացակարգի բոլոր խնդիրները, ներառյալ, բայց չսահմանափակվելով, Կոնսորցիումի անունից Հայտի ներկայացումը, և որը պետք է կատարի Որակավորման հարցման 2.1.3 կետում սահմանված պահանջները:
Էական Փոփոխություն	Ունի 7.3.2 կետում տրված նշանակությունը
Էական շեղում	Նշանակում է Հայտի հետ կապված ցանկացած էական շեղում, առարկություն, պայմանականություն կամ վերապահում. (ա) որն էապես ազդում է Պայմանագրի առարկայի, որակի կամ կատարման վրա, (բ) որը Մրցութային փաստաթղթերին չհամապատասխանող որևէ էական կերպով սահմանափակում է Իրավասու մարմնի կամ Հաղթողի կամ Ծրագիրն իրականացնող ընկերության պարտավորությունները, (գ) որի շտկումն անարդարացիորեն կազդի պահանջներին ըստ էության համապատասխանող հայեր ներկայացնող մյուս Որակավորված հայտատուների մրցակցային դիրքի վրա, (դ) որն այլ կերպ էական բացասական ազդեցություն է թողնում Ընտրության ընթացակարգում, և հետագայում՝ Պայմանագրի շրջանակներում Իրավասու մարմնի իրավունքների կամ Որակավորված հայտատուի պարտավորությունների վրա:
Էկոնոմիկայի նախարարություն	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն
Պայմանագրի շնորհման մասին ծանուցում	8.1 կետի համաձայն Գնահատող հանձնաժողովի կողմից Պայմանագրի շնորհման մասին որոշման ընդունումից հետո Հաղթողին տրամադրվող գրավոր ծանուցում
Պաշտոնական լեզուներ	Նշանակում է հայերեն, անգլերեն կամ ռուսերեն
Մայր ընկերություն	Ցանկացած իրավաբանակ անձ, որը վերահսկում (ղեկավարում) է Հայտատուին կամ Կոնսորցիումի անդամին:
Շահերի հնարավոր բախում	Անձի պաշտոնական կամ ներկայացուցչական լիազորությունների ոլորտում տվյալ անձի անձնական շահի

	ապացույց, որը կարող է ազդել այդ անձի որոշումների անկախության կամ անկողմնակալության վրա՝ իր լիազորությունների կատարման շրջանակներում:
Մասնավոր շահ	Անձի ցանկացած նյութական կամ ոչ նյութական շահ, ներառյալ՝ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց հետ անձնական, ընտանեկան, բարեկամական կամ այլ ոչ պաշտոնական հարաբերություններից, այդ թվում ՝ քաղաքացիական, քաղաքական, կրոնական կամ այլ կազմակերպություններին անդամակցության կամ ներգրավվածության հետ կապված հարաբերություններից բխող շահ:
Ծրագիր	Հայաստանի Հանրապետությունում անձը հաստատող փաստաթղթերի թողարկմանն ու բաշխմանը, ինչպես նաև անձը հաստատող փաստաթղթերի տրամադրման գործում ներգրավված հաստատությունների գործարկմանն ու սպասարկմանն ուղղված Պետություն-մասնավոր գործընկերության ծրագիր
Ծրագիրն իրականացնող ընկերություն (Ծրագրի ընկերություն)	Ընկերություն, որը ՀՆՀ-ի պահանջներին համապատասխան պետք է ստեղծվի Հաղթողի կողմից որպես ռեզիդենտ ընկերություն Հայաստանում՝ Պայմանագիրը կնքելու և Ծրագիրն իրականացնելու նպատակով
Որակավորման հայտ	ՀՆՀ-ի փուլում Ընտրության ընթացակարգին մասնակցելու իրավունք ստանալու նպատակով Թեկնածուի կողմից պատրաստված և ներկայացված փաստաթղթերի փաթեթ՝ Որակավորման հարցման մեջ նշված ձևաչափով և բովանդակությամբ:
Որակավորման չափանիշներ	ՈՀՆՀ-ի Հավելված 5-ում (*Որակավորման չափանիշներ*) սահմանված տեխնիկական և ֆինանսական չափանիշներ
Որակավորված հայտատու	ՈՀՆՀ-ի պայմաններին համապատասխան ՀՆՀ-ի փուլում Ընտրության ընթացակարգին մասնակցելու իրավունք ստացած և Իրավասու մարմնին Գաղտնիության պահպանման վերաբերյալ պարտավորությունը ներկայացրած Հայտատու
Շահերի իրական բախում	Անձի մասնավոր շահի և պաշտոնական կամ ներկայացուցչական մարմնի միջև բախում, որը կարող է ազդել այդ անձի չեզոքության կամ անաչառ որոշումների կայացման վրա կամ ազդել նրա գործողությունների կամ անգործության վրա նշված լիազորությունների իրականացման ընթացքում:
Փոխկապակցված ընկերություններ	Հետևյալ իրավաբանական անձանցից մեկը կամ մի քանիսը. ա) մայր ընկերություն,

	բ) Հայտատուի կամ Կոնսորցիումի անդամի կողմից վերահսկվող իրավաբանական անձ, և/կամ գ) Հայտատուին կամ Կոնսորցիումի անդամին վերահսկող միևնույն Մայր ընկերության կողմից վերահսկվող իրավաբանական անձ: Սույն ՀՆՀ-ի համատեքստում, Փոխկապակցված ընկերությունների միջև Վերահսկողության հարաբերությունները ցանկացած դեպքում համարվում են գոյություն ունեցող, եթե. ա) Մայր ընկերությունն ուղղակիորերն կամ անուղղակիորեն տիրապետում է Հայտատուի կամ Կոնսորցիումի որևէ անդամի ձայնի իրավունքի կամ բաժնետիրական կապիտալի ավելի քան 50%-ին, բ) Հայտատուն կամ Կոնսորցիումի որևէ անդամ ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է համապատասխան իրավաբանական անձի ձայնի իրավունքի կամ բաժնետիրական կապիտալի ավելի քան 50%-ին, և/կամ գ) Մայր ընկերությունն ուղղակիորեն կամ անուղղակիորեն տիրապետում է որևէ իրավաբանական անձի և Հայտատուի կամ Կոնսորցիումի անդամի ձայնի իրավունքի կամ բաժնետիրական կապիտալի ավելի քան 50%-ին:
Հուսալի բանկ	Հավելված 7-ի (*Հուսալի բանկերին ներկայացվող պահանջներ*) պահանջներին համապատասխանող բանկ
Որակավորման հայտերի ներկայացման հրավեր (ՈՀՆՀ, RFQ)	Փաստաթուղթ, որը սահմանում է Որակավորման չափանիշները և Հայտատուների որակավորման պայմանները Ընտրության ընթացակարգի շրջանակներում, ինչպես նաև այլ պայմաններ, որոնք Կիրառելի օրենքի համաձայն պետք է և/կամ կարող են արտացոլվել ՈՀՆՀ-ում:
Հայտերի ներկայացման հրավեր (ՀՆՀ, RFP)	Փաստաթուղթ, որը Պայմանագիրը կնքելու նպատակով սահմանում է պայմաններ Հայտատուների համար, ինչպես նաև այլ պայմաններ, որոնք Կիրառելի օրենքի համաձայն պետք է և/կամ կարող են արտացոլվել ՀՆՀ-ում և նախատեսված են Որակավորված հայտատուների համար:
Երկրորդ Տեղը Զբաղեցրած Հայտատու	Ունի 8.6.1 կետում տրված նշանակությունը
Ընտրության ընթացակարգ	Գործողությունների ամբողջություն, որոնք ուղղված են Ծրագրի իրականացման համար մասնավոր գործընկերոջ ընտրության նպատակով ընթացակարգերի

	իրականացմանը, Կիրառելի օրենքով նախատեսված իրավունքների և պարտականությունների իրականացմանը:
Տեխնիկական առաջարկ	Առաջարկ, որը պետք է Որակավորված հայտատուն ներկայացնի որպես Հայտի մաս՝ գնահատման տեխնիկական չափանիշներին և ՀՆՀ-ով սահմանված պահանջներին համապատասխան:
Տեխնիկական առաջարկի ծրար	4.2.1(ա) կետով պահանջվող ներքին ծրար՝ տեխնիկական առաջարկի բնօրինակով և պատճեններով
Մրցութային փաստաթղթեր	Ենթադրում է ՈՀՆՀ-ն, ՀՆՀ-ն, Հավելված 7-ում (*Պայմանագրի նախագիծ*) ներկայացված Պայմանագրի նախագիծը և Իրավասու մարմնի և/կամ Գնահատող հանձնաժողովի կողմից հաստատված և հրապարակված Ընտրության ընթացակարգն իրականացնելու համար անհրաժեշտ այլ փաստաթղթեր:
Ժամանակացույց	Հավելված 2-ում (*Ժամանակացույց*) ներկայացված ժամանակացույց՝ Ընտրության ընթացակարգի առանցքային փուլերով և սույն ՀՆՀ-ի նպատակների համար դրանց մոտավոր ժամկետներով
Հաղթող	Հայտի ամենաբարձր միավորը ստացած Որակավորված հայտատուն, ով սույն ՀՆՀ-ի համաձայն հրավիրվել է Պայմանագրի վերջնական ձևակերպման և ստորագրման համար: «Հաղթող» եզրույթը կարող է վերաբերել նաև Երկրորդ Տեղը Զբաղեցրած Հայտատուին՝ 8.6 կետում նախատեսված պայմաններով:

1.2. Սույն ՀՆՀ-ում, եթե համատեքստն այլ բան չի պահանջում.

ա) «Կետի» կամ «Հավելվածի» ցանկացած վկայակոչում վերաբերում է սույն ՀՆՀ-ի համապատասխան կետին կամ հավելվածին,

բ) «ՀՀ դրամի» ցանկացած վկայակոչում վերաբերում է Հայաստանի Հանրապետության օրինական արժույթին,

գ) այն տերմինները և արտահայտությունները, որոնք սահմանված չեն սույն ՀՆՀ-ի այլ բաժիններում, ունեն Կիրառելի օրենքի համաձայն դրանց վերագրվող նշանակությունը»:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

08.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ